ՀԱՅ ՎԵՊԵՐԳՈՒԹՅՈՒՆ

ԸԻՊ ԱՂՏԱՄԱՐ ԳՓԻՐ

891.99
Պ - 17



Պատասխան դեմք


Տիկներ

ԳՄԴ 84Հ1
Պ 176

Աշխատասիրությամբ ՇՈՒՇԱՆԻԿ ՆԱԶԱՐՅԱՆԻ

Պաղտասար Դպիր
Պ 176 Տաղիկներ (Աշխատասիրությամբ Շ. Նազարյանի.— Եր.: Սովետ. գրող, 1985.— 152 էջ.— («Հայ քնարերգություն» մատենաշար):

Ժողովածուն ընդգրկում է 18-րդ դարի հայ նշանավոր տաղերգու Պաղտասար Դպիրի սիրո և կարոտի, խոհա-խրատական ու այլ տաղերը, ինչպես նաև չափածո նամակաձևերի նմուշներ: Նախորդ հրատարակության համեմատությամբ ժողովածուն համալրվել է ավելի քան երեսուն նոր միավորներով:

Դ 4702080100 (78) 85 «8»
705(01) 85

ԳՄԴ 84Հ1

© «Սովետական գրող», կազմելու, առաջաբանի, ծանոթագրությունների, ձևավորման համար:

ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊԻՐ

(1683—1768)

18-րդ դարում վարգացող հայ ազգային-ազատագրական պայքարին զուգընթաց վերարթնանում, աշխուժանում է համահայկական գրական-կրթական շարժումը: Նախորդ դարերի համեմատությամբ այդ շարժումը առավել նպատակադիր էր, ծրագրային, առավել ազգային ու գաղափարական: Դարի վերանորոգվող գրական-մշակութային կյանքը առաջ էին մղում նշանավոր գործիչներ Մխիթար Սեբաստացին ու Մխիթարյանները՝ Վենետիկում, Հովհաննես Բաղիշեցին, Հակոբ Նալյանն ու Պաղտասար Դպիրը՝ Պոլսում, Սիմեոն Երևանցին, Պետրոս Նախիջևանցին՝ Էջմիածնում, Շահամիրյանները՝ Մադրասում և այլք՝ այլուր:

Պաղտասար Դպիրի լուսավորական գործունեությունը ծավալվում է 18-րդ դարի 20—60-ական թվականներին: Իբրև մատենագետ, պատմագետ, փիլիսոփա, լեզվաշինարար, հրատարակիչ, մանկավարժ և բանաստեղծ Պաղտասար Դպիրի համբավը տարածվում է Արևմտահայաստանից դուրս, հայության լայն շրջաններում: Ժամանակակիցները և նրանց հաջորդները Պաղտասար Դպիրին կոչում են՝ «Նոր Հոմերոս», «փիլիսոփա, իմաստուն», «մեծն քերական», «վարժապետաց վարժապետ» «երևելի պատմագետ»,

հայագիտական հրատարակության «մենտոր» (դաստիարակ), «հմուտ տաղասաց»:

Ցավոք, մեզ չի հաջել Պաղտասար Դպիրի կյանքի ու գործունեության հետ կապված որևէ ամբողջական գրություն: Նրա մասին հատուկենտ տեղեկություններ ենք քաղում ձեռագիր և տպագիր մատյանների հիշատակարաններից, տապանագրերից և մի քանի բանաստեղծություններից:

Պաղտասար Դպիրը ծնվել է 1683 թվականին Կեսարիա քաղաքում, արհեստավորի ընտանիքում: Հոր անունն է Գրիգոր, մորը՝ Թուրվանդա: Արհեստի բերումով հյուսն Գրիգորը ընտանիքով Կեսարիայից գաղթում է Պոլիս: Այս պատճառով Պաղտասար Դպիրը իրեն հաճախ կոչում է նաև Պաղտասար Կեսարացի, Կոստանդնուպոլսեցի, Գրիգորյան: Մեզ հասել են որոշ տեղեկություններ նաև Պաղտասար Դպիրի ժառանգների մասին: Նրա կավակներն են եղել Արսեն Դպիրը և Անտոն երեցը, իսկ թոռը՝ Մեսրոպ վարժապետը: Պատանեկան հասակում Պաղտասար Դպիրը Պոլսում սովորում է կոշկակարության արհեստը և ապա հաճախում տեղի նշանավոր ուսուցիչ և դաստիարակ Աստվածատուր Զուղայեցու դպրոցը: Զանազան առիթներով նա խոր երախտագիտությամբ է հիշում «արդյունավոր», «հեզահոգի», «անձանձիր» ուսուցչին: Օժտված լինելով սքանչելի ձայնով՝ Պաղտասար Դպիրը երգում է եկեղեցում և ստանում դպիր կոչումը: Դեռևս երիտասարդական տարիներին նա լայն ճանաչում է ստանում իբրև հմուտ հրատարակիչ և երգահան-բանաստեղծ: Պաղտասար Դպիրը անձամբ ինքն է վարում հայագիտական կարևոր երկերի հրատարակության գործը, ընտրում, բաղդատում բնագրերը,

կազմում գիտական ցանկեր, գրում առաջաբաններ, սրբագրում շարվածքները: 1719—1731 թվականների ընթացքում նրա ջանքերով տպագրվում են տասնյակ արժեքավոր սկզբնաղբյուրներ՝ «Գիրք պատմութեան երկրին Տարօնոյ, որ կոչի Ջենօբ» (1719), Առաքել Սյունեցի՝ «Ադամգիրք» (1721), «Սուրբ գիրք, ոչ կոչի Մաշտոց» (1726), Գրիգոր Նարեկացի՝ «Մատեան ողբերգութեան» (1726), Սիմեոն Ջուղայեցի՝ «Գիրք տրամաբանութեան» (1728), Գրիգոր Տաթևացի՝ «Գիրք հարցմանց» (1729), Դավիթ Անհաղթի՝ «Գիրք սահմանաց» (1731) և այլն... «Կոունկ» երգը (1768), Հայրեննների մի շարք (1752): Հայտնի է նաև, որ Պաղտասար Դպիրը իր «Ի ևընջմանէդ արքայական» հայրենասիրական երգը գրել է 1708 թվականին, երբ ընդամենը 25 տարեկան էր: 1740-ական թվականներին Պոլսի նշանավոր պատրիարք, գիտնական, փիլիսոփա և բանաստեղծ Հակոբ Նալյանը պատրիարքարանին կից հիմնադրում է Գում-Գափուի մայր դպրատունը և նրա կառավարչությունը հանձնում է Պաղտասար Դպիրին: Մեզ հասել են այդ դպրոցի նախկին սաներ և ուսուցիչներ Հարություն Կարնեցու և Պողոս Տյուրիկենցի բանաստեղծությունները: Նրանք փառաբանում են իրենց դպրոցի հիմնադիրներ Հակոբ Նալյանին և Պաղտասար Դպիրին և կարևոր տեղեկություններ հաղորդում մայր դպրատան ուսումնակրթական կյանքի վերաբերյալ,

Նրանց ջանքերով դպրոցում կիրառվում են հայոց հին համալսարանների ուսման լավագույն եղանակները, դասավանդում են եոյակ և քառյակ արվեստները: Կենսագրական որոշ փաստերից կարելի է կռահել, որ Պաղտասար

Դպիրը Գում-Գափուի մայր դպրատունը դասավանդում է պատմություն, փիլիսոփայություն, երաժշտություն:

Շատ բեղմնավոր է եղել Պաղտասարի գրիչը: Նրա ինքնուրույն, մեկնողական-հավաքական, գրական-գիտական ստեղծագործական աշխատությունների թիվը անցնում է երկու տասնյակից: Դրանց մեջ առավել արժեքավորներ են՝ «Գրքոյկ, որ կոչի ցանկգիրք Նոր Կտակարանին» մանրակրկիտ բանասիրական մի գործ, համաբարբառի առաջին տպագիր օրինակը (1753 թվ.), «Կրթութիւն քրիստոնեական պաշտօնի» և «Պատմութիւն Գրիգորիս սուրբ Լուսաւորչին», (հայատառ թուրքերեն բարոյախրատական, պատմական, առասպելական երկեր), որոնք ծառայում են բոնի կերպով թուրքացած հայության մեջ ազգային ոգին վերարթնացնելու, մեսրոպյան տառերը սովորեցնելու առաջնահերթ նպատակին, «Համառօտութիւն պատմութեան Մովսէս Խորենացւոյ» (դժբախտաբար մեզ չի հասել): Պաղտասար Դպիրը լուրջ քայլեր է անում հայոց պատմագիտության վարգացման ասպարեզում: Նա ծրագրում է գրել հայ ժողովրդի ընդարձակ պատմություն. գուցե դա հենց «Պատմութիւն տոհմային» խորագրով աշխատությունն է, որ, ցավոք, դարձյալ մեզ չի հասել և միայն որոշ տեղեկություններ են պահպանվել աղբյուրներում: Իր հրատարակած գրքերից մեկի հիշատակարանում Պաղտասար Դպիրը գրում է. «Ես մեր ազգի պատմութիւնը ընդարձակ կերպով և պարզ հայերէնով մի առանձին գրքով շարադրելն և տպագրելը իմ նպատակն եմ համարում»[1]:

Բացառիկ հետաքրքրություն ունի նաև Պաղտասար

[1] Պաղտասար Դպիր. Պու գիրք օլտուր քի..., Պոլիս, 1777, էջ 157:

Դպիրի «Ժամանակագրություն» աշխատությունը, որ հրատարակվեց Երևանում (1951): Այն իր մեջ պարունակում է պատմական կարևորություն ունեցող բազմաթիվ տեղեկություններ: Պաղտասար Դպիր փիլիսոփայից մեզ հասել է միայն «Համառոտ մեկնութիւն տրամաբանութեան» աշխատությունը: Մատենագիտական տեղեկությունների համաձայն այն տպագրվել է Կալկաթայում, և տպագիր օրինակներ չեն պահպանվել: Մաշտոցի անվան Մատենադարանում կան այդ երկի 11 ձեռագիր ընդօրինակություններ:

Իր տեսակի մեջ հապճագյուտ է Պաղտասար Դպիրի «Օրինակք բարևագրաց»-ը (1752 և 1787 թթ.): Տարբեր հարցերի շուրջ, տարբեր մարդկանց ուղղված պաշտոնական և անձնական բնույթի նամակների, դիմումների ժողովածու է այն՝ գործնական նկատառումով ստեղծված: Պաղտասար Դպիրը, հաշվի առնելով աստանդական հայի համար նամակ գրելու կենսական անհրաժեշտությունը, իր նամակաձևերը գրում է ժողովրդի խոսակցական լեզվով: Նամակների օրինակների այս ժողովածուն միաժամանակ արտացոլում է ժամանակակից հայ կյանքի ու կենցաղի բազմաթիվ կողմեր: Ահա մի փոքրիկ հատված մոր՝ որդուն ուղղված նամակից, որ պատկերացում կարող է տալ թե՛ նոր վարգացող ժողովրդական գրական հայերենի և թե՛ հայության սոցիալ-տնտեսական կյանքի տխուր վիճակի մասին: «Շատ սիրով ու կարօտով հարցանեմ զքեզ, իմ աչերու լոյս Ալեքսան որդի, թէ ի՞նչ հալի վրա ես ի յօտար երկրիդ ու ղարիպ տնակիդ: Եղուկ իմ այս ծերութեան պահուս, որ քեզնէ կարօտ մնացի: Գրկովս շուրջ եմ ածել ու կաթնովս եմ սնուցէր ու հիմիկ տեսուդ կարօտ եմ նստէր: Ո՛չ օրս է ինձ օր, ո՛չ գիշերս է գիշեր: Չեմ գիտէր՝ կուշտ ես թէ քաղ-

ցած... դու ղարիպ ես քո աշխարհէդ ու տնէդ, ես ղարիպ եմ ի քո երեսէդ ու քաղցր լեզուէդ...»[1]:

Պաղտասար Դպիր մանկավարժին ու քերականին լայն ճանաչում են բերում նաև նրա գրաբարի և աշխարհաբարի քերականության դասագրքերը («Պարկաբանութիւն քերականութեան կարճառօտ և դիւրիմաց, յաղագս նոր եկեղոց ի ուսման գրոց գիտութեանց», «Հատոր երկրորդ քերականութեան, կիրառութիւն մասանցն բանին, որ է շարամանումն ընդ իրեարս ըստ քերթողացն» (1736) և «Գիրք քերականութեան» (1760): Դպրոցական այդ դասագրքերը տեսականորեն և գործնականում պաշտպանում են գրական լեզուն ժողովրդին մոտեցնելու այն կարևոր պահանջը, որ առաջադրում էր վերանորոգվող հայ կյանքը: 18-րդ դարը հայ լեզվաշինարարության բուռն շրջան էր... Մխիթար Սեբաստացին՝ Վենետիկում, նրա կրտսեր ժամանակակից Պաղտասար Դպիրը՝ Պոլսում, միմյանցից անկախ, միանգամայն տարբեր հանգամանքներում իրագործում են լեզվաշինարարական նույն ծրագրերը: Պաղտասար Դպիրը ընթանում էր Մխիթար Սեբաստացու ճանապարհով: Նրանք ծավալում են նպատակակուռ պայքար՝ պաշտպանելու հայոց հնագույն լեզուն՝ ոսկեդարնիկ գրաբարը լատինաբան դպրոցի աղճատումներից, վերականգնելու նրա դասական ավանդները, դյուրացնելու նրա ուսուցման եղանակները, պարզեցնելու դասագրքերը և, միաժամանակ, գրական լեզուն ժողովրդին մատչելի դարձնելու նպատակով, ապարեկ բացելու նոր գրական հայերենի՝ աշխարհաբարի համար:

---

[1] *Պաղտասար Դպիր, «Օրինակք բարևագրաց», Պոլիս (2-րդ տպագր.), 1787, էջ 83—85:*

18-րդ դարի հայոց գրական կյանքում առավել նոր և նշանակալից երևույթ էր Պաղտասար Դպիրի տաղարանները. երևան գալը, նրա հոգևոր և աշխարհիկ երգերի համատեղ հրատարակությունները: Բանաստեղծ-երգահանի տաղարանները վերափոխություններով և վանական խորագրերով («Տաղարան փոքրիկ Պաղտասար Դպրէ ասացեալ վանական գունով», «Տաղարանիկ սիրոյ և կարօտանաց և այլ ի Պաղտասար Դպրէ ի վերայ վանական գունոց», «Տաղարան անխորագիր») տպագրվում են յոթ անգամ: Դրանք պարունակում են 171 բանաստեղծություն, որոնց մի մասը եղանակել էր հեղինակը, իսկ մի մասն էլ երգվում էին ժամանակին տարածված հայերեն և թուրքերեն ժողովրդական երգերի եղանակներով: Պաղտասար Դպիրի գրչին պատկանող բազմաթիվ այլ բանաստեղծություններ, քառյակներ և երկտողյակներ կան նաև նրա հրատարակությամբ լույս տեսած մի շարք գրքերի համապատասխան էջերում, դաասագրքերում... Նա նպատակ է ունեցել նաև քառյակային բանաստեղծությունների մի առանձին ժողովածու հրատարակել, բայց նրա ցանկությունը չի իրականացվել:

Պաղտասար Դպիրը հայոց վերանորոգվող, գրավոր, դասական նոր բանաստեղծության ամենախոշոր դեմքն է, բանաստեղծական մի նոր դպրոցի հիմնադիրը 18-րդ դարում: Այդ դարում ժողովրդա-աշուղական բանաստեղծությունը, ի դեմս Նաղաշ Հովնաթանի և հանճարեղ Սայաթ-Նովայի, հասնում է իր վարգացման բարձրակետին: Նույն այդ ժամանակներում, ահա, Պաղտասար Դպիրը միահյուսելով, ներդաշնակելով ժողովրդա-աշուղական և դասական բանաստեղծության արվեստի ու գաղափարախոսության կենսական գծերը, ստեղծում է ազգային քնարերգության, դասա-

կան բանաստեղծության մի նոր շեշտ: Դրանով նա խորացնում, պարզորոշում է աշուղական և դասական բանաստեղծության սահմանագծերը և ամուր հիմքեր ստեղծում գալիք, նոր ազգային բանաստեղծության վարգացման համար: Պաղտասար Դպիրի բանաստեղծական դպրոցի անվանի հետևողները եղան Հակոբ Նալյանը, Պետրոս Ղափանցին, Պետրոս Նախիջևանցին, Գրիգոր Օշականցին, Հարություն Կարնեցին և շատ ուրիշներ: Նրանք իրենց բանաստեղծություններում ախորժալուր, «պարզ բանիւ» արտացոլում են հայոց իրավա-տնտեսական, քաղաքական, հոգևոր և ազգային կյանքը՝ գրեթե բոլոր կողմերով:

Բավմալար, բավմախնդիր է Պաղտասար Դպիրի քնարը: Նրա լավագույն բանաստեղծությունները նյութով, բովանդակությամբ կարելի է բաժանել երեք խմբի՝ սիրո, կարոտի, բնության երգեր, մարդու հասարակական և անձնական կյանքի հակամարտությունները, նրա հոգեբանական, ներքին մենամարտը արտացոլող խոհա-խրատական, կրոնա-փիլիսոփայական երգեր և խաոն երգեր: Այս երգերն ուշագրավ են իշխող և ընդհանուր երկու հատկությամբ՝ ողբական եղանակով և իրականության ճշմարիտ, քննական ճանաչողությամբ: Վայելքը, ուրախությունը ու խրախճանքը քիչ բաժին ունեն Պաղտասար Դպիրի տաղերում. «Ամենայն կողմանց վարանեալ», «Յոտից մինչև ցգլուխ ցաւոք լցեալ», «տառապեալ», «անապատէն» բանաստեղծը անդրադառնում է իր ողբերգության թե՛ անձնական-հոգեկան և թե՛ հասարակական-տնտեսական, ազգային-քաղաքական պատճառներին ու համարձակորեն բացում իր մտորումների այլաբանական բողը. «կենսագործեա վիս», «օգնական լեր մեզ ի մարտի», «լեր ինձ յոյս, Մարիամ»,—

բացականչում է բանաստեղծը: Պաղտասար Դպիրը դաստպարտում է ուժի իշխանությունը, «դրամ բռնաւորի ծնունդը»: Նա ցավով է անդրադառնում «Նեղեալ տառապեալ իր տոհմի», աստանդական հայի դառն վիճակին և իբրև ելք, միջոց՝ ազգի հավաքականության, միաբանության, գերադարձության («Ի մէջ հայրենիս անդրէն ժողովելու») պատգամը հղում: Այս առումով շատ ուշագրավ է նրա քնարերգության կարդը՝ «Ի նրնջմանէդ արքայական» այլաբանական բանաստեղծությունը: Դա սիրո երգ չէ, ինչպես սխալմամբ կարծել են ոմանք: Բանաստեղծը ողբում է հայոց պետականության կորուստը, աղերսում է հայրենիքին արթնանալ «արքայական» քնից, ապաստագրվել օտարի լծից, հետու վանել «տապն ու խորշակը»: Նրա ժամանակակից բանաստեղծ Պետրոս Ղափանցին, դեռևս, այդպես է ընկալել այդ երգը: Իր խոհա-խրատական, կրոնա-փիլիսոփայական երգերում (որոնք կգալի թիվ են կազմում) Պաղտասար Դպիրը բարձրացնում է մարդու՝ բանական գոյի ներդաշնակության, կատարելագործման խնդիրը, ներկայացնում է հոգու և մարմնի, չարի ու բարու բախումները, ներքին մենամարտը, մարդու մտքի, գաղափարի և անձնական կրքերի, անմաքուր բարքերի միջև խորացող հակամարտությունները: Այս երգում ակներև է Դավիթ Անհաղթի և Գրիգոր Նարեկացու գեղագիտական, փիլիսոփայական հայացքների ազդեցությունը: Նա գրել է Դավիթ Անհաղթի «Չարը ոչ է անեղ» հատվածի («Սահմանք»-ից) չափածո մեկնությունը:

Արվեստի և բովանդակության կատարելության առումով Պաղտասար Դպիրի քնարերգության առավել ընտիր բաժինը կազմում են նրա սիրո երգերը: Իր «Տաղիկներ սի-

րոյ և կարօտանաց» գրքի հիշատակարանում բանաստեղծը հայտնում է, որ՝ թեև իր մի շարք երգեր արտաքնապես մարմնական ուրախության երգեր են, բայց դրանք բոլորն էլ իրենց ներքին կորությամբ հոգևորին են վերաբերում... Ըստ բանաստեղծի մարդը զգացական և իմացական հատկությունների մի կուռ ամբողջություն է: Նրա սերը նույնպես պետք է արտաբերվի զգացական և իմացական, մարմնական և հոգեկան, բարձր և ապնիվ ցանկությունների սահմանավորված չափի, ներդաշնակության մեջ: Պաղտասար Դպիրի սիրո քնարը ջինջ ու մաքուր, գիտակցված սիրո, ընտանեկան երջանկության, «սեղանակից» ու «հացակից», «սիրո հարկի կացակից սիրելույ» գովք է և փառաբանություն, այն ներքին հոգեկան մեծ լիցք և համամարդկային մեծ շունչ ունի, ինչպես Սայաթ-Նովայի քնարը: Պաղտասար Դպիրի սերը ավելի կուսապ է, հոգեղեն, հեռու արևելյան, աշուղական մարմնական սիրո կեղումներից, բաց նկարագրություններից, այն գրեթե անշոշափելի է, բանականորեն սահմանավորված, չափի մեջ. այդ սիրո առաջ ոչնչանում են նրա «լեռնաչաւի հոգսերը»:

Պաղտասար Դպիրի երեք տասնյակից անցնող սիրային բանաստեղծությունների մի զգալի մասի իշխող եղանակը ողբն է, սիրած էակի կարոտի, նրա կորստյան ցավի, տառապանքի զգացողությունը: Ըստ երևույթին ճիշտ է բանասիրական այն վարկածը, թե նրա սիրո քնարը իրական հիմք ունի, որ բանաստեղծի սիրելի կնոջ անժամանակ մահն է պատճառ եղել ստեղծելու սիրո և կարոտի ողբանվագ երգեր.

Իմ արեգակն, իմ արուսեակն հեռացաւ յինէն,
Ուրախութեան ճրագն իմ, ճրագն իմ մարեցաւ...

Երգչի հոգում սերը անմար է մնացել մինչև կյանքի վերջը:

Իր «Սիրամարգիդ սիրովն եղէ սիրահար, սիրահար, սիրահար» սկսվածքով երգը նա գրել է յոթանասունն անց հասակում: Ձեռագրական նոր փաստեր կան նաև այն մասին, որ նա մահվան մահճում է գրել «Ելի ի լուսեղէն վայրէն», «Աւա՛ղ անձին, թե այս որքա՛ն խելագարեցայ», «Մեղօք մեռեալ, մոօք գերեալ», «Թէ ուժ ունիս վէտ Ռըստամ և Շահրապան» սկզբնատողերով բանաստեղծությունները, որոնք ցայսօր հայտնի չէին բանաստեղծներին: «Բանք խրատականք,— հայտնում են գրիչները,— յայնոսիկ յաւուրս ի մահճի ասացեալ ի Պաղտասար գիտնաւոր Դպրէ»: «Բայց այժմ կամ եղև ինձ մեծապատիւ, գրել աստ վհամեղ տաղս պատուելի Պաղտասար Դպրէ, որ գրեալ է վասն ի մահճիս հիւանդագին, յորմէ ոչ եղև հնար վերծանիլ...»[1]*:*

Սակայն Պաղտասար Դպիրի ողբը նաև նարեկացիական նատվածք ունի: Նրա մի շարք բանաստեղծությունների վրա նկատվում է Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» ընդհանուր և երբեմն էլ շատ որոշակի ազդեցությունը: Նարեկացիագետ քնարերգակը, «Մատեանի» 1726 թվականի քննական, աղբյուրագիտական հրատարակության հմուտ սրբագրիչը (սրբագրությունը այն ժամանակ շատ լայն հասկացողություն էր) չէր կարող խուսափել նրա արվեստի հզոր կախարդանքից: «Մատեանի» հենց այդ հրատարակության առաջաբանը, որ կրում է «Նախերգաբար առ ջերմեռանդ ընթերցօղսդ» խորագիրը, ավարտվում է Պաղտասար Դպիրի ցարդ անծանոթ մի բանաստեղծությամբ: Եր-

[1] Ն. *Պողարյան*, Մայր ցուցակ ձեռագրից սրբոց Ցակոբեանց, Երուսաղեմ, 1968, էջ 139, 313:

գիչը երկնային թագավորից ուժ ու կարողություն է աղերսում՝ հաջող ավարտի հասցնելու Գրիգոր Նարեկացու «Ցառաչանաց մատեան»-ի տպագրությունը: Մի որոշակի իմացական գիծ է անցնում հին աշխարհի, հայոց վաղ միջնադարի ճշմարիտ փիլիսոփայության և սուրբ հայրենի ուսմունքից դեպի հայոց վերածննդի բանաստեղծությունը, ի դեմս Գրիգոր Նարեկացու, և ապա այդ նույնը վերաժառանգում է հայոց 18-րդ դարի վերանորոգվող բանաստեղծությունը՝ ի դեմս Պաղտասար Դպիրի և այլոց: Երգչի խոհախրատական, կենսափիլիսոփայական, կրոնական, կրոնապգային բանաստեղծություններում, ներբողներում և ողբերում նույն երկինքն է, նույն սրբերն ու մարգարեները, Մարիամը, Քրիստոսը, ամենակարող աստված. և իբրև հակադրություն այդ բոլորին՝ ժամանակակից անարդարությունների լի կյանքը ու նրա կենտրոնում կանգնած մարդը՝ 18-րդ դարի ուղեկորույս բանական գոյը՝ իր ողբերգությամբ, իր հոգու ցավատանջ գալարումներով:

Սակայն Նարեկացին է այն հանճարեղ քնարերգակը, որ հենց բանաստեղծության մեջ տեսականորեն հիմնավորում է ողբը իբրև համամարդկային հույսի, հայի հոգեկան ցավերի, ինքնախարազանման, բուժման միջոց, մարդու սխալների, մեղքերի, խոստովանության, քավության, վերափոխության, ապաքինության կորեղ կենք: Ողբով կարելի է մաքրել, դուրս թափել հոգում կուտակված մաղձը, հանգըստանալ, չափի մեջ դնել իմացական և զգացական հատկությունները: Պաղտասար Դպիրի վերոհիշյալ՝ ոչ սիրային երգերը ողբերգական ներքին նույն ձայնը, իմաստը ունեն, նույն հույզերով, նույն տրամադրությամբ են համակում ընթերցողին:

Պաղտասար Դպիրը փոքրաձավալ, սեղմ, ավարտուն, նորատիպ քնարական երգի վարպետ է: Ժամանակի գրավոր, ժողովրդաշունչ, կանոնական բանաստեղծության հանգի, չափի, հյուսվածքի պարզ, դյուրին, բավմապան ձևերի մեջ, ախորժալուր երաժշտականությամբ, տարաստիճան՝ պարզ, միջին պարզության, երբեմն էլ խրթին գրաբարով, ողբի, աղերսանքի, ապաշխարանքի, կղզման, հառաչանքների ուղեկցությամբ Պաղդասար Դպիրը կերպարանավորում է իր ժամանակների մարդու հակասական, բարդ հոգեկան աշխարհը:

Նարեկացու «Մատեան ողբերգության» կենսափիլիսոփայության ներշնչանքը ունենալով՝ Պաղտասար Դպիրը միայն և միայն հետապնդում է իր ժամանակի իրական, երկրային կյանքը արբագործելու, առավել որոշակի՝ հայոց կրոնա-ազգային ներքին և արտաքին հարաբերությունները կարգավորելու, հայ ժողովրդի ազգային ինքնապաշտպանության, ինքնաճանաչման ոգին վերարթնացնելու, հայ համայնքը ի մի բերելու, հայրենի հողում համախմբելու խընդիրները.

Ա՛րդ, առ քեզ գոչեմք, ո՛վ հայրըդ գըթած,
Հայցեա՛յ ի տէառնէ մեզ ողորմութիւն,
Նեղեալ, տառապեալ տոհմիս խըղճալոյ,
Տալով գերելոցն՝ գերադարձութիւն.
Ըստ աղերսանաց սուրբ մարգարէին,
Ի մեր հայրենիս անդրէն ժողովիլ:

Պաղտասար Դպիրի քնարերգությունը, ամբողջության մեջ, արվեստով ու գաղափարական բովանդակությամբ, նախորոշում է 19-րդ դարի դասական բանաստեղծության վարգացման սկզբնական ընթացքը:

ՇՈՒՇԱՆԻԿ ՆԱԶԱՐՅԱՆ.



1

Ջիս քո սիրոյն, ո՛վ նազելի, ճովերն առեր՝ կու մաղէ,
Օտարին լեզուն աւելի ցաւ եղեր՝ զիս կու տաղէ, կու տաղէ,
Այս կարօտուս չի՛ դիմացվիր, միշտ ըզճոգիս կու քաղէ.
Դէպի յերկիրն իմ սիրելոյն
Առնէր, տանէր ճովըն զիս, ճովըն զիս,
Դէպի յայգին իմ նազելոյն
Փըչէր, տանէր քամին զիս, քամին զիս:

Խըղճալի այն և ցաւալի թռչնակին ես նըման եմ,
Որ սիրովն իմ կարմիր վարդին յարակ ի սուգ մըտանեմ, մըտանեմ,
Ի սար, ի ձոր շրջաբերիմ, խընդրեմ և ո՛չ գըտանեմ.

Դէպի երկիրն իմ սիրելոյն
Առնէր, տանէր հովըն զիս, հովըն զիս,
Դէպի յայգին իմ նազելոյն
Փըչէր, տանէր քամին զիս, քամին զիս:

Սըրաթև թռչնակ լինէի, թըռչէի՝ ուր կամէի,
Կամ ի յայգին իմ սիրելոյն փըչօղ քամին լինէի,
Թեթև ամպիկ պիտէի՝ հովուն առջևն իյնէի.
Դէպի յերկիրն իմ սիրելոյն
Առնէր, տանէր հովըն զիս, հովըն զիս,
Դէպի յայգին իմ նազելոյն
Փըչէր, տանէր քամին զիս, քամին զիս:

Այս բոցոյս թէ ծովեր կապեն՝ չըգիտէ ինկի մարիլ,
Այլ հաճապազ նոր ի նորոյ ըսկըսանի ի վառիլ,
Չի ինքն ա՛յլ տեղ, հոգին այլ տեղ, ո՞վ կարէ կալ դադարիլ.
Դէպի յերկիրն իմ սիրելոյն
Առնէր, տանէր հովըն զիս, հովըն զիս,
Դէպի յայգին իմ նազելոյն
Փըչէր, տանէր քամին զիս, քամին զիս:

2

Հերի՛ք ողբաս, գոչես, լաս և հառաչես,
Եւ ըզցաւըս սըրտի իմոյ նորոգես,
Գիտե՛մ, զի ինձ նըմանն կարօտով լի՛ ես.
Լըռեա՛, երգնա՛կ, լըռեա՛, սիրտն իմ խոցեալ է,
Մի՛ լար, անբախտ, մի՛ լար, աչքն իմ լըցեալ է:

Ես՝ ի յիմ սիրելոյս, դու՝ ի քո վարդէն
Կարօտով մընացաք խըղճալի արդէն,
Քո լալօնքդ ըզգաւս իմ նորոգիլ դըրդէն.
Լըռեա՛, երգնա՛կ, լըռեա՛, սիրտն իմ խոցեալ է,
Մի՛ լար, անբախտ, մի՛ լար, աչքն իմ լըցեալ է:

Դու տարին մի անգամ, ո՛վ ազգիս թըռչուն,
Կարօտով կաս մընաս քո վարդին սիրուն,
Ես յարեակ տոչորիմ հրով իմ կարօտուն.
Լըռեա՛, երգնա՛կ, լըռեա՛, սիրտն իմ խոցեալ է,
Մի՛ լար, անբախտ, մի՛ լար, աչքն իմ լըցեալ է:

Քո կարօտեալ սիրուդ ո՛չ է միմիակ,
Զի թէ միսն՝ ո՛չ, գուցէ գոյ այլ ընկնաւնակ,
Սակայն այն, որ իմս է, է՛ մի միայնակ.
Լըռեա՛, երգնա՛կ, լըռեա՛, սիրտն իմ խոցեալ է,
Մի՛ լար, անբախտ, մի՛ լար, աչքն իմ լըցեալ է:

8

Արևս առնեմ, երթամ, ի՛մ սիրուն, ի յերկիր օտար, աւա՛ղ,
Ծրջիմ ի լեռնէլեռ, նազելի, լալով անդադար.
Ժամ ի չտեսնելս ըզքեզ, ի՛մ սիրուն, է՛ ինձ օր հազար, աւա՛ղ.
Իմ նազելի սիրուն սիրասուն, մի՛ մոռանար զիս,
Իմ աչաց լոյս, սրտիս բերկրութիւն, մի թողուր զգերիս:

Անձն իմ եղեալ կամաւ, ի՛մ սիրուն, քո սիրոյդ գերի, աւա՛ղ,
Ի սար ի ձոր անկեալ, նազելի՛, շրջի, դեգերի,

Խնդրելով զքեզ յարակ, ի՛մ սիրուն, միշտ տարաբերի,
աւա՛ղ.
Իմ նազելի սիրուն սիրասուն, մի՛ մոռնար զիս,
Իմ աչաց լոյս, սրտի բերկրութիւն, մի թողուր զգերիս:

Անուշահոտ, կարմիր, ի՛մ սիրուն, դու վարդ անթառամ,
աւա՛ղ,
Ես խըղճալի երգնակ, նազելի, սիրով քո ողբամ,
Որ առանց քո տեսոյդ, ի՛մ սիրուն, ո՛չ բընաւ խնդամ,
աւա՛ղ.

Իմ նազելի սիրուն սիրասուն, մի՛ մոռնար զիս,
Իմ աչաց լոյս, սրտի բերկրութիւն, մի թողուր զգերիս:

Աստեղաց լոյս տըւօղ, ի՛մ սիրուն, արեգակն ես դու,
աւա՛ղ,
Ես փոքրագոյն փոշեկ, նազելի՛, եմ քո արևուն,
Շրջիմ ի մեջ լուսոյդ, ի՛մ սիրուն, ի քո կարօտուն, աւա՛ղ.
Իմ նազելի սիրուն սիրասուն, մի՛ մոռնար զիս,
Իմ աչաց լոյս, սրտիս բերկրութիւն, մի թողուր զգերիս:

4

Իմ աննըմանի սիրելագոյն սիրելի,
Քանի ըզքընաւ գովելիսըն գովելի, ա՛խ իմ,
Եւ ոչ ժամ մի մոռանալի լինելի,
Տեսիլ քո յանդիման աչացս երևի, ա՛խ իմ:

Իմ աննըմանն, քեզ ո՛վ ոք գոյ՝ նըմանի,
Որ ունի զքեզ՝ նըման բիւր-բիւր երանի, սէ՛ր իմ,
Ի յամենայնս, որ ինչ ազնիւ գըտանի,
Տեսիլ քո յանդիմանն աչացս երևի, սէ՛ր իմ:

Իմ աննըմանն աննըմանիցն ի վերոյ,
Դո՛ւ մի միայն ես արժանի սիրելոյ, սէր իմ,
Թէ՛ ննջիցեմ, թե՛ յառնիցեմ ի քընոյ,
Տեսիլ քո յանդիմանն աչացս երևի, սէ՛ր իմ:

Իմ աննըմանն, արեգակն իմ, լուսինն իմ,
Ես ի սէր քո տառապանօք դեգերիմ, սէ՛ր իմ:
Ուր և հայիմ, ուր և նայիմ և յառիմ,
Տեսիլ քո յանդիմանն աչացս երևի, սէ՛ր իմ:

Իմ աննըմանն, առանց քո՝ լոյսն՝ ըստուեր է,
Քո քաղցրութիւնդ քան ըզբընաւս ի վեր է, սէ՛ր իմ,
Թէպէտ ոչ իսկն, այլ որքան կարն իմ բերէ:
Տեսիլ քո յանդիմանն աչացս երևի, սէ՛ր իմ:

5

Վարաւելով, վարաւելով մոլար դեգերիմ, աւա՛ղ,
Ո՛չ ունենալով դադար երբէք, սիրովդ երերիմ,
Քո խղճալի երգնակն եմ ես, ո՛վ իմ կարմիր վարդ, աւա՛ղ,
Հոտիկտ՝ աննուշ, գունով՝ պայծառ՝ հասայն ծաղկանց զարդ:

Գարուն հասեալ՝ բոլոր աշխարհս բերկրեաւորի, աւա՛ղ,
Իմ այս խորված հատած սրտիկս նոր վիրաւորի,
Առանց ծագման քո աննըմանն գեղոյդ արևուն, աւա՛ղ,
Հազար-հազար արեգակունք չեն ինձ երևուն:

Չուզիմ իսկի իրի իմիք բընաւ ինչ կարիք, աւա՛ղ,
Ջի իմ աննգին գեղափայլուն է ինձ բիւր բարիք.
Ո՛վ այգեպան, ո՛վ անխիղճ մարդ, ո՞ւր է իմ հոգին, աւա՛ղ,
Առանց վարդին՝ չորանայցէ՛ բոլոր քո այգին:

6

Շատ սիրով քեզ բարև, իմ աչացըս լոյս,
Իմ գերագնիւ սիրելի, մի՛ մոռնար զիս,
Դո՛ւ ես իմ քերկրութիւն, դո՛ւ ես իմ մեծ յոյս.
Իմ սիրասուն գովելի, մի՛ մոռանար զիս,
Իմ աչաց լոյս, իմ հոգի, մի՛ թողուր զգերիս:

Ելի ես ի խընդրել զքեզ ի գիշերի,
Ո՛չ գըտի և լալագին կամ ի դեգերի՝
Ի հեռաբնակ երկիրդ, իմ հոգւոյս հոգի.
Ողորմելով քո գերոյս մի՛ մոռանար զիս,
Իմ աչաց լոյս, իմ հոգի, մի՛ թողուր զգերիս:

Քանի ի քէն գերիս հեռի անկեալ եմ,
Ո՛չ մեռած, ո՛չ կենդանի, կիսամեռեալ եմ,
Հրով քո կարօտութեանդ խոր խորովեալ եմ.
Իմ աննըմանի աննգին ակն, մի՛ մոռանար զիս,
Իմ աչաց լոյս, իմ հոգի, մի՛ թողուր զգերիս:

Արեգակըն ծագէ յերկնից ի յերկիր,
Իմ արեգակն է ի քէն՝ ինձ բարևագիր,
Երբ յիշեմ զքեզ՝ լինիմ որպէս ըզմոխիր.
Իմ արեգակն, իմ լուսին, մի՛ մոռանար զիս,
Իմ աչաց լոյս, իմ հոգի, մի՛ թողուր ըզգերիս:

7

Ա՜յ իմ աչաց լոյս գովելի,
Մի՛ մոռանար զիս՝ քո գերիս,
Ի բոլոր սրտէ սիրելի,
Մի՛ մոռանար զիս՝ քո գերիս։
Զիս՝ քո գերիս,
Ողորմելիս.
Զգերիս,
Ողբալիս,
Խըղճալիս։

Իմ աղաւնի երաւներամ,
Իմ գեղեցիկ վարդ անթառամ,
Ի քո երկրէն ես կու գընամ.
Մի՛ մոռանար զիս՝ քո գերիս,
Զիս՝ քո գերիս,
Ողորմելիս.
Զգերիս,
Ողբալիս,
Խըղճալիս։

Իմ աննըմանն, իմ լուս արև,
Անուշաճոտ վարդի տերև,
Լալով տամ քեզ հազար բարև.
Մի՛ մոռանար զիս՝ քո գերիս,
Զիս՝ քո գերիս,
Ողորմելիս.

Զգերիս,
Ողբալիս,
Խըղճալիս:

Իմ արտօտիկ ձեռացս ելած,
Լալոտ աչերուս հեռացած,
Քանի նայիս ի վեր աստուած՝
Մի՛ մոռանար զիս՝ քո գերիս,
Զիս՝ քո գերիս,
Ողորմելիս.
Զգերիս,
Ողբալիս,
Խըղճալիս:

Քանի անկայ ի քո տեսուն,
Զի՛ դադրիր աչերս ի լալուն,
Ո՛չ արթուն եմ և ոչ ի քուն.
Մի՛ մոռանար զիս՝ քո գերիս,
Զիս՝ քո գերիս,
Ողորմելիս.
Զգերիս,
Ողբալիս,
Խըղճալիս:

Ո՛վ իմ սրտիս բևեռ ոսկի,
Մի՛ մոռանար զիս՝ քո գերիս
Զիս՝ քո գերիս,
Ողորմելիս.

Զգերիս,
Ողբալիս,
Խըղճալիս։

8

Եկի ի խընդրել ըզսէրն իմ,
Յուցել ընդմա զսիրոյ վէրն իմ,
Որ է արեգական տէրն իմ՝
Ո՛չ գըտի, ո՛չ գըտի,
Լալագին, լալագին շրջիմ գերիս։

Թէպէտ ևս ո՛չ է հեռաւոր,
Որոց ո՛չ են արատաւոր,
Լալիս խըղճալի մեղաւոր՝
Ո՛չ գըտի, ո՛չ գըտի,
Լալագին, լալագին շրջիմ գերիս։

Ի սար, ի ձոր յար աստանդիմ,
Ի լաց, ի կոծ պարաւանդիմ,
Զհանուրց արփին մանաւանդ իմ,
Ո՛չ գըտի, ո՛չ գըտի,
Լալագին, լալագին շրջիմ գերիս։

Աւա՛ղ ինձ, որ ի կենաս եկի,
Զօգուտն իմ ոչ դարակեցի,
Զթաքուն գանձն ի յագարակի՝
Ո՛չ գըտի, ո՛չ գըտի,
Լալագին, լալագին շրջիմ գերիս։

Հընար գըտաւելոյ զիմ կեաւս,
Գըտի մեռաւիլ աւնկեւդաւս,
Զի ի սոյն իսկ ի մարմնոյ կեաւս՝
Ո՛չ գըտի, ո՛չ գըտի,
Լալագին, լալագին շրջիմ գերիս:

9

Սիրովդ եղէ, սիրովդ եղէ սիրահար գերիս,
Սիրոյ քո վէրքն ի սըրտիս, ի սըրտիս շարեցաւ,
Ե՛կ, ե՛կ, ե՛կ,
Ո՛վ իմ ազնիւ, ե՛կ:

Հըրովդ եղէ, հըրովդ եղէ հըրահար գերիս,
Կարօտոյդ հուրն ի հոգիս, ի հոգիս վառեցաւ.
Ե՛կ, ե՛կ, ե՛կ,
Ո՛վ իմ ազնիւ, ե՛կ:

Տըխրասրտեալ, տրտմասրտեալ, սըգալի ընստիմ,
Քանի եմ ես ի քէն զատ, ի քէն, ո՛չ բընաւ քերկրիմ,
Իմ արեգակն, իմ արուսեակն հեռացաւ յինէն,
Ուրախութեան ճրագն իմ, ճրագն իմ մարեցաւ.
Ե՛կ, ե՛կ, ե՛կ,
Ո՛վ իմ ազնիւ, ե՛կ:

Սիրտ իմ ըզքեզ ո՛չ մի երբէք մոռանալ գիտէ,
Այլ հանապազ սըգով, սըգալով զգալուստ քո դիտէ,
Իբրու տատրակ ընկերազուրկ անուրախ նստեալ,
Մինակիկ ի չոր ճըղի, չոր ճըղի թառեցաւ.

Ե՛կ, ե՛կ, ե՛կ,
Ո՛վ իմ ազնիւ, ե՛կ:

Թէ ի ներքոյ արեգականն հազար այլ կայցէ,
Սիրտ իմ ոգոց հանելով, հանելով զքեզ միայն հայցէ,
Զվերո երգեալ բանիդ ըզտիպն բերելով կրկին,
Ո՛չ միում այլ ընկերեալ, ընկերեալ յարեցաւ:
Ե՛կ, ե՛կ, ե՛կ,
Ո՛վ իմ ազնիւ, ե՛կ:

Ակն իմ արիւն կաթեցուցեալ հառաչէ, գոչէ,
Հառաչօղ, սրգացօղ, սրգացօղ ինձ ընդառ ո՛չ է,
Քանի եղեր հեռի յինէն, իմ աչացըս լոյս,
Սիրտ իմ ի քէն ո՛չ բընաւ, ո՛չ բընաւ սառեցաւ.
Ե՛կ, ե՛կ, ե՛կ,
Ո՛վ իմ ազնիւ, ե՛կ:

10

Ի քոյդ սիրոյ գերիս իբրու մեռեալ եմ,
Յարակ խնդրեմ զքեզ և ո՛չ գտանեմ,
Քո սաստիկ կարօտոյդ հրրովն եռեալ եմ,
Յարակ խնդրեմ զքեզ և ոչ գտանեմ:
Եւ ոչ գտեալ զքեզ՝ ի սուգ մըտանեմ:

Զքո քաղցրիկ սուրբ անունդ ես միշտ յիշելով,
Գոչեմ և հառաչեմ զիս աւաղելով,
Ի սար, ի ձոր շրջիմ զանձն իմ կոծելով,
Յարակ խնդրեմ զքեզ և ոչ գտանեմ,
Եւ ոչ գտեալ զքեզ՝ ի սուգ մրտանեմ:

Անել կապով ի քո սուրբ պարանդ արկեալս,
Ձդադարիմ երբէք ի սիրոյդ հարկեալս,
Ողորմելի կեանօք ի տեսոյդ զրկեալս,
Յարակ խնդրեմ ըզքեզ և ոչ գտանեմ,
Եւ ոչ գտեալ զքեզ՝ ի սուգ մըտանեմ:

Բիւր ինձ արեգակունք ո՛չ գան ի յերև,
Զի քո սուրբ տեսութիւնդ է ինձ բիւր արև,
Դեղնեալ, աննկեալ, խամրեալ իբր աշնան տերև,
Յարակ խնդրեմ ըզքեզ և ոչ գտանեմ,
Եւ ոչ գտեալ զքեզ՝ ի սուգ մըտանեմ:

11

Արի՛, ի՛մ քաղցրիկ աղաւնի,
Ոսկի խնծոր զարմանալի,
Զքեզ տեսողին բիւր երանի.
Դու բարի եկիր, բարի եկիր:

Դու, որ եկիր, երևեցար,
Իբրու արև ինձ ծագեցար,
Յընծութիւն ինձ պարգևեցար.
Դու բարի եկիր, բարի եկիր:

Ուրախութիւն հոգոյ իմոյ
Ո՛չ գոյ բընաւին առանց քոյ,
Ով իմ ազնիւ գերայարգոյ,
Դու բարի եկիր, բարի եկիր:

Տրտում էի՝ ուրախացայ,
Մեռեալ էի՝ կենդանացայ,
Ինձ երանի, որ զքեզ տեսայ.
Դու բարի եկիր, բարի եկիր:

Բարի եկիր, իմ սիրելի,
Իմ գերազնիւ գերգովելի,
Իմ աչաց լոյս, իմ նազելի.
Դու բարի եկիր, բարի եկիր:

12

Մէկ ազնըւի մի սէրըն կայ ի գըլխիս,
Գիշերն է յերազիս, ցերեկն ի սրտիս,
Կորուսեր եմ զիմ աննըման սիրելիս,
Անոր համար կու պըտըտիմ ի սարերն, ի ձորերն:

Ի միտս որ գայ՝ կու թռչի խելքս ի գլխէս,
Յաչերս արիւն կու բոլորի ի սրտէս,
Ղարիպ եմ ես, որ ելեր եմ երկրէս,
Անոր համար կու պըտըտիմ ի սարերն, ի ձորերն:

Այգի եմ տընկեր ու վարդ եմ բուսուցեր,
Ապառաժներ կըտրեր՝ ջուր եմ վազցուցեր,
Զիմ աննըման սիրելիս եմ կորցուցեր,
Անոր համար կու պըտըտիմ ի սարերն, ի ձորերն:

Ջիմ ազնիւն, որ սիրոյս գըրկովն եմ բարձեր,
Ջըկանց ծովուն, լեռանց թոչնոցն եմ հարցեր,
Մոլորական մաղըսկաթներն եմ դարձեր,
Անոր համար կու պըտըտիմ ի սարերն, ի ձորերն:

Թէ հարցանեն, թէ հալտ ի՞նչ է՝ հալ չունիմ,
Ի շատ սըգոյս պատասխանի տալ չունիմ,
Ի տեղի մի դադարիլ և կալ չունիմ,
Անոր համար կու պըտըտիմ ի սարերն, ի ձորերն:

13

Դու իմ սրտին պայծառ արև,
Սէր իմ, սէր իմ, աւա՜ղ.
Սիրով տամ քեզ հազար բարև,
Կարօտիմ քեզ դարև-դարև,
Սէր իմ, սէր իմ, աւա՜ղ,
Սիրով տամ քեզ հազար բարև:

Սիրոյդ վէրն իմ միշտ նորոգի,
Սէր իմ, սէր իմ, աւա՜ղ.
Թեև ինձ բիւր բարի ոգի,
Իմ աչաց լոյս, հոգւոյս հոգի,
Սէր իմ, սէր իմ, ավա՜ղ,
Սիրով տամ քեզ հազար բարև:

Քանի որ դու ի միտս իմ գաս,
Սէր իմ, սէր իմ, աւա՜ղ,
Ցաչացս իմ արիւն կաթել տաս,
Ի հեռաւոր տեղիդ, յոր կաս,

Սէր իմ, սէր իմ, աւա՛ղ,
Սիրով տամ քեզ հազար բարև:

Սիրով քո միշտ սիրահարիմ,
Սէր իմ, սէր իմ, աւա՛ղ.
Եւ ոչ յուստեք միսիթարիմ,
Եւ ոչ գիտեմ, թէ ո՞ւր վարիմ,
Սէր իմ, սէր իմ, աւա՛ղ,
Սիրով տամ քեզ հազար բարև:

Երեսս է դարձեր իմ մոխիր,
Սէր իմ, սէր իմ, աւա՛ղ.
Բոլոր մարմինս եղեր է կիր,
Գըրելով քեզ արտասուօք գիր,
Սէր իմ, սէր իմ, աւա՛ղ,
Սիրով տամ քեզ հազար բարև:

14

Իմ արևակն, իմ արուսեակն, իմ արեգակն, իմ լուսին,
Ելար յիմէն, ու զիս թողեր յոյժ կարօտ քո երեսին,
Խաւնդակաթ եմ, մաղըմկաթ եմ, հասրաթ եմ քո մէկ խօսի
Այս խըղճալի խոր հառաչելս մինչև յե՞րբ, մինչև յե՞րբ,
Մինչև յե՞րբ, սէր իմ:

Թէպէտ կարի յոյժ փափագիմ տեսիլդ քո ինձ տեսանիլ,
Բայց զի կարի հեռագոյն ես, ո՛չ կարեմ քեզ հասանիլ,
Ուր լիմէր ինձ խոտիկ մ'եղնիլ՝ դիմացդ առջև բուսանիլ.
Այլ վա՛յ, աւա՛ղ, խոր հառաչելս մինչև յե՞րբ, մինչև յե՞ր
Մինչև յե՞րբ, սէր իմ:

Գաղտու ալաճի ճալիմ, մաշիմ, խըղճալի եմ, խըղճալի,
Թերկրութիւն ինձ բընաւ ո՛չ գոյ, ողբալի եմ, ողբալի,
Ե՞րբ լինիցի ինձ օրըն այն, որ լինիցիմ խընդալի,
Ո՛չ գիտեմ թ՛այս խոր հառաչելս մինչև յե՞րբ, մինչև յե՞րբ,
Մինչև յե՞րբ, սէր իմ:

15

Իմ աննըմաւ յոյժ գովելի,
Արարեր զիս ողորմելի,
Տեսոյդ գերի-լինիմ, գերի.
Արի՛, սէր իմ, արի՛, արի՛,
Զարթի՛ր ի քընոյդ:

Իմ աննըմաւ տիպ գերազանց,
Դու թագուհի ամէն ծաղկանց,
Գարունն էհաս, ձըմեռն էանց,
Արի՛, սէր իմ, արի՛, արի՛,
Զարթի՛ր ի քընոյդ:

Իմ աննըմաւ, ես քո սիրուն
Միշտ դեգերեալ կամ երերուն,
Չի՛ խարշէ զքեզ շողն արնուն,
Արի՛, սէր իմ, արի՛, արի՛,
Զարթի՛ր ի քընոյդ:

Քո խղճալի երգնակն եմ ես,
Միշտ ի քոյին դռնակն եմ ես,
Չի քո տեսոյն խնդրակն եմ ես.
Արի՛, սէր իմ, արի՛, արի՛,
Զարթի՛ր ի քընոյդ:

16

Ի ընջմաձէդ արքայական,
Զարթի՛ր, նազելի իմ, զարթի՛ր,
Էհաս ընշոյլն արեգական,
Զարթի՛ր, նազելի իմ, զարթի՛ր։

Պատկեր սիրուն, տիպ բոլորակ,
Լըրացելոյ լուսնոյն քատակ,
Ո՛չ գըտանի քեզ օրինակ,
Զարթի՛ր, նազելի իմ, զարթի՛ր։

Այդ քո տեսիլդ, զոր դու ունիս,
Արար ծառայ քեզ ըզգերիս,
Արևակէզ գուցէ լինիս,
Զարթի՛ր, նազելի իմ, զարթի՛ր։

Ղաբին սրտիւ քանի՞ կոծամ,
Է՛ վարդ կարմիր և անթառամ,
Տե՛ս, թէ զիա՛րդ խղճալի կամ,
Զարթի՛ր, նազելի իմ, զարթի՛ր։

Տապ և խորշակ ժամանեցին,
Զթերթիկ գեղոյդ այրել կամին,
Քանզի էանց գիշերն մըթին,
Զարթի՛ր, նազելի իմ, զարթի՛ր։

Է՛ աննըման իմ գովելիս,
Ի մէջ ականց գեղ քո՝ մագնիս,
Իոահեակ սոյն թըւականիս,
Զարթի՛ր, նազելի իմ, զարթի՛ր։

17

Իմ հեռաբնակ հոգւոյս հատոր,
Զքեզ գըտած օրերս ո՞ւր գընաց,
Որ այժմ յինէն եղեր խոտոր,
Զքեզ տեսած օրերս ո՞ւր գընաց,
Ո՛հ, ո՞ւր գընաց, վո՛հ, ո՞ւր գընաց,
Բերկրեցած օրերս ո՞ւր մընաց:

Որ ինչ սիրովդ եղէ զմայլօղ,
Չեղև այժմու սրգոյս արժօղ,
Ո՛վ իմ՝ գիս միշտ ի յողբ շարժօղ,
Զքեզ գըտած օրերս ո՞ւր գընաց,
Ո՛հ, ո՞ւր գընաց, վո՛հ, ո՞ւր գընաց,
Բերկրեցած օրերս ո՞ւր մընաց:

Ուրախակից, լացակից իմ,
Սեղանակից, հացակից իմ,
Սիրոյ յարկին կացակից իմ,
Զքեզ գըտած օրերս ո՞ւր գընաց,
Ո՛հ, ո՞ւր գընաց, ո՛հ, ո՞ւր գընաց,
Բերկրեցած օրերս ո՞ւր մընաց:

Քո կարօտովդ կու տառապիմ,
Կու խորովիմ և կու տապիմ,
Ով անդրանիկ դու նորապիմ,
Զքեզ գըտած օրերս ո՞ւր գընաց,
Ո՛հ, ո՞ւր գընաց, վո՛հ, ո՞ւր գընաց,
Բերկրեցած օրերս ո՞ւր մընաց:

Մուրատիս ընոր հասած ի քէն,
Զկարօտն իմ ընոր առած ի քէն,
Զքեզ ընոր ինձ գանձ գըտած ի քէն,
Այն գըտած օրերս ո՞ւր գընաց,
Ո՛հ, ո՞ւր գընաց, վո՛հ, ո՞ւր գընաց,
Բերկրեցած օրերս ո՞ւր մընաց:

18

Ի սիրելոյս իմմէ ի բաց ընկեցայ,
Վասն այսորիկ սրգաւորեալ վարանիմ,
Ի քաղցրագոյն տեսութենէն զրկեցայ,
Վասն այսորիկ գոռայ, գոչէ բերան իմ:

Պայծառ արևս իմ հեռացաւ ի յինէն,
Եւ գիս եթող զուրկ ի յիւր տեսութենէն,
Իբրու տատրակ անընկեր մընացի մէն,
Վասն այսորիկ գոռայ, գոչէ բերան իմ:

Աւա՛ղ գերոյս, որ եղէ ողորմելի,
Լալի, արտասուելի և յոյժ սրգալի,
Զի հեռացաւ յինէն սէրն իմ տարփալի,
Վասն այսորիկ գոռայ, գոչէ բերան իմ:

Ղամպարօրէն էր ճառագայթ ի սրտիս,
Որով բերկրեալ զուարճանայի եղկելիս,
Արդ հեռացեալ՝ ողորմելի եթող զիս,
Վասն այսորիկ գոռայ, գոչէ բերան իմ:

Տեսիլ գեղոյն բերկրուն առնէր զիս յարակ,
Որ ոչինչ տըրտմութիւն իշխէր ինձ դիմակ,
Արդ կամ ի տըխրութեան զօրն առհասարակ,
Վասն այսորիկ գոռայ, գոչէ բերան իմ:

19

ԴԱՐՁԵԱԼ ԻԲՐ Ի ՊԻՊԻԼԷՆ ՎԱՍՆ ՎԱՐԴԻՆ ԵՐԳԵՑԵԱԼ

Ի միրելոյ իմմէ ի բաց ընկեցայ,
Վասն այսորիկ սըգաւորեալ վարանիմ.
Ի վայելուչ տեսութենէն զըրկեցայ,
Վասն այսորիկ սըգաւորեալ վարանիմ:

Պակնում թէ այլ գուցէ ոչ տեսանիցի,
Եւ սիրտ խըղճոյս այրեցեալ կիզանիցի,
Եւ չիք հընար թէ յինէն մոռանիցի.
Վասն այսորիկ սըգաւորեալ վարանիմ:

Անջատեցեալ հեռի անկաւ ի գերոյս,
Զայն ինձ դարձեալ գըտանելոյ ո՛չ գոյ յոյս,
Ուրեմն ապա ունի պատճառ ձայն լալոյս.
Վասն այսորիկ սըգաւորեալ վարանիմ:

Ղամպարօրէն էր ճառագայթ ի սըրտիս,
Որով բերկրեալ զուարճանայի ողբալիս,
Արդ հեռացեալ ողորմելի եթող զիս.
Վասն այսորիկ սըգաւորեալ վարանիմ:

20

Բարկ արևդ ի շող ձեղուածէն ցայտաբերեալ ծագեցար
աւ մեզ.
Ողջուածելով ըզսիրելիդ երգաբանեմք.
Դու բարի եկիր, սիրելի,
Դու բարի եկիր:

Ո՛հ բերկրուն եղեալ մեր ժողովմանս, ցրնծացաք յոյժ մինչ
տեսաք ըզքեզ.
Ուստի դարձեալ աւնդրէն ըզնոյն կըրկնաբանեմք.
Դու բարի եկիր, սիրելի,
Դու բարի եկիր:

Որովհետև պատուական գանձ քան զսիրելիս ո՛չ գոյ ի
կեանս այս.
Բերկրութիւն մեծ մեզ շնորհեցեր՝ ուրախութեամբ լըցեալ
ըզներկայս:
Դու բարի եկիր, սիրելի,
Դու բարի եկիր:

Ո՛հ, ցրնծացուցեր զմեզ քո գալովդ՝ յոյժ ընդման որպէս
յաւար բազում,
Վասնորոյ զնոյն քեզ սիրելոյդ դարձեալ ասեմք.
Դու բարի եկիր, սիրելի,
Դու բարի եկիր:

Աստանօր մեր փարթամացեալ սէր ի վերայ սիրոյ ըզգեցաք,
Մինչ ունէաք զքեզ ի սրտի՝ ըզտեսութիւնդ ևս վայելեցաք.

Դու բարի եկիր, սիրելի,
Դու բարի եկիր:

Ո՜հ, թէ լերանց հանգոյն հոգ անձին լինիցէր մեզ՝ արդ
ոչընչանայր

Ապա ո՞րպէս լըռեալ՝ ըզնոյն ո՜չ առասեմք.
Դու բարի եկիր, սիրելի,
Դու բարի եկիր.
Բարի, բարի,
Դու հազար բարի:

21

Բարի եկիր, իմ պատուական սիրելի,
Բարի եկիր, իմ ինձ պիտան սիրելի,
Բարի եկիր, իմ անընման սիրելի,
Բարի եկիր, բարի, բարի,
Դու հազար բարի:

Բարի եկիր, իմ աչաց լոյս սիրելի,
Բարի եկիր, իմ բարի բոյս սիրելի,
Բարի եկիր, իմ անգին գոյս սիրելի,
Բարի եկիր, բարի, բարի,
Դու հազար բարի:

Բարի եկիր, իմ լուսերես սիրելի,
Բարի եկիր, իմ քաղցրատես սիրելի,
Բարի եկիր, որ դու իմ ես սիրելի,
Բարի եկիր, բարի, բարի,
Դու հազար բարի:

Բարի եկիր, իմ արեգակն, իմ լուսին,
Բարի եկիր, որ աչքերս ըզքեզ տեսին,
Բարի եկիր, քիւր գոհութիւն աննիւսին,
Բարի եկիր, բարի, բարի,
Դու հազար բարի:

Բարի եկիր, իմ նոնոֆար, իմ ռահան,
Բարի եկիր, իմ մանուշակ, իմ շուշան,
Բարի եկիր, իմ կարմիր վարդ պատուական
Բարի եկիր, բարի, բարի,
Դու հազար բարի:

Բարի եկիր, իմ աղաւնի, իմ տատրակ,
Բարի եկիր, իմ արտօտիկ, իմ երգնակ,
Բարի եկիր, քաղցրաբերան իմ թութակ,
Բարի եկիր, բարի, բարի,
Դու հազար բարի:

22

Ո՛վ գերազնիւ գերըղձալի,
Տեսոյդ կարօտ եմ, կարօտ եմ,
Որ մի միայն ես բաղձալի,
Տեսոյդ կարօտ եմ, կարօտ եմ:

Հեստս ի սիրոյդ՝ յանանդորրու,
Տըխուր ընստիմ որպէս ըզբու,
Յոյժ ծարաւեալ իբր եղջերու,
Տեսոյդ կարօտ եմ, կարօտ եմ:

Որ թէ իցեմ միակ իշխան՝
Տիրող երկրիս միահեծան,
Ինձ բոլոր գոյքս յագումն ո՛չ տան,
Տեսոյդ կարօտ եմ, կարօտ եմ:

Հուր քո սիրոյդ գալարէ զիս,
Թէպէտ մարմինս տարափէ յիս,
Որքան ի մարմնի է հոգիս՝
Տեսոյդ կարօտ եմ, կարօտ եմ,
Ո՛վ ճշմարիտ աննմանեմատ սիրելի:

23

Ո՛վ համայնից փափագելի,
Երևեցո զերեսըս քո,
Փափագմամբ երկրըպագելի,
Սէր իմ,
Երևեցո զերեսըս քո:

Հեռացելոյս կամաւ ի քէն,
Հեռացուցչիս ըզքեզ յինէն,
Ոլորմելով դարձեալ անդրէն,
Սէր իմ,
Երևեցո զերեսըս քո:

Ոլորմելի անկեալ հոգւոյս,
Ներարգելման թըշուառ մարմնոյս,
Հըրով սիրոյդ գալարելոյս,
Սէր իմ,
Երևեցո զերեսըս քո:

Հէքս ի սիրոյդ անկեալ ի զատ,
Ի թըշուառեալսն եմ անբաղդատ,
Ո՛վ աննըման անհամեմատ,
Սէր իմ,
Երևեցո զերեսըս քո:

24

Հրով սիրոյդ վառեալ գերիս,
Յարակ տապիմ, տոչորիմ յիս,
Արի՛ և քեւ զովացո՛ զիս,
Արի՛, սէր իմ, արի՛, արի՛:

Որքաև եղէ ի քէն ի բաց,
Եղև բաժին իմ ողբ և լաց,
Հոգիս առանց հոգւոյդ մընաց.
Արի՛, սէր իմ, արի՛, արի՛:

Ի իւծիմ, հալիմ սիրով քոյին,
Քաև ըզբընաւս ի վերոյին,
Չունիմ խնդումն ըստ ներգոյին,
Արի՛, սէր իմ, արի՛, արի՛:

Րախացուցիչ իմոյս հոգւոյ՝
Դո՛ւ ես, ով մի միայն յարգոյ,
Յագումն ինձ՝ բաց ի քէն՝ ո՛չ գոյ.
Արի՛, սէր իմ, արի՛, արի՛:

25

Սիրահար, սիրահար, սիրահար սիրովդ եղեալ եմ, եղեալ եմ,
Հըրահար, հըրահար, հըրահար հրովդ եռեալ եմ, եռեալ եմ:

Թէ բոլոր, թէ բոլոր, թէ բոլոր բարիքն ինձ ոգին, ինձ ոգին,
Յագումնիկ, յագումնիկ, յագումնիկ չըտաւ ինձ նոքին, ինձ նոքին:

Բաց ի քէն, բաց ի քէն, բաց ի քէն զի զի՞նչ այլ բարի, այլ բարի,
Իրաւամբ, իրաւամբ, իրաւամբ հոգւոյն յարմարի, յարմարի:

Ապա յոյժ, ապա յոյժ, ապա յոյժ կարի յիրաւի, յիրաւի,
Հոգի իմ, հոգի իմ, հոգի իմ միոյդ ծարաւի, ծարաւի:

Թէ յամէն, թէ յամէն, թէ յամէն՝ վայելս արօտիմ, արօտիմ,
Կարօտիմ, կարօտիմ, տէ՛ր իմ, տէ՛ր իմ, տեսոյդ կարօտիմ, կարօտիմ:

26

Ի ԲԱՂԴԱՍԱՐ ԴՊՐԷ

Սիրամարգիդ սիրովն եղէ սիրահար, սիրահար,
Սիրահարեալ սիրով քոյին սէրեր իմ, սէրեր իմ, սէրեր իմ.
Հրով սիրոյդ եղէ գերիս հրահար, հրահար,
Հրահարեալ հրով քոյին հըրեր իմ, հըրեր իմ, հըրեր իմ:

Սիրոյ քո քամին զիս առեալ յարածէ, յարածէ,
Սիրոյդ նաւուս զառագաստն տարածէ, տարածէ, տարածէ,
Այլ զի ուղղիչ խելքս ի գլխոյս տարած է, տարած է.
Ուստի յարակ աստանդելով երերիմ, երերիմ, երերիմ:

Քանի աչքն իմ ի քո տեսոյդ հեռանի, հեռանի,
Որպէս զջուր իբր ի վկաթսայս, եռանի, եռանի, եռանի,
Եւ զի՛նչ ասեմ, թէ մեռանի, մեռանի, մեռանի,
Ուստի արժան է ինձ ասել մեռանիմ, մեռանիմ, մեռանիմ:

Ունայնութեամբ զանցեալ օրերս ցըրեցի, ցըրեցի,
Հոգոյս իմոյ և ո՛չ զօր մի ձըրեցի, ձըրեցի, ձըրեցի,
Տարիքն իմ զեօթնասուն անցեալ գըրեցի, գըրեցի,
Աւա՛ղ, աւա՛ղ, միշտ գոչելով՝ ծերեր իմ, ծերեր իմ, ծերեր իմ:

27

ՏԱՂ ԳԱՐՆԱՆ

Պարուց թըռչնոց տո՛ւք աւետիս,
Սիրուն գարունն երևեցաւ.
Գեղեցկացեալ երևելիս՝
Ադին դրախտին ընմանեցաւ:

Արի՛, պիւլպի՛ւլ, ով խըղճալի,
Հերիք ողբաս անյուսալի,
Զի սիրելին քո բերկրալի
Ի մէջ այգւոյն յօրինեցաւ:

Հեզիկ հընչեալ գարնան հողմոյն
Եբեր ծաղկունս մեզ գոյնըզգոյն,
Ջցօղիկն առեալ ի մեղմ ամպոյն,
Տեսիլ վարդին պայծառացաւ:

Այլազանեալ երեսք դաշտաց,
Լերանց, բլրոց, բուսականաց,
Լըցեալ ծաղկօք գոգունք հովտաց,
Երկրիս ամէն զարդարեցաւ:

Րամից կուսից պըսակ փայլեալ,
Կոյս տիրածին, ծաղիկ ընտրեալ,
Քև կենաց հոտն ամէնօրհնեալ
Ի ծոցոյ հօր մեզ բուրեցաւ:

28

ԴԱՐՋԵԱԼ ԳԱՐՆԱՆ

Ի կէտ գարնան եղանակին
Ճօշար պիւլպիւլ տէշէր տէրտին, ո՛հ,
Զայս ասելով շըրջի յայգին.
Վա՛րդ, վա՛րդ, նազելի վարդ,
Քանի՞ ողբամ ես լալագին,
Տիւանէն օլմուշէմ սէնին:

Պահօղ վարդին, ով այգեպան,
Վարմը պէն կիպի կիրեան, ո՛հ,
Որ հառաչմամբ ասեմ զայս բան.

Վա՛րդ, վա՛րդ, նազելի վարդ,
Քանի՞ ողբամ ես լալագին,
Մէֆթունին օլմուշէմ սէնին։

Ամառնաբեր գարունն էհաս,
Պահար օլտի Ջէվլէնտի եաս, ո՛հ,
Ո՞ւր թաքուցին ըզքեզ, ո՞ւր կաս.
Վա՛րդ, վա՛րդ, նազելի վարդ,
Քանի՞ ողբամ ես լալագին,
Տիւանէն օլմուշէմ սէնին։

Ղեղի է ինձ միշտ կերակուր,
Գուշլար իչրէ զարիմ մէշհուր, ո՛հ,
Յո՞ր վայր գըտից կամ յո՞ր բըլուր
Վա՛րդ, վա՛րդ, նազելի վարդ,
Քանի՞ ողբամ ես լալագին,
Մեֆթունին օլմուշէմ սէնին։

Տեղեակ տեղոյդ չեմ թէ ո՞ւր է,
Հապեր եօք պու զարուրէ, ո՛հ,
Նայիմ յայգին, զի թափուր է,
Վա՛րդ, վա՛րդ, նազելի վարդ,
Քանի՞ ողբամ ես լալագին,
Տիւանէն օլմուշէմ սէնին։

29

Գարունն եկեալ, անուշ հովերըն հրընչեցին,
Սիրով վառեալ երեկ պիւլպիւլն ի յայգին,
Ի դէմ վարդին եղանակէր լալագին.

Բացվի՛ր, ի՛մ նազելի,
Տեսոյդ կարօտ եմ, կարօտ եմ.
Զարթի՛ր, ի՛մ աննըման,
Գեղոյդ կարօտ եմ, կարօտ եմ:

Գիշերն էանց, առաւօտն երևեցաւ,
Արևն ահա յարևելից մօտեցաւ,
Ցերեկոյէն ի վեր սրտիկս հալեցաւ.
Բացվի՛ր, ի՛մ նազելի,
Տեսոյդ կարօտ եմ, կարօտ եմ.
Զարթի՛ր, ի՛մ աննըման,
Գեղոյդ կարօտ եմ, կարօտ եմ:

Գերի լինիմ քո ամէն մէկ տերևուն,
Քէնէ ի զատ ինձ ո՛չ այլ ինչ երևուն,
Չի՛ տար ինձ լոյս առանց քո՝ լոյսն արևուն.
Բացվի՛ր, ի՛մ նազելի,
Տեսոյդ կարօտ եմ, կարօտ եմ.
Զարթի՛ր, ի՛մ աննըման,
Գեղոյդ կարօտ եմ, կարօտ եմ:

Ես քո փըշովտ թէ բիւր անգամ հարկանիմ,
Ի քո սիրոյդ թէև ի հուր արկանիմ,
Զայն ամէնն ինձ անթիւ բարիք վարկանիմ.
Բացվի՛ր, ի՛մ նազելի,
Տեսոյդ կարօտ եմ, կարօտ եմ.
Զարթի՛ր, ի՛մ աննըման,
Գեղոյդ կարօտ եմ, կարօտ եմ:

80

ԻԲՐ Ի ՊԻՒՊԻՒԼԷ ԱՌ ՎԱՐԴՆ ՈՂՈՐԵԱԼ ԳՈՒՆՈՎ

Սիրով սիրեցելոյդ սիրապէս սիրահարեցայ,
Այ իմ գովելի, լի՛, լի՛,
Գովելի ես, գովելի,
Գովելի, լի՛, գովելի, լի՛,
Սիրահարեցայ:

Գեղով գովեցելոյդ գերապէս խելագարեցայ,
Այ իմ գովելի, լի՛, լի՛,
Գովելի ես, գովելի,
Գովելի, լի՛, գովելի, լի՛,
Խելագարեցայ:

Քոյին բարեձև կերպարանիդ՝ ո՛չ գոյ համեմատ,
Վասն այն ի տեսութիւն քոյին տեսոյդ աւարեցայ.
Այ իմ գովելի, լի՛, լի՛,
Գովելի ես, գովելի,
Գովելի, լի՛, գովելի, լի՛,
Աւարեցայ:

Ծաղկանց թագուհի, իմ գեղեցիկ վարդ գեղափայլուն,
Այ իմ գովելի, լի՛, լի՛,
Գովելի ես, գովելի,
Գովելի, լի՛, գովելի, լի՛,
Գեղափայլուն:

Թըռչնոց խղճալիճ եմ, սիրով խոցեալ խելագարուճ,
ԵՒյ իմ գովելի, լի՛, լի՛,
Գովելի ես, գովելի,
Գովելի, լի՛, գովելի, լի՛,
Խելագարուճ:

Սըրտի իմոյ ըստոյգ սիրելի ո՛չ գոյ բաց ի քէնճ,
Այ իմ գովելի, լի՛, լի՛,
Գովելի ես, գովելի,
Գովելի, լի՛, գովելի, լի՛,
Բաց ի քէնճ:

Ուստի ի սիրոյ քոյիճ կապանս գերի վարեցայ,
Այ իմ գովելի, լի՛, լի՛,
Գովելի ես, գովելի,
Գովելի, լի՛, գովելի, լի՛,
Գերի վարեցայ:

81

ՏԱՂ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Գաւրուճ, գարուճ հասեալ էհաս,
Ե՛կ, սիրելի, ուրախացիր,
Ընդէ՞ր սըգով տրտմիս, հոգաս,
Ե՛կ, սիրելի, ուրախացիր:

Տե՛ս, թէ գիա՛րդ վառեալ վառին
Ծաղկունքն ի գոյնս և շողշողին,
Այգիքն ամէն բերկրաբուրին,
Ե՛կ, սիրելի, ուրախացիր:

Կըճկըճաձայն ջուրքն ընթանան,
Վէտ-վէտ գոլով ծիծաղական,
Լերինք, բլուրք ուրախանան,
Ե՛կ, սիրելի, ուրախացիր:

Պիւլպիւլն ի սէր վարդին վառի,
Սիրով նորին սիրահարի,
Արի՛, արի՛, մօտ մեզ արի,
Ե՛կ, սիրելի, ուրախացիր:

82

ԴԱՐՁԵԱԼ ՏԱՂ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

Ի մերձիլ գարնան այգիք ծաղկեցան,
Բուրաստանքն ամէն գոյնըզգոյն երփնազարդեցան,
Պատըրվակ վարդին ի բաց շըրջեցաւ,
Թրոչունքն ի հոտոյն պարելով արբեալ զմայլեցան:

Առ նախանձ միմեանց ծաղկունքն ի յայգին,
Յիւրեանց կոկոնէն փութապէս ի դուրս դըրդեցան,
Ղևկիոնն եկեալ աւետիս տալով,
Ձայնէ պիւլպիւլին.— Այ խըղճուկ, բաղձանք քո լըցան:

ՅՈՐԴՈՐԱԿ

Ահա գարունն եկեալ էհաս,
Արի՛, պիւլպի՛ւլ, լեր զըւարճադէմ.
Պահար օլտի՝ կիւլշէն իչրէ
Թահտի նիշին օլտի գօնչէ ֆէմ,
Սիրահար, օլտի գօնչէ ֆէմ:

Ո՛հ, հերիք ողբաս,
Ահա գըտեր զանհամեմատ ըզքո տարփալին.
Օլքի անըն տիտարրընըն միշթագըտըր պիւսպիւթիւն ալէմ,
Սիրահար պիւսպիւթիւն ալէմ:

Պիւլպիւլն ասէ.
Բարի եկիր, սիրելի իմ, տարփալի իմ, դու հազար բարի.
Մերհէպա ճօշ կէլտին, է՛յ, կեօյնիւմ սուրուրի,
Էօմրիւմիւն վարի, գովելի, էօմրիւմիւն վարի:

Ո՛հ, թէ բոլոր զգոյս սեպհական
Ինձ պարգևեսցեն ի ժառանգութիւն,
Կեօյնիւմիւն մագաւտի սէնսին,
Սէնտէն էօզկէ միւլքէթ իստէմէմ,
Գովելի, միւլքէթ իստէմէմ:

3—5. Գարուն եղավ, պարտեզի մեջ
Բնակվեցավ վարդաբերանը,
Սիրահար դարձավ վարդաբերանը:

8—9. Նրա տեսին է կարոտ ողջ աշխարհը,
Սիրահար ողջ աշխարհը:

84

ԻԲՐ Ի ՊԻԼՊԻԼԷՆ ԱՌ ՎԱՐԴՆ

Ի դէմ քո, վա՛րդ, քանի՞ լամ,
Արշա չըքտը պու աճիմ,
Պաղատողիս որ ողբամ,
Կեահի էյլէ թէրահիմ:

Այրեցումն իմ անմար է,
Գարիպ միւրղէմ պիչարէ,
Ղամպար սրտիս խաւար է,
Պու տուր պահտի սիահիմ:

Տարմից ծաղկանց ես իշխան,
Կիւլշէն իչրէ սուլթան,
Անընման ես անընման,
Աչը՛լ, էլ րուչի մահիմ:

Սեպհական է ինձ կոծիլ,
Օլ ափսէպ եաշըմ սէպիլ,
Արդէն ցոյց ըզքոյդ տեսիլ,
Եօքսա արդար ֆիզահիմ:

11—12. Ողջույն քեզ, բարի եկար, ո՛վ սրտիս ուրախություն.
Իմաստ իմ կյանքի, իմ գովելի կյանք:

15—17. Դու ես նպատակն իմ սրտի,
Քեզնից բացի չունեմ այլ գանձ,
Իմ գովելի գանձ:

Դախացուցիչ իմ ես դու,
Էլ մահիթապ րուշէն րու,
Է, վարդ, գոչեմ լուիլու,
Պէնիմ սէնսին ֆէրահիմ:

---

2. Երկինք հասավ ողբն իմ այս:
4. Գոնե գթա դու ինձ:
6. Անտուն հավք եմ ես անճար:
8. Այս է բախտս սևավոր:
10. Ծաղկոցների թագուհի:
12. Բացվիր, ո՛վ իմ լուսերես:
14. Գետի պես արցունք թափել:
16. Թե չէ հույսս կհատնի:
18. Ո՛վ լուսատու լուսնյակ:
20. Դու ես իմ խնդությունը:

ԽՐԹՆԱԲԱՆՈՐԷՆ

35

Տիպ ալնմ եղեր պայծառագոյն,
Որ ներ իւրոցն է յոյժ յարգոյն,
Զոր մի արար միակ մի գոյն,
Շըրջանակն ձեղուած գոգոյն:

Ի նոյն ընկատ շող պատարուն,
Շողշողելով երկրափարուն,
Բերես իմոյս երկրի գարուն,
Սառնեալ լերանցն եղեալ տարուն:

Պիտակ միայն հունչ սոսկական,
Ո՛չ զոր ասեմդ՝ է կերպարան,
Այլ լի՛ ունի զնիւթն իսկական,
Ըզլուսազեղ վերնոյն փայլման:



36

ՏԱՂ ԶՊԱՏԱՀՄԱՆՑ ՄԵՐՈՅՍ ԲՆՈՒԹԵԱՆ

Սի՛րտ իմ, ընդէ՞ր տըրտում եղեալ,
Ի հոգ մըտաց վարաձեալ կաս,
Ողորմելի վըշտակրութեամբ,
Հառաչես միշտ, ողբաս և լաս.
Յայսմ աննկայուն աննցաւորիս
Ամենայն ինչ ընդունայն է.
Թէ՛ տըխրութիւն, թէ՛ բերկրութիւն,
Թէ՛ մեծութիւն փարթամական:

Ի փոփոխման գոլով կենցաղս՝
Իւրքն ամենայն են հոսանուտք.
Յաջողմունքն և անյաջողմունքն՝
Երկոքեան են խաբօղք և սուտք.
Ապաքէն իբր ի պատկերի
Շրջագայեալ իզուր խոովիմք
Եւ ո՛չ գիտեմք ո՞ւմ ժողովեմք,
Զոր համարիմք մեզ սեպհական:

Բամեալ մարդիկ լըքին զաշխարհս
Եւ զինչս իւրեանց այլոց թողին.
Գերեզմանք՝ տունք նոցա եղեն՝
Ըստ հոգերգօղ սաղմոսողին.
Ո՞ւր՝ այնոքիկ հզօր իշխանքն,
Որք յաղթեցին զօրաց բազմաց.
Որոց աւուրքն, որպէս ըստուեր,
Անցին և ո՛չ երևեալ կան:

Տիպ տիրական զարդարեցեալ
Յանմահութիւն վիճակեցաք,
Ըզպատուիրանն ո՛չ պահելով,
Ի հող մահու անդրէն դարձաք.
Այլ յետ մահուն յառնեմք դարձեալ,
Զի ընկալցուք ըզհատուցումն.
Արդարքն ի կեանս երկնից գընան,
Մեղաւորքն՝ ի հուրն անվախճան:

37

Ի կիսաւտ սիրելեաց, անհաւատարմաց,
Ի տուտ այս կենցաղոյս ձանձրացաւ անձն իմ.
Յանըստոյգ ընկերաց, լոկ բանիւ յեղբարց,
Ցիրաւի, բընաւին տաղտկացաւ անձն իմ:

Է՛ յիրաւի գործ մեծ, կարի գովելի,
Գըտանել ի կենցաղս ըստոյգ սիրելի.
Ըստանալ և ունիլ ըզմի այնպիսի՝
Ի վաղուց իսկ հետէ տարփացաւ անձն իմ:

Մեծն Աղէքսանդր, որ զաշխարհս խոնարհեցոյց
Թէ ո՞ւր են գանձք քո՝ ոմըն ընդմա հարցոյց,
Որք էին շուրջ գիւրև՝ ըզնոսա՛ եցոյց,
Յորոյ պատասխանին զուարճացաւ անձն իմ:

Զի՛նչ է այլ մեծութիւն համեմատ սըմին,
Իբրու թէ առ հոգի բաղդատի մարմին,
Մինչ գըտից եղկելիս զայնպիսոյն ըզմին,
Յայնժամ ասեմ՝ այժմիկ բարձրացաւ անձն իմ:

38

ՍՓՈՓԱՆՔ ՎՇՏԱՅԵԱԼ ՈԳՒՈՅ

Ա՛նձն իմ, ընդէ՞ր հառաչմամբ ի հոգ մըտաց վարանիս,
Կամ զի՞ ի խոր տըրտմելով, ոգոց հանեալ տառապիս.
Մի՛ լար, մի՛ լար, մի՛ հոգար,
Այս ամենայն անցանէ:

Յայսմ անցաւոր անկայուն խաբօղ, պատրօղ վայելմանս,
Զոչինչ ունիմք հաստատուն, հիմնաւորս և կայականս.
Մի՛ լար, մի՛ լար, մի՛ հոգար,
Այս ամենայն անցանէ:

Վասն այսորիկ աւասիկ ո՛չ ոք բերկրեալ ո՛չ տըխրի,
Եւ հակընդդէմ յիրաւի ո՛չ ոք տըրտմեալ ո՛չ բերկրի.
Մի՛ լար, մի՛ լար, մի՛ հոգար,
Այս ամենայն անցանէ:

Փարթամաց և տընանկաց, մեծամեծաց և փոքունց
Նմանապէս հանդիպի նոյն պատահումն երկոցունց.
Մի՛ լար, մի՛ լար, մի՛ հոգար,
Այս ամենայն անցանէ:

Բազումք ի յոյժ անպատուից թագ պարծանաց ըստացան,
Եւ շատք փառօք պերճացեալ յիրեանց փառացն ընկեցան.
Մի՛ լար, մի՛ լար, մի՛ հոգար,
Այս ամենայն անցանէ:

39

ԱՒ ԱՅՆ, ԶՈՐ ԳԼԽԱՏԱՒՔԴ ՅՈՒՅԱՆԵՆ

Ո՛վ համայնից փափագելի,
Յինէն՝ վասն է՞ր ի բաց շըրջիս.
Որքան լինիս՝ չե՛ս յագելի,
Յինէն վասն է՞ր ի բաց շըրջիս:

Սիրով քոյին ամենեքին,
Ի բազմազան տեղիս շըրջին,
Ո՛վ գեղափայլ քան ըզլուսին,
Յինէն վասն է՞ր ի բաց շրջիս:

Կայսերական ուշիս պատկեր,
Յարեգական կոչումն ելեր,
Ի խղճոյս զինչ վնաս տեսեր.
Յինէն վասն է՞ր ի բաց շրջիս:

Ի քոյդ բաղձանս. ո՛վ անընման,
Ծընունդք երկրի բևեռեալ կան,
Բազմաց լինիս ասպընջական.
Յինէն վասն է՞ր ի բաց շրջիս:

Ի յիմաստանոց փախչիլ փութաս,
Խոտորնակի առընթանաս,
Յանարժանիցն ո՛չ հեռանաս.
Յինէն վասն է՞ր ի բաց շրջիս:

40

ԱՌ ՄԱՄՈՆԱՅՆ

Ուստի՞ ծընար, ո՛վ բռնաւոր,
Որ քեզ ընդման ո՛չ գոյ յերկրի,
Որ թէ չըտաս դու ձեռն ումեք,
Ո՛չ զօրանայ և ո՛չ բերկրի:

Թէ՛ թագաւորք և թէ՛ կայսերք
Քո օգնելոյդ են միշտ կարօտ,
Իսկ առանց քո՝ է՛ն յոյժ տրկար,
Որպէս արչաւ մի աճարօտ:

Մինչ կորուսիչ ես դու հոգւոց
Եւ ծրնանիս անհուն չարիս,
Բազումք ըզքեզ միջնորդ եդեալ,
Յառաջ բերեն բազում բարիս:

Այնքան սիրով կապին մարդիկ
Քո կապանօքդ և կարկամին,
Որ որքան կապ ձգես նոցին,
Այլ առաւել կապիլ կամին:

Եւ թէ առնուլ ոք կամիցի,
Զայն ըզկապանս յոտից նոցին,
Սըրով թըրով պատերազմին,
Թէպէտ խոցեն, թէպէտ խոցին:

Որք կապանօք քո կարկամին,
Այնք և ըզքեզ ամուր կապեն,
Յանել բանտի ներարգելլով,
Երկաթապատ ամրափակեն:

Ամուր պարիսպ և հաստատուն,
Սարսին ի քէն և սասանին,
Յորժամ ուժով քո զօրացեալ,
Ըզնչին մարդիկ անդ հառաչին:

Որքան սաստիկ կապես ըզմարդն,
Այնքան սաստիկ ուժովանայ
Եւ որքան քև ուժովանայ,
Այնքան երկիւղն աւելանայ:

Երկիւղ քո ուժ բերէ մարդոյն,
Որ զօրանայ, զի երկընչի,
Թուր և դանակ ի գործ ածեայ
Ընդ թըշնամին կու մարտընչի:

Դու, որ բոլոր տիեզերաց
Բազում զօրաց եղեր իշխան,
Տըկար մի ոք ի մարդկանէ,
Առնէ ըզքեզ ոտից կոխան:

41

Ի մէջ երկոքին ներհակաց անկեալ տարաբերիմ գերիս,
Ո՛հ, ո՛հ, տարաբերիմ,
Երբեմըն միոյն, երբեմըն միոյն խղճալապէս, ո՛հ, գերի գերիմ գերիս,
Ո՛հ, ո՛հ, գերի գերիմ:

Այսպէս հանապազ կըրկին դիմաց ունիմ տառապանս,
Ո՛հ, ունիմ տառապանս,
Ուստի յարաժամ անդադար անդուլ գերերերիմ գերիս,
Ո՛հ, ո՛հ, գերերերիմ:

Հոգի իմ ելով, հոգի իմ ելով վերնալին՝ ըզվերինսըն ըղձամ գերիս,

Ո՛հ, զվերինսըն ղղձամ,
Մարմին իմ ելով ներքնայինՙ ըզներքինսըն ղղձամ գերիս,
Ո՛հ, ըզներքինսըն ղղձամ:

Նեղեալ եմ ես ի յերկուց տէրանցՙ գոլով սրգալի,
Ո՛հ, գոլով սրգալի,
Ո՞վ ապրեցուցանիցէ զիս, որ յարակ տառապիմ գերիս,
Ո՛հ, յարակ տառապիմ:

Հաճեալ եմ լինիլ ըստ ներքինը մարդոյն, որ է ոգոյն գերիս,
Ո՛հ, ո՛հ, որ է ոգոյն գերիս,
Հղլու, հընազանդ սուրբ օրինացըն աստուծոյն գերիս,
Ո՛հ, ո՛հ, աստուծոյն գերիս:

Բայց զի տեսանեմ ա՛յլ օրէնըս ի մարմնի իմում,
Ո՛հ, ի մարմնի իմում,
Որ հակառակի օրինացընՙ ընդ որը հաճիմ գերիս,
Ո՛հ, ընդ որը հաճիմ գերիս:

42

ՏԱՂ ՉԿԵՆՅԱՂՈՅՍ ԳԱՆԿԱՏԵԱԼ

Որքան եմ կացեալ ի կենցաղս՝
Հոգք զիս երբեք ո՛չ թողին.
Ո՛չ գիտեմ իւրեանց ախորժակ,
Առ իս երբեք զի՞նչ գըտին,
Զի հանապազ տրտմութեան վիշտք,
Յորդորելով ըզմիմիեանս,
Գան, հասանին առ տառապեալս
Եւ զինեն շուրջ բոլորին:

Հոգք, տառապմունք և նեղութիւնք
Զիս բարեկամս ընտացան.
Ո՛չ գիտացի, թէ ի գերւոյս
Զի՛նչ բարութիւնս ընկալան.
Ո՛հ, թէ որքան յոյժ սիրեն զիս
Եւ ո՛չ երբեք մոռանան.
Մի ըզմիով թևակոխեալ,
Ի վերայ իմ անկանին:

Որպէս ըզբու յաւերակի
Տըխրասէր լեալ հառաչեմ,
Անրախունակ և ցաւաբեր
Պահու դիպեալ հառաչեմ,
Առ բազմութիւն վըշտաց իմոց
Տառապեցեալ հառաչեմ,
Զի համայն թըշւառալից ձէտք,
Զիս ընպատակ արարին:

Հայրն իմ երբ զայս տաժանուտ կեանս
Յակամակամս ընկալաւ,
Նոյն և ինձ եղկելի որդւոյս
Անտի փոխաբերացաւ,
Ուստի բոլոր տըխրաբեր զօրք,
Զանազանիւ սուսերաւ,
Ի խոցելոյ ըզմաշեցեալս
Ո՛չ մի երբեք դադարին:

43

Իմ աճիրաւ դատաւորըն քաղաքիս
Ո՛չ իրաւամբ վարեալ ընդ իս դատ առնէ.
Թողեալ ի կամս իւր զախորժակն իմ ի յիս,
Որ յամենայն բարւոյ զիոգիս զատ առնէ:

Զգեղեցկութիւն հոգւոյ իմոյ զառաջին
Յինէն ի բաց կողոպտելով՝ գողըն հին,
Եւ ոչ այնու շատանալով տակաւին,
Զմեղաց որակըն իւր յոգիս խատ առնէ:

Թէպէտ առի հրամանՙ կոխել զօձըն չար,
Բայց ես կամաւս իմ արարի զիս տըկար,
Ուստի և նա հըզօր գտեալ ի յիս յարՙ
Ըզպարտանոցըն ի վերայ իմ զատ առնէ:

Մինչ ըզբարին խորհիմՙ ընդ իս մաքառի,
Իբրու սաստիկ հուր բորբոքի և վառի,
Իսկ զիջանէ և բարկութիւն ըսպառի՝
Յորժամ աննձն իմ զբարին թողեալ վատ առնէ
Եւ առաւել հանգչի՝ յորժամ շատ առնէ:

44

Թըշնամիքըն աննձինս, որք պատեցին զիս,
Լեզուաւ ևեղգաւորաւ նախատեցին զիս,
Նախատեցին զիս.

Արի՛, տէ՛ր իմ, արի՛ ի յարդարութիւն,
Դատեա՛, տե՛ր, զայնոսիկ, որք դատեցին զիս
Եւ ատեցին զիս:

Ցարեաւ ի վերայ իմ ստագոյն վկայք,
Որպէս սուրբ զօծելոյդ՝ հնոյն քահանայք,
Հնոյն քահանայք.
Լի՛ց զերեսըս նոցա արհամարհանօք,
Դատեա՛, տէ՛ր, զայնոսիկ, որք դատեցին զիս,
Եւ ատեցին զիս:

Բացին ի վերայ իմ ըզբերանս իւրեանց,
Առ ի խածատել զիս խրախուսեան միմեանց,
Խրախուսեան միմեանց.
Մի՛ լռէր, տէ՛ր, յինէն, մի՛ բացեայ առնիր,
Դատեա՛, տէ՛ր, զայնոսիկ, որք դատեցին զիս,
Եւ ատեցին զիս:

Զոր ոչն գիտէի՝ ասէին զինէն,
Եւ զոր ո՛չ գիտէին՝ խօսեին զինէն,
Խօսէին զինէն.
Ո՛վ, որ քննես զմիտս և զերիկամունս,
Դատեա՛, տէ՛ր, զայնոսիկ, որք դատեցին զիս
Եւ ատեցին զիս:

Այրեցին զտաճար սրբութեանդ քոյ,
Պղծեցին ըզխորան անուան քո սրբոյ,
Անուան քո սրբոյ.
Որ ասացեր. «Ի՛մ է վըրէժխնդրութիւն».
Դատեա՛, տէ՛ր, զայնոսիկ, որք դատեցին զիս
Եւ ատեցին զիս:

Սիրոյդ կապեցայ,
Գեղոյդ պատրեցայ,
Ով կենցաղ, իմ սուտ բարեկամ,
Ունայն վարեցայ:

Իզուր խոովեցայ,
Սգոտի դատեցայ,
Վասն անցաւորիդ եղկելիս,
Հալեալ մաշեցայ:

Հոգօք ցնորեցայ,
Խոտոր գլորեցայ,
Ի հրապուրանաց քոց գերիս,
Առեալ խմորեցայ:

Քանի խաբեցայ
'Ի ի քեզ յարեցայ,
Բաց ի վընասէ՝ ողբալիս
Ոչինչ շահեցայ:

Արդ զոր խօսեցայ,
Ստոյգ բարբառեցայ,
Ուրեմն ապա յոյժ յիրաւի
Զքէն գանկատեցայ:

46

Գերիս գերեալ գոռամ, գոչեմ,
Աղաղակեմ, լամ, հառաչեմ, ամա՜ն,
Կամիմ լինիլ, աճա ո՛չ եմ,
Այո՛, այո՛, այո՛, եղէ եղկելի, եղկելի:

Լինիմ, զոր ինչ ոչն կամիմ,
Թէպէտ կամիմ՝ զոր ո՛չ լինիմ, ամա՜ն,
Ահա այս է, որ կողկողիմ,
Այո՛, այո՛, այո՛, եղէ եղկելի, եղկելի:

Բանականն ընտրել ո՛չ ունի,
Միջինն՝ ի վեր նայիլ չունի, աւա՜ղ,
Ցետինն՝ ըզներհակն ընդունի,
Այո՛, այո՛, այո՛, եղէ եղկելի, եղկելի:

Կառավարն է յոյժ անգիտակ,
Խոտորի միշտ յաջ և յահեակ, աւա՜ղ,
Թողու զլծեալ ձիսն անսանձակ,
Այո՛, այո՛, այո՛, եղէ եղկելի, եղկելի:

Նաւուղիղն, որ նաւ ուղղիչ է,
Ի վայր անկեալ խոր կու նընջէ, ամա՜ն,
Քամին ներհակ կու հնչհնչէ,
Այո՛, այո՛, այո՛, եղէ եղկելի, եղկելի:

Ի սկզբանէ հոգւոյս ոսոխն աղտեղի
Զկեղրն մեղաց տայ՝ ի հոգիս բոր առնէ:

Եւ ոչ յագի մի և երկու առնելով,
Այլ հաճապազ կըրկնակըրկնէ, զոր առնէ:

Եւ մինչև ի միտս իմ գամ գերիս եղկելիս,
Զըղջումն իմ ուժգնակի յաչերս թոր առնէ:

Հասցէ, տէր իմ, յողորմելիս շրնորհ քո,
Որ զիմ ընտան սև ագռաւունս լոր առնէ:

Գիտէ ըզքո հաճապազորդ ողորմիլդ,
Այն, որ ի՞շելն ըզքոյդ բարիս խոր առնէ:

Ոմն ըզխաղողն ազռխ առնէ ի՞մ այգւոջ,
Ոմն ըզտատասկն յօրինեալ ծոր առնէ:

Մինչ կամիցիմ ի վեր հայիլ բանականս,
Եղծանելիս զիմացականս կոր առնէ:

ԱՒՐ ՋԳԱՅՈՒԹԻՒՆՍ ՄԵՐ ԵՎ ԱՅԼ ՄԱՍՈՒՆՍ

Զարմանալով զարմացայ ես ի մըտի,
Զի բընաւ ինչ ձեզ ընմանի այլ ոչ գըտի,
Այլ զի այդքան ունիը միաբանութիւն,
Մինչ ունիք գործով յոյժ զանազանութիւն:

Համակամեալ համաշաւիղ ընթանայք,
Ներհակ երբէք դուք իրերաց ո՛չ գընայք,
Որք մինչ պիտոյանայք միմեանց՝ նոյն ժամայն,
Ո՛չ յամէք բընաւին քթթել մի ակաւ:

Մինն ի ձէնջ եթէ լինիցի վշտակիր,
Ընդ ընմա և միւսքըդ լինիք մշտակիր,
Որպէս աճօթն ընտիր տայ զձեզ օրինակ,
Յորդորել ըզմեզ լինիլ ձեզ օրինակ:

Մինչ մի անդամն ասէ ի մեզ վըշտանայ,
Վըշտանան ամենայն անդամքն ընդ ընմա,
Երանի այն եղբարցն, որ ձեզ ընմանին,
Զի նոքա միայն ժառանգեն զերանին:

Զինչ ընման այն եղբարցն և այն ընկերաց,
Որ նման ձեզ լինին օգնիչք իրերաց,
Որոց Դաւիթ զարմանալով տայ ըզգով,
Զի բարի կամ զի վայելուչ ասելով:

Յօրինողին ըզձեզ այդպէս միաբան,
Զարմանալի, սքանչելի, զարմանազան,
Վայել է պատիւ և երկրպագութիւն,
Որ միայն է անքննելի միութիւն:

49

Դիմեալս առ քեզ տաժանելիքս բողոքեմ արտասուելով,
Պատմեմ զանցանքս իմ ակամայ և օգնութիւն խնդրելով,
Զախորդութեան հանդիպեցայ կերպիւ-կերպիւ փորձելով,
Փրկիչ, փրկեա ի փորձանաց, որ փրկողդ ես փորձութեանց:

Մատնեցայ ի բարեկամաց, որք ջատագով իմ էին.
Ուրախութեամբ ի խրախճանս համարձակ մտանէին,
Պայծառ դէմօք զիս խաբէին և նենգութիւն խորհէին,
Փրկիչ, փրկեա ի փորձանաց, որ փրկողդ ես փորձութեանց:

Զրպարտեցայ իբրև շուշան, որ ի ծերոց ատենին,
Ժողովեցան մերձաւորքն իմ, այլ և այլ վկայէին,
Բաժակ մահու խոստանալով, կենաց զրկել կամէին,
Փրկիչ, փրկեա ի փորձանաց, որ փրկողդ ես փորձութեանց:

Լաւ է յայտնապէս թշնամին, քան զբարեկամ նենգաւոր,
Պարտ է փախչել բարեկամաց, որ ձևանայ կեղծաւոր,
Նա առաւել խածանէ զոք քան զօձն թիւնաւոր,
Փրկիչ, փրկեա ի փորձանաց, որ փրկողդ ես փորձութեանց:

Արդ զգաստացիր, ով Բաղդասար, զարթիր ի խորին քնոյ,
Զգեա ի տէր ըզհոգսն քոյ, գոհանալով փառս տու,
Հայցեա թողութիւն փորձողաց, նմանելով փառս տու,
Փրկիչ, փրկեա ի փորձանաց, որ փրկողդ ես փորձութեանց:

50

Որ արարեր զիս ի պատկեր
Քո և այժմիկ արարեր ծեր,
Ի յանդըգնոց խորոց ի վեր
Բերել կարես՝ թէ կամեցաս:

Ո՛վ լըցուցիչ մերոց կարեաց,
Որ կամեցօղ ես դու բարեաց,
Անթիւ անհուն իմոց չարեաց,
Ներել կարես՝ թէ կամեցաս:

Որ արարեր զիս ի հողոյ,
Անհրնարին քեզ ինչ չըգոյ,
Դու ի քարանց՝ սեռս արդարոյ
Սերել կարես՝ թէ կամեցաս:

Որ և առնել վերին գներքինս,
Եւ առաջին՝ հուսկ ըզվերջինս,
Զանթիւ գրեալ ըզմեղս անձինս
Ջնջել կարես՝ թէ կամեցաս:

Քո զամենայն սրբոց մաղթանս
Միջնորդ առնեմ քեզ յոյժ խոստանըս
Որ ըզլերանց հանգոյն յանցանս
Ջըրել կարես՝ թէ կամենաս:

Չիս զանարժանըս գըթութեան
Առնել անոթ ողորմութեան,
Եւ ի կենաց քո դըպրութեան
Գըրել կարես՝ թէ կամենաս:

51

ԱՌ ՆՄԱՆԻՍՆ ԻՄ

Ի վերայ կարգապանծ անառակ դասուց,
Ո՞րպիսի աղէտիւ ողբս յօրինեցից,
Թաթաւեցեալ չարեօք խղճալի պարուց՝
Ո՞րպիսի հառաչմամբ աւաղ կարդացից:

Անուանեցան աղբիւրք սուրբ եկեղեցւոյ,
Արբուցանել հոսմամբ գետոյն կենդանւոյ,
Եօթնարփեան պարգևաց հոգւոյն աստուծոյ,
Ջոչխարսըն բանաւոր՝ ըստ գըրոյն ասից:

Անձանց ժողովրդեանն աչք յորջորջեցան,
Զի ըզնոսին մեղանս լայցեն անխափան,
Թափելով զարտասուս միածնին ըսման՝
Ի վերայ ողբալի մեղաւոր խմբից:

Տէրունեան տաճարին նոքա հայելի,
Ջի հօտ նոցա անթարթ առ նոսա հայի,
Իսկ նոքա աղտեղեալ շրջին զազրալի՝
Ի խաւարի պղտոր վարուք ոեշտալից:

52

ԱՒ ԵՂԿՈՒԹԻՒՆ ՀՈԳՒՈՅՍ

Գերի եղկելի, ողբալի, ո՜հ,
Յիրաւի լալի եմ, լալի.
Ծանրագոյն վըշտօք ցաւալի, ո՜հ,
Ե՛մ վիրաւորեալ, ե՛մ վիրաւորեալ.

Ո՜հ, վիրաւորեցեալ գերիս,
Ինձէն ինձ խորխորատ բացի,
Ի դուռըն մաճու գընացի, ո՜հ,
Անզօր և անճար մընացի:

Երգելով ինձ երգ ողբական, ո՜հ,
Ողբացէք զանձն իմ պարտական,
Հէնք չարին զինն պատեցաւ, ո՜հ,
Ե՛մ վիրաւորեալ, ե՛մ վիրաւորեալ.

Ո՜հ, վիրաւորեցեալ գերիս,
Ինձէն ինձ խորխորատ բացի,
Ի դուռըն մաճու գընացի, ո՜հ,
Անզօր և անճար մընացի:

Ռամբ զօրաց նենգօղ փիշապին, ո՜հ,
Պատրանօք զիս ի մէջ առին,
Գանալից զանձն իմ արարին, ո՜հ,
Ե՜մ վիրաւորեալ, ե՜մ վիրաւորեալ.

Ո՜հ, վիրաւորեցեալ գերիս,
Ինձէն ինձ խորխորատ բացի,
Ի դուռըն մահու գընացի, ո՜հ,
Անզօր և անճար մընացի:

Ի կենաց ուղղոյն թիւրեցայ, ո՜հ,
Իմ կամաւս ի մահ վարեցայ,
Սաստկապէս կոփահարեցայ, ո՜հ,
Ե՜մ վիրաւորեալ, ե՜մ վիրաւորեալ.

Ո՜հ, վիրաւորեցեալ գերիս,
Ինձէն ինձ խորխորատ բացի,
Ի դուռըն մահու գընացի, ո՜հ,
Անզօր և անջուր մընացի:

58

ԱՌ ԵՂԿՈՒԹԻՒՆ ԱՆՁԻՍ ԻՄՈՅ

Ի կենաց նախկին փայելմանց
Զըրկիցին զիս, զըրկիցին,
Այնորիկ, որք ի կապանս այս
Պըրկիցին զիս, պըրկիցին:

Յոր քահանայն և զևտացին
Հանդիպեալ զանց արին, աւա՛ղ, ո՛հ,
Եւ ո՛չ ի մերձ, ի մահ ցաւոյս
Փըրկեցին զիս, փըրկեցին:

Ի փափկագոյն կենաց վայրէն
Հանեցին զիս, հանեցին,
Եւ յանապատս յոյժ հեռագոյնս
Վանեցին զիս, վանեցին:

Ոչ բաւական վարկանելով
Ըզխողճալի մերկութիւնս, աւա՛ղ, ո՛հ,
Յոյժ չարաչար հարկանելով
Գանեցին զիս, գանեցին...

54

ԴԱՐՁԵԱԼ Ի ՆՈՅՆ ՄԻՏ

Անկեալ ի ձեռս աւազակաց խոցեցա՛յ գերիս,
Ահա՛, վասն այն աղաղակեմ, հառաչեմ և լամ,
Ահա՛, վասն այն կողկողալով միշտ գոչեմ և լամ.
Նեղագոյն վըշտօք պաշարեալ կոխեցայ գերիս,
Ահա՛, վասն այն աղաղակեմ, հառաչեմ և լամ:

Կիսամեռ անկեալ թաւալիմ խըղճալի դիմօք,
Ձի յոտից մինչև ցգլուխ իմ լցեալ եմ վիրօք,
Եղկելի եղեալ տառապիմ ցաւալի կենօք,
Ահա՛, վասն այն աղաղակեմ, հառաչեմ և լամ:

Ասպատակաց հանդիպեցայ, մերկեցին զանձն իմ,
Ի գերանճառ խրնդութենէ զըրկեցին զանձն իմ,
Լարս ոտից իմոց ձըգելով ընկեցին զանձն իմ,
Ահա՛, վասն այն աղաղակեմ, հառաչեմ և լամ:

55

ԱՌ ՎԱՐՈՒՅՍ ՎԱՏԹԱՐՈՒԹԻՒՆ

Իմ անչարմար արարքս յորժամ ի միտ գան,
Սասանին ոսկերք իմ, սարսին և սոսկան,
Թէ զի՛նչ, արդեօք տալոց ինձեմ պատասխան,
Յորժամ աւետ արքայն գայ ի դատաստան:

Ի պատկեր արարչին իմոյ ըստեղծայ,
Եւ ըզբնութիւն բանականի ընկալայ,
Բայց ի պատկեր անասնային փոխեցայ,
Զնոցինն իսկ բերելով յիս ըզկերպարան:

Ի պարարտոջ վայրի տընկեցայ այգի
Եւ փոխան խաղողոյ փուշ ընծայեցի,
Ուստի զտընկօղն այգւոյս յոյժ տըրտմեցուցի,
Վասն որոյ զենէն միշտ լինի ամբաստան:

Ի յամենայնի կեանս իմ թիւր ընթանալով
Եւ ո՛չ երբէք ուղիղ շաւղօք գնալով,
Կենաց պատուիրանին անկուր մընալով,
Յանցանք իմ քան զթիւս ի վեր բազմացան:

Ի մանկական տիոյս քանի զարգացայ,
Ի խելագար գնացից ո՛չ ըզգաստացայ,
Այլ նոր, ի նոր ի մեղս անկեալ գլորեցայ,
Լացցեն համայն ստեղծուածք զանձն իմ պարտական:

56

ԴԱՐՁԵԱԼ ԱՌ ՎԱՐՈՒՅՍ ՎԱՏՈՒԹԻՒՆ

Իժըս եղեռնայինն, օձըս ժանտական,
Իսկականի բարւոյդ՝ չարաչար մեղայ.
Ծառայս սրինալական և տարագրական,
Արքայից արքայիդ՝ անդադար մեղայ:

Պետրս մեղաւորաց, որդիս կորստեան,
Զարդըս դըժոխայինն, ժառանգս գեհենեան,
Վերնականի լուսոյդ անճառ խընդութեան,
Ես կափուցեալ աչօք՝ անհամար մեղայ:

Անկընս արատատես ունիմ ըզգերան,
Ըստ ամենատեսիդ յանդիմանութեան,
Ո՛չ կարեմ ընկատել զինչ բարոյական,
Վասնորոյ, եղկելիս, միշտ և յա՛ր մեղայ:

Ղեղիս դառնատեսիլ, դիս ապարասան,
Ցանցառացս իմ ըզթիւ՝ չեղէ խոստովան,
Ուստի ըստ դիտողիդ յայտնաբանութեան,
Փարիսեցւոյն և ես, հաւասար մեղայ:

Տունկըս տատասկաբեր անարդիւնական,
Անիծեալ թըզենւոյն հարազատ ընտանի,
Պատրաստելով միշտ զիս տապարին հատման,
Ամենայն յանցանօք ժանտաբար մեղայ:

57

ՋՂՋԱԿԱՆ ՁԱՅՆԻ

Ի հարսանիս որդւոյ քոյին կոչեցայ,
Բայց աղտեղի գտայ, մեղա՛յ, տէ՛ր, մեղա՛յ,
Պատկանի հարսանեաց հանդերձ չըզգեցայ,
Զազիր երեւեցայ, մեղա՛, տէ՛ր, մեղա՛յ:

Անդնդայնոց յարակցեցեալ օթեցայ,
Իբր ըզպաճար մոլորեցեալ շըրջեցայ,
Զօղակօրէն ի ծով մեղաց ծըփեցայ,
Յորում ընկըղմեցայ, մեղա՛, տէ՛ր, մեղա՛յ:

Տըտամբ վիշապ օձին յերկիր քարշեցայ,
Որոյ ի շընչմանէն մաճու գերեցայ,
Անկեալ և կործանեալ տան ընմանեցայ,
Վասըզգի քակտեցայ, մեղա՛յ, տէ՛ր, մեղա՛յ:

Սերմամբ խաւարայնոյն կարի աճեցայ,
Տատասկաբեր անդոյ հանգուռնակեցայ,
Այգի անցօղարբու եղել տօթեցայ,
Ուստի խոպանացայ, մեղա՛յ, տէ՛ր, մեղա՛յ:

Բակիակ դիոյս կորեաւ, ուստի թալկացայ,
Անշէջ բորբոքելոյն ձիւթ պատրաստեցայ,
Է անյիշաչար տէ՛ր, գըթա՛, մոլեցա՛յ,
Եւ յոյժ թափառեցայ, մեղա՛յ, տէ՛ր, մեղա՛յ:

58

ՎԷՊ ԿՐԻՅ ՀՈԳԻՈՅՍ...

Ի մամռապատ գոլով գըբի,
Ի կեդարեաձն իմ վըրաձի:

Պախարակեմ յաւէտ ի դէպ,
Պըղերգ ծառայս բազմավրէպ:

Աղտուձակիս ելով ի սմա,
Առ ձըշկաճեալ լինիմ աճա:

Ղենջակ ցըխոտ և տըղմաթաղ,
Ղոմոսական եմ և պատաղ:

Տարագրեցեալ եղկելիս վատ,
Տիրամերժիցն եմ համեմատ:

Այլ դու, փըրկիչ, օժանդակեա՛,
Աջովդ առ քեզ զիս առ ձըգեա՛:

Սիւն ամրութեան սըրտիս Յիսուս,
Սորօք հարալ ի մէնջ ծովուս:

Ալէտանչիս ըզքեզ, յայտնեա՛,
Այս նաւաբէկ գերոյս օգնեա՛:

Բահվար կոհակքըն անհամար,
Բուպ ինչ ո՛չ տան երբէք դադար:

Էից հանուրց էարար է
Էացուցեա զանձն իմ՝ յոր չէ:

59

ԴԱՐՁԵԱԼ ՎԷՊ ԿՐԻՑ ԵՂԿԵԼԻ ՀՈԳԻՈՅՍ

Ի կարօն լեալ ապօժանդակ,
Զընչմամբ խըռիմ նապաւառի:
Պարաւանդիմ նապաստանդակ,
Յոր մութն ընդ իս յար մաքառի:

Արկած վըհատ և սարս խիթման,
Ջիրդ փանաքւոյս փաստ պակուցման,
Ղորդի ղաքիս գիհաժաման,
Յորում խարոյկ տաքուն վառի:

Տաղտխամած ազերբ կարկամ,
Ջելըս տինիս ո՛չ ինչ խոկամ,
Աղկաղկ վսեհ արտալած կամ,
Իբր ըզպանար որ թափառի:

Սարէմէշիւ շամանդաղին,
Փողոտեցայ ձիւր մետաղին,
Արբեկ ճարմամբ եղէ շաղին,
Սարաս դիոյ տըբարբառի:

Րաչ ճակադարձ զիս աձուաձել,
Չէ ապիդէպ, քաւ թէ ընտել,
Է ձեր թըւոյս լալ առակել
Չեղեռաձս իմ վիպմամբ տառի:

60

ԴԱՐՁԵԱԼ Ի ՆՈՅՆ ՄԻՏ

Ի մեծ տագնապի
Ասձն իմ տառապի,
Չերծիլ ըշտապի,
Քաւ զի յոյժ տապի,
Պարաձակապի,
Ի կապ կողապի,
Գերի վիշապի,
Ի խոր վիրապի:
Ասդ ի սարսափի,
Յորդ խարոյկ թափի,
Ուստի ի լափի,
Տեձչամ տարափի:
Ղեւոյձ ի քափի,
Իբր ի՝ մըրափի,

Հար իմ գաղաբի,
Վիշտ իմ ո՛չ չափի։
Սարսուռ խիթալի,
Ո՛չ մոռանալի,
Զինև ծաւալի,
Ի գէհ տըղմալի,
Ապառնին գալի,
Է ինձ ողբալի,
Զի գերիս լալի,
Չունիմ յուսալի։
Րասդիսն չարի,
Եմ ներ խաւարի,
Նըմաւն յիմարի
Եւ խելագարի,
Է՛ աստուած բարի,
Գըթած ես կարի,
Մի՛ տար զիս, արի՛
Հըրոյն աւմարի։

61

ԱՒ ԴԱՏՈՂՈՒԹԻՒՆ ԽՂՃԻՍ

Ի միտ բերեալ զիմ արարմունս
Պատկառիմ գերիս, պատկառիմ.
Եւ հիմանամ, թէ տակաւին՝
Բարբառիմ, ո՛հ, բարբառիմ։

Ներսիրելեաց թէպէտ դիմօք
Ծիծաղեմ գերիս, ծիծաղեմ,
Բայց ի ներքուստ խոր հառաչմամբ
Նըւաղիմ, ո՜հ, նըւաղիմ:

Ձաղմամբ մըտացս իբր երկաթով
Հարկանիմ գերիս, հարկանիմ,
Եւ ի տըխրուն աւհրնարիս
Արկանիմ, ո՜հ, արկանիմ:

Որմբաճարեալ քարամբք խըղճիս
Կոշկոճիմ գերիս, կոշկոճիմ,
Եւ յիշելով ըզչարսն իմ
Մորմոքիմ, ո՜հ, մորմոքիմ:

Երբեմն, երբեմն ի միտս եկեալ
Հառաչեմ գերիս, հառաչեմ,
Եւ անյարմար արարմունս իմ
Յիշելով՝ ամաչե՜մ, ո՜հ, ամաչե՜մ:

Ղոմոս և վա՜յ կարգեալ հեքոյս,
Յորդորիմ գերիս, յորդորիմ,
Եւ ըմդ աւձիս իբր ըմդ ներհակս,
Ոգորի՜մ, ո՜հ, ոգորի՜մ:

Ո՜չ կալով, բայց առ ի նոյն միտս
Փոփոխեմ գերիս, փոփոխեմ,
Եւ փութապէս աւդրէն իսկոյն,
Խոտորիմ, ո՜հ, խոտորիմ:

Ի իծեալ ըզմիտս իմ ի յանցանս
Շաղախեմ գերիս, շաղախեմ,
Եւ զիս յանթիւ եղեռնութիւնս,
Թաթաւի՛մ, ո՜հ, թաթաւի՛մ:

Կոյս գերաճքիծ ի քեզ դիմեալ՝
Պաղատիմ գերիս, պաղատիմ,
Մի՛ թողուր զիս գընալ՝ ընդոր
Կամիցի՛մ, ո՜հ, կամիցի՛մ:

62

ԱՌ ՎԱՏԹԱՐ ՆՄԱՆԻՍՆ ԻՄ

Լալով երգեմ երգ հառաչման իմ ընմանեալն ի վերայ,
Որք անասնոց հանգուցացեալ անմըտանան յարակայ.
Արտելանել ո՛չ ախորժեն ի տըմարդի գնացից,
Դէպի գինքեանս կապեալ ունին թիւրաշաւիղ ընթացից:
Լայնելով զիւրեանց ախորժակն՝ ուր կամին, անդ ընթանան,
Զերկնային փառսն ո՛չ յիշելով, ինքնակամ անդրնդանան:
Իբրև ըզմարդ գոն երևին, շրջագային, բարբառին,
Բայց ի բարուց քառոտանեաց ո՛չ բնաւ զանազանին:
Երթևեկս առեալ խոտորին յերկնաշաւիղ քայլմանէն,
Եւ ընտեմացեալ գըտանին ի գերածագ փայլմանէն.
Ընձեղեն ըզհինջն եղելութեան և զիր ինչ ո՛չ գըտանեն,
Ի դատարանն այն աճապին, որպէ՞ս արդեօք մըտանեն:

68

ԱՌ ՄԱՅՐՆ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ

Պաղատելով կարդամ առ քեզ,
Լո՛ւր գերելոյս ողորմելւոյս,
Վիրօք լըցեալ աղաղակեմ,
Հա՛ս ի թիկունս և լե՛ր ինձ յոյս,
Յո՛յս, Մարիամ կոյս:

Առ ոտս անկեալ երանուհւոյդ
Յառաջանօք հայցեմ ի քէն,
Հոսանք մեղաց պատիցին զիս,
Հա՛ս ի թիկունս և լե՛ր ինձ յոյս,
Յո՛յս, Մարիամ կոյս:

Ղեկն իմ, ահա, խորտակեցեալ,
Կամ տատանեալ տարուբերեալ,
Ո՛վ յարաժամ օգնական իմ,
Հա՛ս ի թիկունս և լե՛ր ինձ յոյս,
Յո՛յս, Մարիամ կոյս:

Անճառելոյ հօր միածին,
Կաթնամատոյց կոյս գերաբիծ,
Գաղտնաձիգ ձետիւք խոցեցայ,
Հա՛ս ի թիկունս և լե՛ր ինձ յոյս,
Յո՛յս, Մարիամ կոյս:

Տուն կենաց, պարծանք համայնից,
Անհամեմատ խորան լուսոյ,
Անճառանչ գիշերն էհաս ինձ,
Հա՛ս ի թիկունս և լեր ինձ յոյս,
Յո՛յս, Մարիամ կոյս:

64

ԸՍՏ ԽՐԱՏՈՒ ԿԵՐՊԻ

Ի ցանկալեաց անցաւորես մի խաբիր անձն իմ, մի՛ խաբիր,
Վասընզի յոյժ վաղվաղակի անցանէ, անցանէ,
Զայս մոռցեալ զանանց բարիս ըստացիր,
Զի վայելչութիւնս այս խոտոյ նըմանէ:

Պարսաւելիս այս խընդութիւն հեռեանայ,
Որ սիրիցէ զայս՝ առ յետոյ զըղջանայ,
Բայց զի՞նչ օգուտ մինչ ժամանակն ո՛չ մընայ,
Քանզի զանցեալ աւուրս ո՛չ ոք գըտանէ:

Աստանօր աստ մինչ ուրեմն ես ի մարմնի,
Զանազ լինիլ քոյ արարչին հաճելի,
Զի ըստ բանի սաղմոսողին յիրաւի՝
Հոգի որ ելանէ, այլ ո՛չ մըտանէ:

Ղեղագոյն է վայելչութիւնս աշխարհի,
Բայց պատրելով յո՛յժ քաղցրագոյն երևի,
Սակայն յորժամ իւր դառնութիւնն յայտնեացի,
Յայնժամ ծանիցես, թէ որքա՛ն խոտան է:

Աւեր քաղաք եղև աճձն իմ ի թըշնամեաց պատերազմէն,
աւա՛ղ,
Յորում և ո՛չ տեղի մի բընաւ բընակելոյ մընալով շէն,
աւա՛ղ,
Յորում և ո՛չ տեղի մի բընաւ բընակելոյ մընալով շէն:

Հիմունք նորին քայքայեցան, բոլոր պարիսպք նորա աւկան,
Քար ի քարի վերայ ուրեք թէ գըտանել նայիս՝ ո՛չ կաւ,
աւա՛ղ,
Քար ի քարի վերայ ուրեք թէ գըտանել նայիս՝ ո՛չ կաւ,
աւա՛ղ:

Նաբուզոդոնոսոր Բաբիլոնին և անմարմին զօրքըն նորին,
աւա՛ղ,
Զբոլոր քաղաքս ի բուն հիմանց և ըզտաճարն տապալեցին,
աւա՛ղ,
Զբոլոր քաղաքս ի բուն հիմանց և ըզտաճարն տապալեցին,
աւա՛ղ:

Ի մէջ ուռեաց ներարգելլով զիմաստ բանի խոհականին,
Որ ըզներքինս և եթ տեսեալ՝ չուզի երբէք նայիլ յերկինս,
աւա՛ղ:

Որ ըզներքինս և եթ տեսեալ՝ չուզի երբէք նայիլ յերկինս,
աւա՛ղ:
Համանմանեալ ասիցն ի բանս, զոր իմաստունն երևոցէ,
աւա՛ղ,

Թէ վա՛յ քեզ, ո՛վ քաղաք անբախտ, որոյ արքայն մահուկ ինչէ, աւա՛ղ,
Թէ վա՛յ քեզ, ո՛վ քաղաք անբախտ, որոյ արքայն մահուկ ինչէ, աւա՛ղ:

Ծառայն իբրու տիրօղ եղեալ, տիրօղն անգօր ի վայր մեղկեալ,
Միջինն անլուր եղեալ վերնոյն և ո՛չ ներքնոյն հրամայօղ լեալ, աւա՛ղ,
Միջինն անլուր եղեալ վերնոյն և ո՛չ ներքնոյն հրամայօղ լեալ, աւա՛ղ:

66

ԱՒ ՓՐԿԻՉՆ ԻՄ

Անձն իմ աւ քեզ աղաղակէ, ո՛վ բղծիշկ հոգւոյ իմոյ,
Թշնամին զիս յոյժ խոցոտեաց, ժամ է ինձ ողորմելոյ,
Յամենայն կողմանց վարանեալ ո՛չ գոյ ինձ ոք ապաւէն.
Եղկելի եմ, ողբալի եմ, քո ծառայն եմ,
Մի թողուր զիս, արարիչ իմ՝
Վասն աննպաստ միրոյ քոյ:

Ծով մեղաց զիս ալեկոծեաց, բիւր չարիք զիս պատեցին,
Որպէս ըզնաւ աննաւավար, ուր կամեցան վարեցին,
Կենդանականաս այս զօրութիւն եղև ինձ ղեկ մոլեգին.
Եղկելի եմ, ողբալի եմ, քո ծառայն եմ
Մի թողուր զիս, արարիչ իմ՝
Վասն աննպաստ միրոյ քոյ:

Ի քո անհուն ողորմութիւնդ ապաւինեալ զօրանամ,
Ըզսխալմունս իմ յիշելով՝ հառաչանօք զղջանամ,
Թէև անթիւ են մեղանք իմ, ի գլթոյդ ո՛չ վերջանամ.
Եղկել եմ, ողբալի եմ, քո ծառայն եմ
Մի՛ թողուր զիս, արարիչ իմ՝
Վասն անսպառ սիրոյ քոյ:

Մեղա՛յ քեզ, տէր, մեղա՛յ, մեղա՛յ,
Բիւր չարիս գործեալ, մեղա՛յ,
Անօրինեալ, անառակեալ մայր մեղաց եղեալ եմ, մեղա՛յ,
Քեզ մի երբէք ո՛չ լսելով երկրաքարշեալ մեղա՛յ.
Եղկելի եմ, խղճալի եմ, քո ծառայն եմ,
Մի՛ թողուր զիս, ով քաւիչ իմ՝
Վասն անսպառ սիրոյ քոյ:

67

ԱՒՐ ՆՈՅՆ ԴԱՐՁԵԱԼ

Ի խորխորատ տրղմի մեղաց, գերիս անկեալ թաւալիմ,
Քանի՛ ջանամ, թէ ազատիմ, այլ առաւել ներմղղիմ,
Զաչս իմ աստ և անդ ածելով՝ ո՛չ գըտանեմ ձեռընտու.
Ուստի առ քեզ աղաղակեմ, հառաչեմ, լամ,
Որ միայն ես ապրեցուցիչ, ազատիչ և կեցուցիչ:

Անկեալ ի ձեռս աւազակաց վիրաւորեալ մորմոքիմ,
Բանիւ աղերսել չըկարեմ, կերպարանօքս կողկողիմ,
Ցանցաւորացն որք տեսին զիս, ո՛չ կարաց ոք օգնել ինձ.
Ուստի առ քեզ աղաղակեմ, հառաչեմ, լամ,
Որ միայն ես ապրեցուցիչ, ազատիչ և կեցուցիչ:

Իբրև ըզթըռչուն թևաթափ՝ յերկիր աւնկեալ տագնապիմ,
Թըռչիլ ի վեր ո՛չ կարելով՝ յորսողէն, յոյժ կասկածիմ,
Չի լարեցեալ կաս զինեն շուրջ՝ որոգայթք յոյժ զանազանք.
Ուստի առ քեզ աղաղակեմ, հառաչեմ, լամ,
Որ միայն ես ապրեցուցիչ, ազատիչ և կեցուցիչ:

Որպէս ըզձուկն ի ցամաքի՝ օդատանջեալ տապալիմ,
Ոստոստիմ աւնկանիլ ի ջուրն, ոչ կարացեալ տառապիմ,
Թէ ի սակաւ մի այլ մընայցեմ, մեռանիմ ողորմելիս.
Ուստի առ քեզ աղաղակեմ, հառաչեմ, լամ,
Որ միայն ես ապրեցուցիչ, ազատիչ և կեցուցիչ:

68

ԱՌ ՓՐԿԻՉՆ ԻՄ

Փըրկաւէտ մաճուան քոյ ըզգինս,
Որ աւնկեալ դընիմ յանկողինս,
Ապաքինեա ի չար ախտէս
Լալով աղերսեմ, աղերսեմ, աղերսեմ, ո՛վ,
Առ բըժիշկդ աւնձինս աղերսեմ:

Բամբ չարին գինեն պատեցաւ,
Քաւ զալիս գետոց յորդեցաւ,
Հաս թիկունս, կարող Յիսուս.
Լալով աղերսեմ, աղերսեմ, աղերսեմ, ո՛վ
Առ ինձօր փրկիչդ աղերսեմ:

Կոհակօք բազմօք ծփեցայ,
Բղքաբեր հողմով վարեցայ,
Օգնութիւն ինձ ժամանեա, տէ՛ր.
Լալով աղերսեմ, աղերսեմ, աղերսեմ, ո՛հ,
Առ հոգւոյս ուղղիչդ աղերսեմ:

Ի լերինս եղէ մոլորեալ,
Ի կենաց ուղւոյն խոտորեալ,
Դարձո զիս, ըզմոլորեցեալս.
Լալով աղերսեմ, աղերսեմ, աղերսեմ, ո՛հ,
Առ բարի հովիւդ աղերսեմ:

Չարաչար մեղօք տառապիմ,
Վերնական յուսոյդ պաղատիմ,
Ձմեղանս իմ թող ինձ, Յիսուս.
Լալով աղերսեմ, աղերսեմ, աղերսեմ, ո՛հ.
Առ գըթած ներողդ աղերսեմ:

69

ԱՌ ԱՆՁՆ ԻՄ ԹՇԻԱՌ

Ի քուն մեղաց յամառեցեալ թըմրեցար, աւձձ իմ գերի,
Թըմրեցար և ի բանսարկուէն պարտեցար, աւձձ իմ գերի,
Պարտեցար ներսուտ կենցաղոյս յաւօրէից փափկութեանց,
Փափկութեանցն, որք սնոտիք են, ցաւնկացար, աւձձ իմ
գերի:

Անձն իմ գերի, թիւրաշաւիղ եղեր, արդ, տարտամական,
Եղեր արդ, որպէս ըզնաւակ ղեկաջարդ տարտամական,
Ղեկաջարդ ներ ծովու շըրջիս՝ յոր գընալդ իսկ ոչ գիտես,
Ոչ գիտես, որ ախտի մեղաց գըտար զարդ տարտամական:

Տարտամական լեալ դեգերիս յարաժամ, սևատեսակ
յարաժամ,
Ըստ գոռոզիենս անըզգամ սևատեսակ, յարաժամ,
Անըզգամ ամբարաճաւաճեն, որ ոչ ընտրես ըզբարիս,
Ըզբարիս թողեալ, լինիս միշտ չարակամ սևատեսակ:

Սևատեսակ եղեալ՝ եղեր ծորելոյն րախացուցիչ,
Ծորելոյն և առ ի բարձանց անկելոյն րախացուցիչ,
Անկելոյն, որ թըշնամի է հանապազ քոյդ փրկութեան,
Փրկութեան հոգւոյդ վասըն միշտ տըրտմելոյն րախացուցիչ:

Րախացուցիչ գոլով դարձեալ արարչին գոչեա՛, մեղա՛յ,
Արարչին ճօր՝ փառակցին և էակցին գոչեա՛, մեղա՛յ,
Էակցին այն, որ վասն քոյ եհեղ զարիւն ի խաչին,
Ի խաչին, սիրով բևեռեալ անմահին գոչեա՛, մեղա՛յ:

70

ԱՌ ՎԵՐԻՆՆ ԵՐՈՒՍԱղԷՄ ԵԿԵղԵՑԻՆ ԱՆԴՐԱՆԿԱՑ

Հըրով քո գերիս, ո՛վ դու գերապայծառ երանեալ,
Շըրջիմ, երերիմ, յոյժ դեգերիմ կարի վարանեալ.
Ոտիին քո յարակ կարօտանօք անձկալ ոգի իմ, սէ՛ր իմ,
Բայց զի շատ ունիմ արգելականս գաղտնի դարանեալ:

Թափեալ ի փառաց՝ մոլորական, ղարիպական եմ,
Գովելի պարուց քոց հետագոյն, օտարական եմ.
Սարտուցեալ եղև ի ստեղէ մօրդ տրտմալի անձն իմ, սէ՛ր իմ,
Ձրկեալ ի գառանց՝ ընդ ջոկ ուլիցն եղէ հօրաձեալ:

Գարնան քո գալոյ ինձ ձմեռանն ստորանամ միշտ,
Սըգով լըճանիմ հառաչելոյ գոլով երաժիշտ.
Է ինձ երանի, թէ լինիցիմ րախ ի քո երկիրդ, սէ՛ր իմ,
Յայնժամ քո գեղոյն երգն որ ի յիս լինի բերաձեալ:

Ողորմելի է, որ ո՛չ ի քոյդ յարկի բնակի,
Բամից քո մաքուր սուրբ երամիցդ հեռի գըտանի,
Գեղեցկապարուն քո սրահին խանդակաթ եմ ես, սէ՛ր իմ,
Իմ գոլով ի յայս թշուառական վայրի վերաձեալ:

71

ՎԱՍՆ ԵՂԿԵԼԻ ԿՐԻՑ ՀՈԳԻՈՑՍ

Պատահեալով գերոյս ասպատակք չարին,
Ողորմելիս իսկոյն կալեալ կապեցին,
Կապեցին, կապեցին, շըրջափակեցին:

Ժողովեցեալ առ իս այն զօրք խաւարին,
Ըզկապեցեալ խրոճուկս ուժգին գաձեցին.
Գաձեցին, գաձեցին կըռփահարեցին:

Պայծառագոյն թագիւ էի պսակեցեալ,
Երանգ-երանգ զարդուք գերափայլեցեալ,
Այն բանակք կորուսչին տարմաբար հասեալ,
Զամենայն ըզփառս իմ յինէն խլեցին,
Խլեցին, խլեցին, յափշտակեցին:

Ապա, իմոյս անձին նախանի թշշնամին,
Էարկ զիս ի ներքին գուբըն տղմային,
Այն անողորմ անգութ մեկնազէնք նորին,
Զանազան սուսերօք հարեալ խոցեցին,
Խոցեցին, խոցեցին, վիրաւորեցին:

Ահա, հեղեալ սըրտիւ ըզյորդ արտասուս,
Աղաղակեմ առ քեզ, աստուած իմ Յիսուս,
Չի վարելով զանձն իմ ի խորս աճարկուս,
Ի յանդունդս անընշոյլ տարեալ իջուցին,
Իջուցին, իջուցին և մահացուցին:

72

ԱՌ ՍՈՒՐԲՆ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉՆ ՀՈԳԻՈՑ ՄԵՐՈՑ

Հայրապետ հայոց, հովիւ հոգևոր,
Մեծ խոստովանօղ վըկայ Քրիստոսի:
Ծառիկ պարթևեաց մեզ պարգևեցար,
Պայծառ լուսատուդ արամեան տոհմին:

Առաքելաշնորհ, քարոզ ճըշմարիտ,
ՔզՅիսուս Քրիստոս ծանուցիչ ազին.
Միջնորդ հաշտութեան ի մէնջ վասն մեր,
Ջերկնաւոր արքայ առ մեզ դարձուցիչ.

Ա՛րդ, առ քեզ գոչեմք, ո՛վ հայրդ գըթաց,
Հայցեա ի տեառնէ մեզ ողորմութիւն.
Նեղեալ, տառապեալ տոհմիս խըղճալոյ,
Տալով գերելոցն գերադարձութիւն.
Ըստ աղերսանաց սուրբ Մարգարէին՝
Ի մեր հայրենիս անդրէն ժողովիլ:

73

ԱՒ ՆՈՅՆ ԴԱՐՁԵԱԼ,

Երանելի հովիւ ընտրեալ,
Հայոց մեծաց լուսաւորիչ.
Գրիգորիոս անուն արթուն,
Զուարթնոց երկնից հանդիսակից:

Պարթևական պսակ հիւսեալ,
Եդեալ ի գլուխ Արշակունեաց.
Զարչարանօք քո սուրբ մարմնոյդ,
Զխաւարն ի մէնջ հալածեցեր:

Ա՛րդ, պաղատիմք առ քեզ հոգւով,
Հոգւոց մերոց մեծ լուսատու.
Ա՛ւ քարոզեալն ի քէն, Յիսուս,
Մաղթեա՛ բառնալ զմեր նեղութիւն:

Այս տառապեալ որդւոց քոյին,
Անդրդութիւն լինիլ հայցեա՛.
Ըզկիրս աւձինդ, որ վասըն մեր՝
Տէառն առաջի տարածելով:

Որք ի մեղաց մերոց գանեալք,
Յերկիր օտար տարագրեցաք,
Դարձեալ աւնդրէն ողորմելով
Ի հայրենիսըն դարձուսցէ:
Ամէն:

74

ԱՒ ՍՈՒՐԲՆ ԷՋՄԻԱԾԻՆ

Հայոց պարծանք Արարատեան
Սուրբ գաւառին ակըն պատուական,
Լուսով երկնից ձեւակերպեալ,
Լուսակառոյց խորհուն աւնըման:

Մայր հաւատոյ գիտեմ ըզքեզ՝
Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ,
Գերապայծառ երկնաւնըման,
Գերսքանչելի սուրբ Էջմիածին:

Սրօքէապար, քրօքէաճեմ,
Սըրբագումար տաճար տիրական,
Թէպէտ յերկրի երևելէօք,
Բայց ներքնապէս համայն վերնական:

Զի ո՛չ ունիս յերկրի ճարտար,
Այլ երկնային միածինըն ճօր,
Տուն և տեղի տեառն աստուծոյ՝
Մեծ պատուելի սուրբ Էջմիածին:

Ահեղ գոչմամբ ուռն ի ձեռին
Իջեալ յերկնից միածին որդին,
Տեսանելով արթուն աննուն՝
Հայաստանեայց սուրբ լուսաւորչին:

Ոսկի ուռամբն ուժգին բախմամբ
Դողացուցեալ ըզսանդարամետս,
Բարձրապատիւ աթոռ հայոց,
Ցոյժ յարգելի, սուրբ Էջմիածին:

Անթիւ աննուն զօրացն երկնից,
Իջեալ ըզհետ որդւոյն միածնի,
Լուսով լցեալ դաշտն երջանիկ,
Սիւն լուսեղէն կանգնեալ ի յերկրի:

Կաթողիկէ մեզ կառուցեալ,
Անվաճելի ի դրանց դըժոխոց,
Իւղովն օծման գետաւետեալ
Մա՛յր պաշտելի, սուրբ Էջմիածին:

75

ԱՌ ԳԻՆԻՆ

Ո՛վ ընդելոց մխիթարիչ, տրտմելոց բերկրացուցիչ եղեալ,
Սըրտից ոմանց խոր խոցոտիչ և ոմանց նոր նորոգիչ եղեալ,
Ո՛հ, ո՛հ, և ոմանց նոր նորոգիչ եղեալ:

Գիտեմ ըզքեզ կենդանարար և մահաբեր ճանաչեմ,
Ոչ գիտեմ՝ զինչ կոչեմ ըզքեզ, կեցուցի՞չ, թէ՝ մեռուցիչ
եղեալ,
Ո՛հ, ո՛հ, կեցուցի՞չ, թէ՝ մեռուցիչ եղեալ:

Բնութեանն մերում որպիսութեան դու ճշմարիտ փորձաքար
եղեալ,
Ծածկեցելոյ ատելութեան և սիրութեան յայտարար եղեալ,
Ո՛հ, ո՛հ և սիրութեան յայտարար եղեալ:

Գիտեմ ըզքեզ սիրոյ պատճառ և խռովարկու ճանաչեմ,
Ո՛չ գիտեմ զինչ կոչեմ ըզքեզ, սէր տըւիչ, թէ սէր լուծիչ
եղեալ,
Ո՛հ, ո՛հ, սէր տըւիչ, թէ սէր լուծիչ եղեալ:

76

Ո՛վ դու մանուկ դեռահասակ,
Լո՛ւր իմաստնոց հանդարտազ,
Զի լինիցիս մարդ կատարեալ՝
Ցազընդութեանց անընդհատ.

Որ ատէ զյաճդիմաճութիւճ
Եւ ո՛չ աճսայ խըրատուց,
Ամեճայճ կերպ թըշւառութիւճք
Դիմեճ ի ճա վազիվազ։

Հըպատակ լեր ծերագուճից,
Որք շահաւէտս բարբառիճ,
Ո՛չ բըճաւիճ կելով աճլուր
Օգտակար խօսից ճոցիճ.
Քաղցրախօս լեր յամեճեսիճ՝
Համեմեալ բաճիւ քոյիճ
Եւ մի՛ խոցեր զոք բերաճովդ,
Որ գուճակ վայրի վարազ։

Որ քո չիցէ ինչ օտարիճ՝
Մի՛ բըճաւ ցաճկար ճըմա,
Ասպա թէ ոչ՝ յօրճ աճհագիճ
Առ ի քէճ պահաճջի ճա.
Ի գերազաճց վարդապետիճ
Իսկագոյճ բաճիցճ իմա,
Որ ի գըլխոց ձերոց, ասէ,
Պակասի և ո՛չ մի մազ։

Գիճտ գեղեցիկ, ոսկի ազիճ,
Սիրելի հաւատարիմ,
Պի՛ճտ կալ ըզճա, թէ գըտաճես
Ցաւակից քեզ մըտերիմ.
Զոր գերիս միճչ ուճիմ աո իս՝

Ինձ ոչ այլ ինչ համարիմ,
Եթէ ոչ մարգարիտ անգին,
Կարկեհան ակն և տըպազ:

Ի վերայ այսր ամենայնի
Լե՛ր միտդ ճշմարտութեան,
Ընկեա՛ զանձին քոյ ըզչարացանս
Տեառն առաջի յանդիման.
Թէ յուսով դիմեալ լինիցիս
Ըզմեըղս քո խոստովան,
Նա թողու քեզ զամենեսին,
Թէև իցեն իբր աւազ:

77

Դաւիթ Անյաղթ փիլիսոփայ,
Ծաղիկ բուսեալ ցեղինս Հայկայ,
Ծրծեալ զիմաստն ի յԱթենայ,
Գեր քան զԵլլենսըն ճոխանայ:

Արար ըզգիրքըս Սաւմանացց,
Սաւմանելով ի վեց դիմաց,
Եցոյց, թէ գո՛յ իմաստ մըտաց,
Իմաստուրաց իմաստակաց:

Իսւսէ ընդ այս կից ընդ դիմակ,
Թէ չարն ո՛չ է ինքնին էակ,
Այլ արարչին գոլով ներհակ,
Թիւր կամքն եղև ընդմին գըտակ:

Ի սոյն եթէ սիրով կըրթիս,
Իւ ի կըրթիլոյ ո՛չ դադարիս,
Մըտօքդ էիցս՝ գիտօղ լինիս,
Հոգւոյդ յախտից մեղաց մաքրիս։

Թագաւորին հանուրց էից,
Բանականաց և անբանից,
Ի յամենայն իւրոց գոյից
Փառք յաւիտեանս յաւիտենից։

78

ԱՄԵՆԱՅՆ ՉԱՐ ՏԱՆՋԵԼԻ

Որք բընախօս բանիւ զէակքս ենթագրեցին,
Ամենայն չար գոլ տանջեալի ճըշմարտեցին,
Ո՛չ ոք տանջեալ անապատական վերաբերին,
Զի յեղեղուտ է բընութեամբ ըստ իւր գոյին։

Յապականեալսն անեղ բընաւ ո՛չ գըտանին,
Եւ ամենայն իրօք սոքա ո՛չ բաղդատին,
Իսկ ի չարացն անապական ո՛չ եղանին,
Ապաքէն չարն ո՛չ անեղ և ո՛չ բնաւին։

Ըստ բնութեան ո՛չ ոք է չար և ո՛չ լինին,
Եւ զի չարն է առարկութիւն, որ փոփոխին,
Առարկութիւն գոյակցութիւն ո՛չ է բնաւին,
Ուրեմն, ապա գոյակցութիւնք չար ո՛չ ասին։

Որք ընդդիմակաքն են՝ ի միմեանց ապականին,
Անապականք ուրեմն ո՛չ են ոչք ներհակին:

Անեղ էակն ո՛չ փոփոխի ամենևին,
Վասընզի է պարզ բնութիւն աննիւթային.
Իսկ յեղեղուտն ի չարէն փոչք պարտի բարին,
Բարին, ուրեմն, ո՛չ է անեղ, որ մակստանին:

Ընդձայ անեղն ապականիլ ըստ տարրականին,
Զասպարանէ զոք, զի ո՛չ գոյ դիմակ ընդին.
Իսկ ցանկութիւնս ապականի, որ է չարին,
Ապաքէն չարն ո՛չ է անեղ, այլ ոեռի նմին:

Իսկ տանջանաց մատնեն սուրբ գիրքն աստուածային,
Ո՛չ եթ զայլ չարսն, այլ զբանսարկուս ևս իսկ քննին,
Եւ տանջանաց մատնեալքն ասեն միշտ այլայլին,
Ուրեմն ո՛չ ոք յայլայլելացն անեղ ասին:

Որք ներհականք ո՛չ ինչ իրօք հաւասարին,
Որպէս ճերմակն ո՛չ ունի ինչ հանգէտ սևին,
Արդ, բարութեան գոյակցութիւն անեղն ասին,
Բայց յանեղէն եղանակաց ո՛չ պատկանի:

Քանզի բարի թէպէտ բազմեաց ոգեալ լինի,
Բայց բարութիւն հագիւ կամ բնաւ ո՛չ ենթադրի,
Իսկ բարւոյն չարն է ընդ դիմակ, որ ներհակի,
Ապա, ուրեմն, ոչինչ ի յայն այս գըտանի:

Ամենայն ոք ումեք տեղիայ ըստ իրաւին,
Թէ ըստ բնութեան բաղձայ տեղիմունքըն յարմարին,
Արդ, է տեղիալն ապականել նախաշարին,
Ապաքէն և ինքն է յայնց, որք ապականին:

Եւ թէ աւեղ է չարութիւն ըստ իւր գոյին,
Ընդ բնութեանըն գոյանայ չար գոլ ընդին,
Ամենայն գործք ըստ բընութեան մեղք ո՛չ ասին,
Ո՛չ մեղանչեն, ուրեմն այնք, որք բնութեամբ վարին:

Արդ մեղանչէ չարն ամէն ոք խոստովանին,
Քանզի որք ոչըն մեղանչեն, ո՛չ բանբասին,
Այլ բամբասիլն աւերկայ է սատանայիւն,
Ապա ուրեմն ո՛չ է անմեղ, որպէս ասին:

79

ԱՒՐ ՄԻՈՒԹԻՒՆՆ

Ով միութիւն զարմանալի, դու ծընօղ ամենեցուն,
Յամենեսին ներ գըտանին, զի ճամայնից ես դու բուն,
Ջորս ի քէն յառաջ բերես դու թէ՛ իր, թէ՛ իրականութիւն,
Ո՛չ բաժանիս ի ծոցանէ որպէս չէակս էութիւն:

Ո՛չ մի իր և ո՛չ մի գործ ինչ կարէ գոլ թարց քո գոլոյդ,
Պատկեր ես դու աւեղ էին, այլք կարօտեալ քո ելոյդ,
Ձիքն է միայն, որ չէ՛ ի քէն, վասնորոյ չասի նա ինչ,
Զի չունօղն ըզքեզ ի յինքեան, ո՛չ է ինչ, այլ է ոչինչ:

Աէրն որ ի մեզ՝ զքեզ քարոզէ՝ իւր հրաշալի պաշտօնիւն,
Որ ըզսիրօղն ըստ սիրելւոյն՝ քև շաղկապէ առ ի մի.
Ամէն բազումք քեզ հաղորդին, իսկ հաղորդիս դու ոչ ում,
Զի բազումն է կըրկնակի մի, իսկ դու և ոչ մի բազում:

80

ԱՂԵՐՍ ԱՌ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՍՏՈՒԱԾ

Առ անփոփոխ աստուածութիւն,
Հոգւոյդ սրբոյ, հըզօրի,
Աղերս անկեալ աղաղակեմք
Եւ անկանիմք առաջի:

Ցողեա ի քոյ շնորհաց ցողոյդ
Ի մեր հոգիս մեղսալի,
Տալով մեզ յոյս ներըսկզբան
Այսմ երջանիկ Մատենի:

Զի կարասցուք առ հասանիլ
Յաւարտ սորին քերկրալի,
Յօգուտ հանուրց մերազնէից,
Մանկանց սըրբոյ Սիօնի:

Որ է Մատեան հառաչանաց,
Նարեկացւոյն Գրիգորի,
Աստուածաբան վարդապետի,
Եւ ճըգնասէր հըսկողի:

81

ԱՍԱՑԵԱԼ Ի ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊՐԷ Ի ՎԵՐԱՅ ՀՊԱՐՏՈՒԹԵԱՆ

Մի՛ մեծամիտ լինիր, որդի՛ Ադամայ,
և մի զարծիր ընութակցին վերայ:
Զի դու և նա ի մի մօրէ ածեցայք,
միով բնութեամբ զախտալից կեանս շահեցաք:
Մի և նոյն է քոյին բնութիւնդ ընդ նմա,
և չունիս ինչ աւելի քան զնա:
Հոգի, մարմին, միտ, բանական միապէս,
և ո՛չ մինդ քան զմիւսն ի վեր այլապէս:
Զի մեծութիւնդ զոր այժմ ունիս, ո՛չ է քո,
այլ պատահումն է քո մարմնոյդ արտաքոյ:
Ուրեմն ապա չէ մեծութիւն իսկական,
այլ երևոյթ և ճոսանուտ իսկական:
Մի՛ անդգնեալ զքեզ ի փառս ընկեներ,
մի՛ խարշատէր զքո ընկերդ իբր զիւր:
Մի՛ զարդարէր երևելեօք արտաքուստ,
այլ զիոգւոյդ մասունս պճնեալ ի ներքուստ:
Անցաւորիս ամենայնիւ մի՛ ցանկար,
զանանց բարիս մի և ժամ մի՛ մոռանար:
Ընդ ամբարիշտ արանց մի՛ ընկերակցիր,
և մի՛ ի զուր վարս նոցին նախանձիր:
Ի վատթարաց զգուշացիր յարաժամ,
զի մի՛ նոցին նման լիցիս չարակամ:
Զանբիծ պատուէր սաղմոսողին առ ընկալ,
և այնպիսեաց քանց իր միշտ հլու կալ:

Խոտորեսջիր ի չար վարուց աւուղղից,
և բեր ի քեզ զբարի վարս աւբծից:
Չար և բարին ի միասին ո՛չ լինին,
զի այսոքիկ միշտ իրերաց ներհակին:
Եթէ սիրես դու ի սրտէ ըզբարին,
պարտիս ատել և ատելի գոլ չարին:
Իսկ թէ զչարն ի քեզ յարգես և սիրես,
յայտէ աւտի զբարին աւարգես:
Զի ո՛չ կարես երկուից տէրանց ծառայել,
և ո՛չ զերկուսն ի միասին մեծարել:
Այլ թէ մինն սիրես, ըզմիսն աւարգես,
որպէս զաւնսուտ բաւէն լսես և գիտես:
Դիր ի կշիռ, ո՛վ մարդ, զքոյդ բաղձալիս,
որք են բոլոր փարթամութիք աշխարհիս:
Եւ բաղդատեա փոքու մասին այն փառաց,
զոր վայելքն դասք ընտրելոցն երջանկաց:
Եւ տես, թէ որք ծաւրագոյն գտանի,
մասնիկն այն, քան ըզբոլոր փառս աշխարհի:
Որպէս կոյտ մի փոշի հողոյն առաջի,
նուազ քան զայն այս փառս առ այն գտանի:
Ուրեմն ըզքեզ առ յաւիտեան ի վեր գան,
և յօրինեա զհոգիդ այնմիկ գոլ արժան:
Ըզփքացեալ մտածմունսըտ թօթափեա,
անցաւոր գոլ զմեծութիդ ակատեա:
Թէ միշտ խոկմամբ ածես ըզքեզ ի յաչս,
բնաւ իսպառ ոչինչ խնդաւ ի ներքինս:
Ըստեղծողին քո և փրկչին լէր նմա,
և թող զքոյդ անձին հաճոյս եղկական:
Որ աստ խոնարհ և ձեզ հոգով ընթանայ,

անդ գերագոյն աստիճանօք բարձրանալ:
Նախապատիւ գոլ ի մարդիք, թէ ցանկաս,
մոլիս և ո՛չ ըզքոյդ հանգիստ իմանաս:
Որքան ոք զինքըն ի մեծութիւն ընկենու,
այնքան ինքեան հոգս և տխրանս զգենու:
Իրքըն որքան ի բարձրագոյնս դնիցին,
բիծք այնոցիք այնքան յայտնիք երևին:
Գիտե՛ս, արդեօք, թէ որքան մեծք պատուականք,
ընդ մեծութեան իւրեանց կորեան և ինքեանք:
Որքան իշխանք փառազարդեալք ի գահոյս,
ողորմելի ելիս ի այս կենցաղոյս:
Թէ լաւագոյն զինիլ պարծիս և ազնիւ,
և այն սակս մըխես զքեզ ի պատիւ.
Զայս ասելով ամենեցիս վայրագոյն,
և համալնից գարշագունից գարշագոյն:
Այն է պատուոյ և գովութեան արժանի,
որ զաշխարհիս պատիւըն ո՛չ ինչ վարկանի:
Ազնիւըն երբէք բարձրամտիլ ո՛չ գիտէ,
այլ զվերինն երջանկութիւնն դիտէ:
Այր բարեմիտ իւր պատիւ զայն համարի,
որ ամենից երջանկապէս խոնարհի:
Թէ զանձն քո ուշիմաբար որոնես,
բազում արարս մոլեգինս գտանես.
Որոց վասըն պարտիս յերկինն յերկիր կորակցիլ,
թողլ թէ պարծիլ բարձրամտիլ կամ նայիլ:
Այս հողակոյտ յորում ճօճաս և ճեմես,
մօտ իսկ զքեզ ներքակոխել տեսանես:
Որ այժմ ի քեզ իբրև զանմեռ փքանաս,
վաղիւ ի հող մաճու իջեալ չքանաս:

Այս մեծութիւն աստղաճանճից ընդմանի,
որ մինչ փայլի, հուպ և իսկոյն շիջանի:
Թէև ընդ հաստարմատ ծառոց լինիցիս,
սակայն հողմով մաճուառ իսկույն խլիցիս:
Եւ արդ դիւրաւ իսկ խոնարհեալ գտանիս,
թէ զփախչիլն ի բազմութեանց սասանի:
Զի ո՛չ ոք է, որ փքանայ առանձին,
այլ ի ժողովս յոգնագումար ամբոխին:
Զի, ով ոք է, որ ի ծիրանիս զգենու,
և ոչ ի տեսս ամբոխից զինքն ընկենու:
Ամբարտաւան ոգին երբ ո՛չ տեսանի,
իբր զմարմին անկերակուր մեռանի:
Ցանկայ, ըղձայ ամենեցունց տեսանիլ,
և ամենայն արանց փառօք մեծարիլ:
Մինչ չպատուի մոլեգնաբար զայրանայ,
և մինչ գովի՝ իբրև զտիկ փքանայ:
Մինչ մեծարի, այո՛ ասի և սառի,
և մինչ ատի, իբր զգազան խոժոռի:
Քան զամենայն զինքըն կարծէ պատուական,
որ ատելի է աստուծոյ և մարդկան:
Զամենայն գործ յանդգնացեալ մտանէ,
զինչ որ լինի, զայդ ո՛չ կարեմ, ո՛չ ասէ:
Զինքն հզօր քան զամենայն համարի,
իսկ զայլ անձինս իբր ըզոչինչ վարկանի:
Զաղոց արարս յոյժ ճշտմամբ որոնէ,
իսկ զիւր անձին զբիծն ոչ տեսանէ:
Ըզբան խրատուց արանց սրբոց անարգէ,
և յամենայն մարդոյ պատիւ պահանջէ:
Բանից գիտնոց և իմաստնոց ո՛չ լսէ,

այլ զիւր բանսն մեծարէ և գովէ,
Զինչ օգտիցիս դու ի պատուոց եկելոց,
մինչ ոչ ունիս զանանց պատիւն ընտրելոց:
Զինչ շահէ քեզ այս գովութիւնս, ո՛վ անբան,
մինչ ձաղանաց գիտես զքեզ գոլ արժան:
Կորուսանես զգովութիւնս թէ ցանկաս,
և գտանես, թէ զքեզ ո՛չ ինչ իմանաս:

82

ՆՈՐԻՆ ՊԱՂՏԱՍԱՐԻ ՎԱՍՆ ՆԱԽԱՆՁՈՒՆ Ի ԳՐՈՑ ՀԱԽԱՁԵԱԼ ԲԱՆԻՑՍ

Նախանձոտին ճոգին խանձի ի ներքուստ,
մինչ տեսանէ զբարիս այլոց արտաքուստ:
Ներախանձի վասն բարեաց ընկերին,
և խարշեատեալ աղէօք քամէ զիւր ոգին:
Մինչ տեսանէ զերջանկութիւնս օտարին,
տանջանարան կազմէ ինքեան զնոսին:
Թէր մերձակայն իւր մեծարեալ բարձրանալ,
խոր խոցեալ ինքըն առ ի մահ բարձրանալ:
Այս մոլութիւնս է համայնից թշնամի,
զի զբարիս այլոց բնաւ ոչ կամի:
Աստուածային բարիս բնութենէ ներհակ,
որ զայլսն առնէ իւր բարութեանն ընդունակ:
Հակառակի երանելեացն երամին,
որք զբարիս այլոց ինքեանց վարկանին:
Զոր օրինակ ակն, որ ցաւօք պաշարի,
ամէն պայծառ իրաց փախչիլ յօժարի:

Նախանձոտաց ոգիքն այնպէս չարչարին,
երբ տեսանեն զճոխութիւն օտարին:
Թէ և սկզբանէ նախանձում սատանայ,
բայց բնութիւնն ընկերացն ո՛չ մախայ:
Դու մարդ գոլով քո նիւթակցին նախանձիս.
թէ և ոչ դևքն առնեն որք կան ի չարիս:
Թէ անարգես զճոսանուտ զայս բարիս,
և այն անանց բարոյն սիրով փափագիս:
Այս մթութիւնս ի քէն իբաց փարատի,

. . . . . .

Զի որ միայն անանց կենացն ըղձանայ,
ոչ ի բարիս այլոց երկրիս ցանկանայ:
Ով ոք իշխան, որ բազում գանձս ունիցի,
չհաշէ փողի միոյ ունիլ նախանձի:
Որք զվսեմ աստիճանիօք ըզբաղին,
վայրահասկիլ առ ստորինս ոչ կամին:
Մի՛թէ քոյդ ճոգ չէ բաւական քեզ ի փիշտ,
որ զայլոց բարեօքըն տապիս միշտ:
Թէ նախանձիս ի մեծութիւնս ընկերին,
սիրես զնա այնք ամենայն քո լինին:
Բազում գոյիւք փարթամութեանց լինայ,
որ զբարիս այլոց ինքեան խմանայ:

83

ՆՈՐԻՆ ՊԱՂՏԱՍԱՐԻ Ի ՎԵՐԱՅ ՏՈՒԼՈՒԹԵԱՆ

Տուլութիւնն է ձանձրացուցիչ ի բարիս,
ի գործս ի մեր ճոգւոյս պիտանիս:
Զի ծոյլ ոգին իբր զվատ էշ անխթան,

ո՛չ մտաւէ ի գործ, որ իւրն է պատկան:
Ի ամենից դժուարութեանց զարհուրի,
և ոչ իրիք աշխատութեան մերձ լինի:
Սակաւ ինչ գործ թէ հպի թախանձի,
և ոչ ի վարս արանց բարեաց նախանձի:
Ծայրիւ մատին հպիլ ի գործ պիտանի,
կամիլ կամի, թէպէտ սակայն ո՛չ կամի:
Բեռնէ ինքեան, որ ո՛չ կարէ ընթանալ,
ուր և կամի լինի, ցանկայ, անդէն կալ մնալ:
Զկամիլ ծուլին թէպէտ կարեմք հաստատել,
բայց զգործելն ո՛չ ոք կարաց տեսանել:
Այս բարութիւնս որ կայ մեզ հուպ ընտանի,
բազում ջանիւք և թեքերմամբ գտանի:
Նա որ յերկինս է և այսմիկ անմման,
որքան ապա աշխատանաց է արժան:
Թէ զանցաւոր բարիս քրտամբ ստանաս,
զիարդ վերնոյն անաշխատ կաս մնաս:
Արդ վայրապար յուսաս ունիլ փրկութիւն,
թէ ոչ ի բաց դիցես զքոյդ թողութիւն:
Զոր օրինակ հաւ ի թռչիլ սնանի,
նոյնպէս և մարդ աւո ի գործել ծնանի:
Ո՛վ դու խոտան և ինձ նման անպիտան,
զլիշումն աճեղ աւուրն արա քեզ խթան:
Եւ ստիպեա նովաւ զքեզ յաշխատանս,
զի մի ջետոյ անկանիցիս ի տուժանս:
Զազնուութիւնդ քո զոր նախ ունէիր,
արիացեալ զայն վերստին զգեցիր:
Մեզ գերիմաստ սուրբն Պողոս քարոզէ,
զանեղծ բարւոյն վարդապետեալ բացատրէ

Թէ չարչարանքըն ժամանակիս ո՛չ են գին,
հանդերձելոցն, որ մեզ պատրաստին:
Ուրեմն, ապա, որքան կարես լե՛ր արի,
և մտրակեա՛ զքեզ ընդ երիվարի:
Մի՛ ասիցես կամիմ, սակայն, ո՛չ կարեմ,
վասն զի ի դժուարն ո՛չ վարեմ:
Զոր դժուարն արդեօք ունիս ինձ ասել,
զոր մարդկային կարն ոչ կարաց կատարել:
Աստուածային սիրովն եթէ վստահիս,
դժուարութեանց հանուց յաղթող գտանիս:
Աստուած ոչինչ ետ մեզ այնպէս պատուիրան,
զոր կատարել ո՛չ կարիցեն որք փութան:
Լայն պողոտայն յորում այսօր գնաս դու,
հեշտ ընթացիւք տարեալ ի գուպ ընկենու:
Նեղ և անձուկ է այն դռնակն, որ տանի
ի փառս երկնից, որ ո՛չ երբէք եղծանի:
Ծոյլն ինթէ չարիս իւրոյ ընկերին,
երբ տեսանէ, թէ յաջողէ գործ նորին:
Առ պատուիրանն աստուածային տարտամի,
և առ բարիս ամենայնիւ կարկամիս:
Միշտ տատանի իբր զնաւակ ի յալեաց,
գոլով ի մէջ զանազանից հեշտալեաց:
Քան զմրջիւն անարգաւոյն գտանի,
որպէս ի բանս գիր իմաստնոյն տեսանի:
Տխրատեսակ պղերգութեան ընդունակն,
կորուսանէ զիւր պատուական ժամանակըն:
Այս պատուականս այնքան ատի ծանրագին,
որոյ միոյ մասին ոչինչ լինի գին:
Զի ի միում կիտի կարես զղջանալ,

և զերկնային արքայութիւնն ստանալ:
Թէ ասա ինձ գաս ի հոգևոր վաստակէն,
անդ զրկեցեալ լինիս յանճառ պսակէն:
Զոր օրինակ, որ ի գործել ծուլանայ,
զաւուր պաշարն ամօթանք մուրանայ:
Նոյնպէս որ աստ ո՛չ աշխատի ի բարիս,
չունի լինիլ մասնակից ընդ արիս:
Ծոյլ որպէս փշատարած ագարակ,
և զանազան վատթարութեանց ընդունակ:
Դարձեալ ծոյլն է որպէս զչուր հանգուցեալ,
զանազանիւք աղտեղութեան աւլցեալ:
Ծոյլն է որպէս երկաթ թաղեալ ժանկուանակ,
հանուրց անշարժ վատթարութեանց օրինակ:
Դատարկակեաց և անարի ծոյլ ոգին,
սատանայիւն է փետրալից անկողին:
Է անծածկոյթ և միշտ բացեալ զպատուհան,
որ ամենայն չար փորձութիւնք ընթանան:
Դատարկակեացն է կավեղէն աշտարակ,
սրբեալ ներսից չարին բարւոք նշաւակ:
Ծոյլն կամի զկարգ բնութիւնն եղծանել,
զի յօժարի ինձել և ոչ սերմանել:
Եւ արդ, որով հետ և ո՛չ տեսանի,
թէ մահն յորո՛ւմ ժամու արդեօք հասանի:
Պարտիմք հսկել և ո՛չ երբէք լքանել,
և գալստեան նորին պատրաստ գտանել.
Դասիթ ասէ, թէ վաստակեայ յաւիտեան,
և յաւելու, թէ կեցցես մինչ ի վաղճան:

84

(Ըստ Նարեկացու)

Ի հողային ևիւթոյս ոսկի մաքրական,
Ի ծովային բերմանց ակն արփիական,
Ի յեղծական սեռէս Քրոբէ մարմնական,
Իսկուհի Մարիամ, տուր մեզ բան և ջան...





85

ՊԱՂՏԱՍԱՐ ԴՊՐԻ Է ՈՂԲՍ

Պարտաւորեալ գերիս խըղճալի,
Ողորմելի, լալի, ողբալի,
Ի քուն մեղաց թըմրեալ մընացի
Եւ զօրըս զայս բարւոք չըզգացի:

Ահա ուՇայՇ ի մասանց բարեաց,
Երթամ առ տէր լի գործովը չարեաց
Եւ կարծիմ բանից մաղթանաց՝
Եղբարցդ իմոց և բարեկամաց:

Ղօղեալ դողամ յայսոցն օդայնոց,
Որք գան ընդդէմ հոգոցն երկրայնոց,
Զի վասն անթիւ յանցանաց իմոց,
Սարսիմ սոսկամ յահէն դըժոխոց:

Տեսի զայս օրս և զարհուրեցայ,
Միտն իմ կորեաւ, ես չիմարեցայ,
Վա՜յ ինձ այսօր, որ մեղօք մեռայ,
Հուր գեհենիկ վասն իմ այժմ եռայ:

Ա՜յ իմ եղբարք, ինձ ողորմեցէք,
Զիմ աղաչանս այսօր լըսեցէք,
Վասն իմ առ տէր այժմ աղօթեցէք
Եւ խըղճալի գերւոյս օգնեցէք:

Սաստիկ հրամանըն արարչական
Այսօր էհաս ինձ անդարձական,
Մինչդեռ կայի անհոգ ի զբաղման,
Կըտրեաց ըզկապն իմ կենդանական:

Ահա մեռեալ և անշընչացայ
Եւ բանական մարդս անբանացայ,
Ծաղկալի ծառս այսօր չորացայ
Արմատենիս ոստաքանցեցայ:

Րախութիւնս իմ արդ ըսպառեցաւ,
Կենացս աղբիւրն իմ ցամաքեցաւ,
Պարիսպ մարմնոյս այսօր խախտեցաւ,
Որմունքս անկան, շինուածըս փըլաւ:

Դադարեցաւ միտս ի խորհելոյ,
Խորհուրդս և կամքս ի ներգործելոյ,
Լրոեաց լեզու իմ ի խօսելոյ,
Եւ լրսելիքն իմ՝ ի լրսելոյ:

Պակասեցայ ես յազգատոհմէ
Եւ հեռուցայ ի տանէ իմմէ,
Մասն ինչ չունիմ այլ ի յաշխարհէ,
Ջատ ի սակաւ մի այս կրտաւէ:

Րամեալ մասունք մարմնոյս թուլացան,
Ջիլք և ոսկերք իմ անջատեցան,
Ջեռք և մատունք իմ կարկամեցան,
Եւ յընթացից ոտք իմ կասեցան:

Իմ սիրելիքն այսօր զիս ողբան,
Կըսկըծանօք կոծան և սգան,
Բայց յետ քանի մի աւուր անցման,
Սակաւ յիշեն և շատ մոռանան:

Էակից ճօր միածին որդի,
Յիսուս Քրիստոս փըրկիչ աշխարհի,
Մեղուցելոյս յարկ ապաւինի,
Դու ես այսօր ոչ այլ ոք յերկրի:

Ողորմելիս, որ անկեալ դընիմ,
Հայիմ ողորմ և ոչ բարբառիմ,
Այլոց բանիւն առ քեզ պաղատիմ
Եւ առաջի գըթոյդ անկանիմ:

Ղամպար վառեա ինձ ներողութեան,
Եւ բա՛ց ըզդուռն ինձ ողորմութեան,
Ցոյց ինձ ըզլոյս մեղաց քաւութեան
Եւ պատժապարտ հոգոյս փըրկութեան:

Բըժիշկ հոգոց, պարգևիչ փառաց,
Իշխան հըզոր մահու և կեանց,
Վասըն քոյին սուրբ չարչարանաց,
Զանձն իմ այսօր քաւեա՛ ի մեղաց:

Սըրբեա զկամայս իմ և զակամայս,
Քեզ բարեխօս կոյս մայրն ի կանայս,
Արդ, տէր, ընկալ զպարտաւոր ծառայս
Եւ բերկրեցո ի փառս յարակայս:

86

ՆՈՐԻՆ ԱՍԱՑԵԱԼ Ի ՎԵՐԱՑ ՄԱՆԿԱՆՑ

Պայծառագոյն որդեակ իմ սիրուն,
Տիպ և նմանդ ծագման արևուն,
Վա՛յ ինձ, այսօր որպէ՞ս մըթացար,
Թանձր և խաւար ամպով ծածկեցար:

Ա՛յ իմ որդեակ, ծաղկեալ ընտանեաւ,
Եւ գեղափայլ վառեալ վարդենւոյ,
Վա՛յ ինձ, այսօր որպէ՞ս չորացար,
Ցամաքեցար և թօթափեցար:

Ղամպարապէս փայլէիր ի տաճն,
Դու էիր ճրագ լուսոյ իմ մըթաճն,
Վա՜յ ինձ, որդեակ, որպէ՞ս մարեցար,
Որպէ՞ս շիջար և խաւարեցար:

Տարփալի իմ որդեակ, տարփալի,
Քո ցաւալից մօրըս ցանկալի,
Վա՜յ ինձ, այսօր որպէ՞ս հեռացար,
Ի քո սիրած մօրէդ զատեցար:

Ա՜յ իմ որդեակ, ծառ բարձրահասակ,
Գեղեցկաշէն կանգնեալ աշտարակ,
Վա՜յ ինձ, այսօր որպէ՞ս քակտեցար,
Անկար, փըլար և քայքայեցար:

Սիրուն որդեակ, սիրուն, սիրելի,
Լեզուդ անոյշ, խօսքըդ գովելի,
Վա՜յ ինձ, այսօր որպէ՞ս թըմրեցար,
Ի խօսելոյդ վասն է՞ր կըտրեցար:

Աչացըս լոյս, տո՜ւր ինձ պատասխան,
Թէ ո՞ւր երթաս այդպէս խըղճական,
Եւ գի՜ս ընդ քեզ տար, ընդ քեզ, որդի,
Եւ դի՜ր ընդ քեզ ի գերեզմանի:

Բախճանական խընդութիւն սըրտիս,
Եւ լուսատու՝ աչաց ծընողիս,
Այսօր ըզքեզ ինձէն զատեցին,
Եւ զիմ սըրտիկս արեամբ լըցուցին:

Դարձաւ ի սուգ իմ ուրախութիւնս,
Դադարեցաւ ամէն խընդութիւնս,
Չի զքեզ այսօր ի ձեռացս առին,
Չիս աճորդի մայրիկ արարին:

Պահած, սիրած, նազով մեծուցած,
Գառնուկ, սիրով, գըրկով սընուցած,
Այսօր յանկարծ մահու դիպեցար
Եւ անճարակ վիրօք խոցեցար:

Րախութիւն իմ, ոսկեղէն բաժակ,
Մարգարտաշար շինեալ բոլորակ,
Վա՜յ ինձ, այսօր ի ձեռացս անկար,
Ուժգին բեկար և կոտրատեցար:

87

ԱՌ ԵՐԿՈՔԻՆ ՀԱՄԱՋԱՆ ԱՄՈԼՔՆ ԱՑԺՄՈՒՄ՝ Գ. ԵՒ Յ. Ա. Վ.

Դիտօղք արթունք,
Մըտօք բարձունք,
Երկու ակունք՝
Լուսափայլունք,
Կրկին որմունք՝
Հաստահիմունք,
Արք իմաստունք
Եւ բանիբունք:

Իմաստաճեմք,
Ծաղկեալ եդեմք,
Բաբունք խոհեմք,
Բանիւք համեմք,
Որքան գիտեմք,
Եւ ընկատեմք,
Ըզձեզ գովեմք,
Ո՛վ հոգեսունք:

Տանըն սրբոյ,
Մեծն ամլորդոյ,
Զայն բարբառոյ
Կոչեցելոյ՝
Ծառայք բընոյ,
Լըծոյն սիրոյ,
Մինչ ըստ տիոյ
Մատաղ մանկունք:

Օրինեալ տեղոյ,
Գեր գովելոյ,
Եւ Բիւզանդոյ
Մեծի Պօլսոյ,
Դէտք ըստ հոգւոյ.
Հօտին մերոյ,
Հաւոյն սրբոյ
Ընտրեալ թոռունք:

Ղամպարք բոցեղք,
Շնորհաց ետեղք,

Փայլուն աստեղք,
Բարձրազետեղք,
Յորդեալ հեղեղք,
Բաձիւք զօրեղք,
Ծառք կըրկնոստեղք,
Յոգնաբեղունք:

Քարոզք ուղղիչք
Եւ յորդորիչք,
Քաղցրաբանիչք
Եւ զարդուցիչք,
Հաւք ժողովիչք,
Բարձրաթըռիչք,
Միշտ սրնուցիչք,
Բազմաձագունք:

88

[ՏԱՊԱՆԱԳԻՐ ԴԱՆԻԷԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ]

. . . . . .

Ունի իբր քայիւրակ մի պատուական,
Որ ըզգալի ականց է ինքն աննըման,
Այլ խօսուն մարգարիտ, յակինթ պատուական:

Յերկրէն Երեւանու աննձն երանելի,
Զաւակ բարեսրտուն սուրբ Էջմիածնի,
Երթեալ էր նուիրակ ի Ռումելի,
Որոյ դարձեալ անտի, եկն ի Բիւզանդի:

Դաճիէլ վարդապետ էր անուն սորին,
Խոնարհ և բանիբուն գործոյն արտաքին,
Կեցեալ ժամանակս ինչ պատուով ի խըցին՝
Ի հրեշտակապետու սուրբ եկեղեցին:

Առ որ հրամայ էին արագ ժամանեալ,
Եւ ցաւոյն խստելով, ի մահճի անկեալ,
Սակս էին մի օր անցեալ զհող աւանդեալ,
Որոյ ցաւն էր մահն շուտիկ կոչեցեալ:

Թիւն էր հազար հարիւր ՚ւ երեք երեսուն,
Լեց ևս էր յաւելեալ մերըս հայկազուն,
Ութերորդում աւուր նոյեմբեր ամսուն
Ի յօր դասապետաց երկնային զօրուն:

Բարի էր սա բարուք և հեզահոգի,
Հիւրասէր հացասէր գթասիրտ ոգի,
Գոլն քաղաքավար իբրու անթերի,
Ունելով ամենայն ընդ ամենայնի:

89

(Թարգմանություն)

Որտեղ կռիվ կտեսնես, փախիր փութով այդ ախտից,
Թե մասնակցես դու կռվի, քեզ կզրկես դրախտից:

Քեզանից մեծ մարդու հետ դու երբեք վեճ մի՛ արա,
Մի՛ խառնվիր ուրիշի աղմուկներին աւօրյա:

Գործդ այնպես քոնքիր դու, որ բոլորը հավանեն,
Ուղիղ ճամփից չշեղվես, որ քեզ անխելք չանվանեն:

Խոսելիս ու վիճելիս, եղիր խաղաղ ու հանդարտ,
Բարկացողը վայրենի անասուն է և ոչ մարդ:

Բարկանալ ու զայրանալ կամ լուռ հուզվելը անգամ
Մինուույնն է թե պայթել կամ փրփրել, բարեկամ:

Ով սկսի բարկանալ, խելքն ու միտքը կցրվի,
Տեսնվա՞ծ է երբևէ, որ գիժ կովից կաթ կթվի:

Լավ նայիր դու երեսին, տես վիճակը այս մարդու,
Չուռի ոչինչ մարդկային, գազան է մի աճարկու:

Գլխիվայր է շուռ տված ձայնն ու խոսքը, աչքն ու դեմք
Թէ մի մասնիկ խելք ուներ՝ այն էլ կորել է արդեն:

Խոսել, ասել չգիտի, մռնչում է, գոռգոռում,
Հաչում է ճիշտ շան նման, էշի նման զոռոում:

Հարբածներին դու նայիր՝ ընկած մարդու շնորհքից,
Արդարը նա՛ է միայն, ով չվել է աշխարհքից:

Այդպես գինով ու հարբած, տես ինչեր են երազում,
Հանդերձյալն էլ հիշելիս՝ դրախտ գնալ են ուզում:

Նա, ով կտրել կարենա իր կապերն այս աշխարհից,
Լոկ նա կարող է փրկել իր օձիքը վշտերից:

Ազատության մի տուր դու բամբասասեր քո լեզվին,
Որ աներծքը այս մարդկանց չծանրանա քո վզին:

Այն լեզուն, որ բամբասում, վատն է խոսում ամենքի,
Գտնվում է ծայրից ծայր մագիլներում փորձանքի:

Եթե մարդ ես դու ազնիվ, քո սխալը հասկացիր,
Այլոց գործած սխալով քո սխալը մի ծածկիր:

Ունեցվածքիդ, բարեկամ, երբեք հարամ չխառնես,
Որ մեր տերը վերևից քաղցր աչքով նայի քեզ:

Իսկ թե ինչքիդ երբևէ մի հարամ բան խառնվի,
Իմացիր, որ քեզանից այն կխլվի, կառնվի:

Հարամ ապրանքն է ուժեղ, եթե կցվի քո մալին,
Ամեն ինչդ կկորչի, վայը կգա քո հալին:

Հազիվ ճարես աշխարհում համեստ, պարզ ու խոնարհ մարդ,
Թեկուզ գնել կամենաս՝ հարյուր հազար ոսկով արդ:

90

(Թարգմանություն)

Ողջ լինեն, ինձ սիրողները ողջ լինեն,
Բոլոր սիրելիքն իմ թող մոռանան ինձ,
Բոլորի երեսներն էլ միշտ պարզ լինեն,
Համայն սիրելիքն իմ թող մոռանան ինձ:

Երբեմն զուր տեղը վազեցինք, մաև եկանք,
Խոսեցինք ում որ մեզ բարեկամ հասկացանք,
Այժմ բոլորից ձանձրացանք, կշտացանք,
Բոլոր սիրելիքն իմ թող մոռանան ինձ:

Երբեմն սիրեցինք, խնդացինք, բերկրեցանք,
Այժմ խոհերով ու ցավով լցվեցանք,
Լավ չապրեցինք, բայց առաջվանը դարձանք,
Համայն սիրելիքն իմ թող մոռանան ինձ:

Շատ տեսանք, տեսնվեցանք, սեր արինք,
Շատ կերանք, վայելեցինք, կյանք արինք,
Այժմ բոլորին մնաք բարյավ արինք,
Բոլոր սիրելիքն իմ թող մոռանան ինձ:

91

(Թարգմանություն)

Եղիր ազնիվ ու մի՛ դավիր,
Ոչ ոքի ցավ մի պատճառիր,
Եվ քո նավը՝ ապրանքով լի
Ողջ, ապահով տեղ կհասնի:

Կողոպտել ես դու քո գործում,
Խճճվել ես վատ կրակում,
Աստծու վախը դու միշտ ճիշիր
Ու քո գործը լավ իմացիր:

Ծտասլելով օրըդ կանցնի,
Հոգին մարմնից դուրս կթռչի,
Հույսդ դու դիր աստծու վրա,
Չարն ու բարին նա կջոկի:

Ականջ արա ու ինձ լսիր,
Հոգի-մարմին մի՛ կեղտոտիր,
Մեծ ու փոքր հանցանք չկա,
Փոքրն էլ քեզ գետնով կտա:

Արևը կանցնի, գիշեր կգա,
Չարսու շուկան տեղի կտա,
Պարզ է միտքը այս առածի,
Ով էլ լինի՝ այս կիմանա:

Բաց աչքերդ, ճամփադ ծանիր,
Աջն ու ձախը լավ որոշիր,
Եվ ջերմագին աղոթքիդ մեջ
Դու Պաղտասար ծառան հիշիր:

92

Ես ո՛չ եմ մըտաւոր և ո՛չ բանական,
Եւ ոչ թէ ըզմարդոյ ունիմ ըզսահման,
Անօգուտ և անպէտ, խոտան անպիտան,
Համայն սիրելիքս իմ թող մոռանան զիս:

Պատուելի, յարգելի ոչ եմ ընդաւին,
Անպատիւ և անարգ եմ ամենևին,
Ըստոյգ իբրու մեռեալ, անհոգի մարմին,
Բոլոր սիրելիքս իմ թող մոռանան զիս:

ՉԱՓԱԾՈ ՆԱՄԱԿԱՋԵՎԵՐ

1

Ի ՄՕՐԷՆ՝ ՈՐԴՒՈՑՆ ԲԱՐԵՒ

Դալար բարուճակ, ոսկի ըմպանակ,
Մեղրածոր փեթակ, հոգւոյս իմ կամակ,
Քաղցրիկ օշարակ, իմ ճար ու ճարակ,
Իմ մէկիկ զաւակ, իմ բարձր աշտարակ:

2

ԹՈՒԻՆ ԳՐԻԼ ԹԷ ՎԱՑԵԼ Է

Գովելի մարգարիտ իմ վայելչագեղ,
Եւ ակն լուսափայլ, գերազնիւ բիւրեղ,
Պարզ և յըստակ հայելի աննենգ ի սրտի,
Նորաբողբոջ վարդ պայծառ բացեալ ի թփի,
Եւ դեռաբոյս մորճիկ ի մէջ պարտիզի,
Խնծոր նորահասյծ, լուսին թերաբաց,
Բաժակ բերկրաբեր, ժառանգ ծերութեանս,
Տանս ճրագ լուսալիր, որդոյս իմ որդի,
Աչացս լոյս, ոսկեհատ թոռնեակ սիրելի:

3

ԱՒՐ ՍԻՐԵԼԻ ԲԱՐԵԿԱՄ ԵՒ ՀՄՈՒՏ ԳՐՈՑ

Բաղձալի, ըղձալի եղբայր իմ ընտրեալ,
Ի ճշմարիտ սիրոյն սիրով սիրեցեալ,
Զսիրոյն ընդպատակն ի քեզ հաւգուցեալ,
Եւ ի սէրն նորին սիրով կապակցեալ.
Ի բարեսէր բանէն՝ պատկեր նկարեալ,
Եւ իմաստից հոգւոյն՝ խորան յօրինեալ...
Ի ներքուստ մաքրզարդեալ և արտաքուստ գերափայլեալ,
Վարուք լուսափայլ և բարուք պայծառ:
Բազմաց տարփալի և իմ աննկալի,
Եղբայր անդրանիկ և անմիջոց սիրելի:

4

ԴԱՐՁԵԱԼ ՀՕՐ ԵՒ ՄՕՐ

Քրտնաշխատ իմ սիրական հօրս
Եւ քնքուշ սիրտ իմ անուշիկ մօրս:
Տանն մեր ամուր պարիսպ հօրս,
Եւ որդոց և թոռանց պէտ ընծող մօրս:
Եւ այսպիսի իմ ազնիւ պատուական
Եւ սիրական աչացս լոյս ծնողացս
Բա՛րև, շա՛տ բարև.
Հարցանեմ զձեզ ի բարիս և ի կամս աստուծոյ,
Թէ որպէս կեաք յայսմիկ դիժար ժամանակիս...

Ե

ՀԱՐԱՋԱՑ ԲԱՐԵԿԱՄՒ

Բարեկամ հարազատ և եղբայր սիրելի,
Սրտակից և հոգեկից, մտաց ըղձալի,
Աչաց բաղձալի եղբօրդ իմոյ հոգևորի՝
Հոգւոյս հատորի:
Բազում սիրով և կարի յոյժ կարօտով
Ողջոյն ընծայես Սարգիս ծառայս քո՝
Ի հեռուստ աստի իբրև ի յոյժ մօտոյ:

Զ

ՑԻՐԱՑՈՒ ԴՊՐԻ

Զարմանալի ոյորակօք իմաստուն ժամասաց,
Քաղցրաձայն երգնակ ի մէջ եկեղեցւոյ քաջահնչօղ
հոգերգու.
Խրոխտակ խօսնակ, հմուտ ամենայն խաղից և պարուկաց,
Հուսայից և բեմկորճաց և համեղ եղանակաց,
Տաղից և մեղեդեաց, գանձուց և շարականաց,
Եւ այլ հոգեւոր երգոց:
Եւ ընթերցօղ անվրդով գուրբ գիրս յեկեղեցւոջ,

Պայծառ տիրացու եղբօրդ իմ սիրելոյ.
Սիրատենչ կարօտիւ յօգնառատ ըղձիւ,
Բազում և յոյժ փափագանօք
Ընծայեմ ողջոյն սիրոյ՝
Ի ձեռն փոքրիկ տումսեկիս:
Եւ քո այս եղբայրս յետնեալ
Հարցանեմ զսիրազնէիդ իմոյ զորպիսութիւն
Թէ զո՞րպիսիս արդեօք ունիս զներկայութիւն՝
Ի յայսմ յոյժ յետնեալ և թշուառեալ ժամանակիս:

ԵՐԿՏՈՂՅԱԿՆԵՐ

ՔԱՌՅԱԿՆԵՐ

1

Քերթողահայր մեծն Մովսէս
Էր սերընդեամբ ի հայ ազգէս,
Յորմէ ուսաք մեք վարժապէս
Ըզքերթութեան ազնիվ հանդէս:

2

Պատմողական այսմիկ տաղիս,
Ականջադրուկ թէ եղիցիս,
Ղօղեալ գործոց մերոց տոհմիս,
Տեղեակ ոմանցն առ լինիցիս:

3

Դաւիթ Անյաղթ փիլիսոփայ,
Ծաղկեալ պսակ ցեղիս Հայկայ,
Աթենական ուսմամբըն ճոխ,
Կըղեալ զիմաստըն կուռ և կոխ:

4

Գիրք Սահմանաց մեծին Դաւթի,
Հանուրց գիտնոց յոյժ պիտանի,
Տըպեալ ՚ի մեր թըւականի,
Հազար հարիւր և ութսունի:

5

Ըզբան եռամեծին Դաւթի,
Թէ ամենայն չար տանջէլի,
Ոտիք չափեալ ըստ իւր ըղձի,
Ուրումըն այս բանասիրի։

6

Լեր իմաստուն կամ հետևօղ իմաստնոց,
Կալով ի բաց ի մարդակերպ անասնոց,
Զի գիտութիւնն է իմաստնոց ճառագայթ,
Տըգիտութիւնն՝ անիմաստից որոգայթ։

7

Գին Մաշտոցիս թէ տալ կամիս,
Սակաւ խընդրեմ, որ չընեղիս,
Զոր ինչ ի աղն գըրքես շահիս,
Զերկու տասնիւն մէկըն տուր յիս։

8

Հաւախումըն սահմանաց,
Հանգըստութիւն սերտողաց,
Նաև այլ ինչ պիտանի,
Թըւով՛ն իսկոյն գըտանի։

9

Եթէ ըղձանաս լինել տրամաբան,
Էր միշտ հետևող գիտնոցն վարժման.

Իմաստութեան տուր ըզսիրտ քոյ,
Բայց հանճարոյ միշտ փայլեցոյ:

10

Միտ դիր գրոց զոր ինչ ասեմ
Եւ խոկալով ի միտ առ,
Զի վայրաբար ոչ եմ գրել
Նոքիք մինչև ի մի տառ:

11

Պորփիւրոս բընախօս է Փիւնիկեցի,
Աշակերտ հմտագոյն Պղոտինոսի:

12

Այսքան վիճմունք Մելիտոսի,
Տրամաբանեալ ընդ Մովսէսի,
Զորս Մելիտոս հարցաբանէր,
Արիմ Մովսէս պատասխանէր:

13

Իմաստութիւն շինեաց իւր տուն,
Կանգնեաց ի նմա եոթ ընտիր սիւն

14

Քերականութիւնն է արմատ գիտութեան,
Ըստ այնմ, զի հիմն է ընթերցողութեան,
Քանոն խօսից, ուղղիչ բանից թիւրութեան
Եւ բանալի՝ մտից բառազննութեան:

15

Ո՛վ դու մանուկ թէ զայս արուեստ ուսանիս,
Եկեղեցւոջ իբր ըզծաղիկ բուսանիս:

16

Ըզխոնարհութիւն բայց թէ լաւ ճանաչես,
Ի յանդիսի քերթողացըն չամաչես:

17

Հանուրց անուանց ըզհոլովմունս,
Թէ զբսկսբունս, թէ ըզվերջունս,
Ուսիր անխոնջ աշխատեցմամբ,
Ըզհեղգութիւն միշտ ատեցմամբ:

18

Չի գըլխաւոր մասունք բանի են տոքին,
Անուն և բայք աշխատելիք երկոքին:

19

Վասն որոյ հին քերթողքն մեր հայկական,
Ըզբայն երկրորդ մասն ասցին յետ անուան:

20

Ի հիւսողէ սոյն գըրքոյս,
Խոսեալն և այս գա ի լոյս:

21

Ջանիւ հասցես առէ շնորհաց,
Մի ծոյլ կենայ և դեգերայ
Թէ զանձն քո տաս ի ճրգնաց,
Եղիցես յիմաստուն գերիմաց:

22

Ներել մաղթեմ աղերսարկեալ,
Որ ինչ իսմա սըխալ գըտեալ,
Ո՛չ գիտելոցն և ո՛չ տեսեալ,
Կամ ըստ հընոցն այնպէս թողեալ:

23

Այր կատարեալ և թշնամոյն բարի կամի,
Եւ ոչ թէ սոսկ իւր սիրական բարեկամի:

24

Թէ ղզջանաս ի մեղաց
Ոչ՛ հեռանաս ի շնորհաց:

25

Որոյ ձեռքն է յողորմութիւնս առատացան,
Հընձէ նա զայն որպէս մըշակ առատացան:

26

Որ ըզխրատ ծերոց գիտնոց անարգէ,
Նա քան զամէն անարգելիս անուրգ է:

27

Որ զինքըն մեծ թըւիցէ,
Եւ զընկեր իւր խըլիցէ,
Մինչ աստ ի անդ չըւիցէ,
Երթայք յինէն լըւիցէ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պաղտասար Դպիրի բանաստեղծությունների ներկա հրատարակության համար հիմք է հանդիսացել Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի 1958 թ. «Պաղտասար Դպիր» գիտական հրատարակությունը՝ արժանահիշատակ հայագետ Ա. Ծ. Մնացականյանի և Շ. Լ. Նազարյանի աշխատասիրությամբ:

Ներկա հրատարակության մեջ Պաղտասար Դպիրի բանաստեղծությունները լրացվում են ավելի քան 30 նոր միավորներով: Առաջին անգամ առանձին է ներկայացվում Պաղտասար Դպիրի երկտող և քառատող բանաստեղծությունների հատընտիրը և չափածո նամակաձևերը լրացումներով: 89, 90 և 91-րդ բարոյախրատական ոտանավորները քաղվել են Վենետիկի Մխիթարյան միաբանության 1844 ձեռագրից և տպագրվում են առաջին անգամ[1]:

1

Ջիս քո սիրոյն, ով նազելի, ոտվերս առեր կու մաղէ

Պաղտասար Դպիրի ժողովրդականացած երգերից մեկն է: Մեզ հասել է ձեռագիր ու տպագիր բազմաթիվ օրինակներով: Առաջին անգամ տպագրել է հեղինակը 1723 թվականին: Հետագայում, այլ երգերի հետ, տպագրվել է Ա. Տևկանցի «Հայ երգում» (1882 թ. էջ 81—82), Ա. Շոպանյանի «Հայ էջերում» (1912 թ. էջ 92), «Տեղեկագիր գիտու-

---

[1] Օգտվելով առիթից՝ կազմողը խորին երախտագիտություն է հայտնում Վենետիկի Մխիթարյան միաբանության ակադեմիական խորհրդին և բոլոր միաբաններին այն առանձնահատուկ, բոլորանվեր հոգատարության համար, որ ցուցաբերել են նրա նկատմամբ՝ Ս. Ղազարի Մատենադարանում կատարած աշխատանքների ընթացքում:

թաև և արվեստի ինստիտուտի» 1927 թ. 2-ում, (էջ 124—125), Մ. Մկրյանի «13—18-րդ դարի հայ աշխարհիկ գրականություն» ժողովածուում (1930 թ. էջ 278) և այլն: Մաշտոցի անվան Մատենադարանի 5292 ձեռագրում (այսուհետև կնշվի միայն ձեռագրի համարը) պահպանվում է ոմն Պետրոսի անունով: Տևկանցի օրինակում բնագիրը շեղվում է հեղինակայինից. հավանաբար այդ տպագրության համար հիմք է հանդիսացել անգիր եղանակով ասված մի օրինակ:

5

Վարանելով, վարանելով մոլար դեգերիմ, աւաղ

Այլաբանական հայրենասիրական երգ է: Բանաստեղծը «Վարդ» պատկերի տակ ի նկատի ունի հայրենիքը, և ինքը իբրև «խղճալի երգնեակ» (սոխակ) հայրենիքի կարոտն ու սերն է երգում: 18-րդ դարի անհատական բանաստեղծության մեջ հաճախ են օգտագործվում **սոխակ բանաստեղծ** և **վարդ-հայրենիք** պատկերները: Այս երգը ժողովրդի մեջ ընկալվել է նաև իբրև սիրո երգ: Մատենադարանի № 4426 ձեռագրում (էջ 79 ա) երգը կրում է «Տաղ սիրոյ է տիրացու Բաղտասարէ ասացեալ՝ դէր օլգում աքբետ թունեմ գազլէր գոյն է»:

11

Արի, իմ քաղցրիկ աղաւնի

1768 թ. տպագրված տաղարաններում երգը անխորագիր է, բայց ձեռագրերում գրիչները հայերեն և թուրքերեն խորագրերի տակ են առել՝ «Տաղ սիրոյ», «Տաղ ուրախութեան, սիրոյ և կարոտանաց», «Տաղ գեղեցիկ...» և այլն:

16

Ի ընդջմանէդ արքայական

Տների սկզբնատողերը կազմում են «Ի Պաղտէ», այսինքն ի Պաղտասարէ: Ժամանակագրական առումով մեզ հայտնի առաջին երգն է. գրվել է 1708 թվականին: «**Ի ռաճեակ սոյն թըւականիս**» նշում է հեղինա-

կը երգի վերջին տողում՝ այսինքն 20+1000+1+70+5+1+60=1157+ +551=1708։ Երգվում է մինչև այսօր։ Պահպանվում է երգի ձայնապնակը՝ Շարա Տալյանի կատարմամբ, հիշեցնում է Սայաթ-Նովայի «Դուն էն գլխէն իմաստուն իս» երգի եղանակը։ Տարակուսանքից վեր է, որ Սայաթ-Նովան ծանոթ է եղել Պաղտասար Դպիրի այդ երգին և նրել է նրա ազդեցությունը։ Թարգմանվել է ռուսերեն («Антология арм. поэзии» (1940, էջ 313)։ Պետրոս Ղափանցին՝«Առ ազգն իմ սիրելի» և այլ երգերում յուրովի օգտագործում է իր ավագ գրչակցի այս երգի համապատասխան մտքերն ու պատկերները։ Այս եղանակով նա բացահայտում է «ինընջմանէդ արքայական» երգի ազգային ոգին, այլաբանությանն հայրենասիրական բուն խորհուրդը։ Բանասերներից մեկը այն միտքն էր հայտնել, թե Պաղտասար Դպիրը այդ երգը հավանաբար գրել է կնոջ մահվան առթիվ։ Պետրոս Ղափանցին իր ազատասիրական երգերով փարատում է այդ կասկածը։

Կենսագրական այլ փաստերը ևս հաստատում են, որ Պաղտասար Դպիրի կինը կենդանի է եղել մինչև 1720 թվականը։ Նրանց Արսեն որդին ծնվել է 1715 թ., իսկ Անտոն որդին՝ 1720 թվականին (տես՝ Պաղտասար Դպիր, 1958, էջ 261)։

18

Իմ սիրելոյս իմմէ ի բաց ընկեցայ

Ունի «Ի Պաղ» ծայրակապը՝ Պաղտասարի կրճատված անունը։ Նույն սկզբնատողով է սկսվում նաև հաջորդ՝ 19-րդ տաղը, որն ունի չորս տուն և «Ի Պաղ» ծայրակապը։ Երկրորդ տնից փոխվում են երկու երգերի տողերն ու խոսքը, փաստորեն հեղինակը ստեղծել է միևնույն երգի երկու տարբերակ։

20

Բարկ արևդ ի շող ձեղուցէն

Տաղը հեղինակային տպագրության մեջ անխորագիր է։ № 7701 ձեռագրում (էջ 57 ա) կրում է «Տաղ ի վերայ բարեկամի» խորագիրը։

21

Բարի եկիր, ի՛մ պատուական սիրելի

Հեղինակի մոտ անխորագիր է։ № 7673 ձեռագրում (էջ 16 բ—17 ա) ունի «Տաղ ուրախութեան» խորագիրը։

24

Հրով սիրոյդ վառեալ գերիս

Ունի «Հուր» ծայրակապը։ Հեղինակի տպագրած տաղարաններից մեկում (1768, էջ 121) ունի նաև հորդորակ, այսինքն հորդորական կամ խրատական հետևակ խոսք, լրացուցիչ ձայն, ասելիք՝ հիմնական երգի.

ՀՈՐԴՈՐԱԿ

Ո՛չ հարսանեաց պարերգութեանցըն ըղձանօք,
Այլ փեսային մաքուր տեսլեանըն բաղձանօք,
Ի քէն այրի հոգիս մեղօք,
Յարակ այրի և այրի։

26

Սիրամարգիդ սիրովն եղէ սիրահա՛ր, սիրահա՛ր

Հեղինակի տպագիր տաղարաններից դուրս մնացած երգերից մեկն է։ Առաջին անգամ տպագրվել է Մատենադարանի հրատարակությամբ՝ 1958 թվականին։ Պողարյանի կազմած ձեռագրաց ցուցակի № 1896 ձեռագրի նկարագրության մեջ (էջ 129—133, 313) այս երգը հիշվում է հեղինակի անտիպ տաղերի շարքում։ Պաղտասար Դպիրը այն գրել է յոթանասունն անցած տարիքում.

«Տարիքն իմ զեոթանասուն անցեալ գրեցի»...

27

Պարուց թըռչնոց տուք աւետիս

Ունի «Պահար» ծայրակապը։ Պահար նշանակում է գարուն։ Երգվել է «Գարուն» կոչված երգի եղանակով։ № 7670 (էջ 36) ձեռագրում երգը կրում է «Տաղ գարնան ի գոյնս գարունին» խորագիրը։

29

Գարունն եկեալ, անուշ հովերըն հընչեցին

№ 7009 ձեռագրում (էջ 3բ) տաղը վերագրվել է ոմն Իգնատիոսի. «Տաղ Իգնատիոսէ ասացեալ ի վերայ պիլպիլի», մինչդեռ 18—20-րդ դարերում երգը բազմիցս տպագրվել է Պաղտասար Դպիրի անունով: Վարդի և սոխակի այլաբանական հայրենասիրական գեղեցիկ երգերից մեկն է։

35

Տիպ այնմ եղեր պայծառագոյն

Տների առաջին տողերի սկզբնատառերը կազմում են «Տիպ», այսինքն պատկեր: Գրված է խրթնաբանորեն, հատուկ նպատակով, գրաբարի մեջ հմտանալ ցանկացողների համար:

Հայտնի է, որ Պաղտասար Դպիրը ունի նաև խրթանաբանորեն գրված արձակ երկեր. դրանք զետեղված են «Օրինակ բարևագրաց» գըրքում:

39

Ո՛վ համայնից փափագելի

Նույն տողով է սկսվում նաև 23-րդ երգը, բայց տարբեր հարցեր են շոշափում... 23-րդը 1768 թ. տպագրված տաղարաններից մեկում հեղինակը վերնագրել է «Տաղ առ ճշմարիտ փափագելին», ուր փառաբանվում է ճշմարիտ, անկաշառ բարեկամությունը։ 39-րդ երգի ծայրակապն է «ոսկի», կրում է «Առ այն զոր գլխատառք ցուցին» խորագիրը և բացահայտում է ոսկու, դրամի ավերիչ դերը։ Նույն հարցին է վերաբերում նաև հաջորդ՝ 40-րդ երգը՝ «Առ մամոնայն»՝ այսինքն անարդար ճանապարհով ձեռք բերված հարստության, ունեցվածքի մասին։

43

Իմ աղիրաւ դատաւորըն քաղաքիս

Տաղը հեղինակային հրատարակությունների մեջ խորագիր չունի, Մատենադարանի № 8216 ձեռագրում (19-րդ դար, 244 ա) կրում է՝ «Ասացեալ ոտանաւորս խորհրդաւոր մեծագոյն իմաստնայիղձ քերթողի և հայոց ընդ Հոմերոսի և վարժապետաց պետ վարժապետի» ընդարձակ խորագիրը: Սա ապացույց է այն բանի, որ Պաղտասար Դպիրը լայն ճանաչում է ունեցել նաև 19-րդ դարում: Հայտնի է՝ Խ. Աբովյանին ճաշոթ են եղել Պաղտասար Դպիրի երգերը, նրա ձեռագրով արխիվում պահպանվում է Պաղտասար Դպիրի «Որ արիր զիս ի պատկեր» ընկերգբնատողով (սույն գրքի 50-րդ) երգի մի թերթի ընդօրինակությունը (տե՛ս Խ. Աբովյանի Երկերի լիակատար ժողովածուի առաջին հատոր, 1948, էջ 55):

44

Թըշնամիքն աճձինս, որք պատեցին զիս

Այս և նախորդ (43) բանաստեղծությունը հեղինակը անշուշտ գրել է իր դեմ հարուցված ծանր, անհիմն մեղադրանքների պատճառով, իր կրած տառապանքների օրերին, թերևս՝ թիապարտության մեջ:

58

Ի կենաց նախկին վայելմանց

Բանաստեղծության ներքին տրամաբանության ուժը պահպանելու նպատակով երգը ներկայացնում ենք կրճատումով:

59

Ի կարօտ լեալ ապօժանդակ

Ունի «Ի Պաղտասարէ» ծայրակապը: «Էր ներ թըւոյս լալ առակեալ» տողից պարզվում է, որ տաղը հորինված է 1709 թ.: «Լալ առակեալ»

այսինքն 30+1+30+1+1000+1+60+5+30=1558+551=1709: Խորթ-նաքանորեն հյուսված երկրորդ երգը հիշեցնում է «Տիպ այն եղեր պայ-ծառագոյն» (տես 35-րդ երգի ծանոթագրությունը)։

60

Ի մեծ տագնապի

Խրթնաքանորեն գրված երրորդ տաղն է՝ ավելի պարզ տաղաչա-փությամբ, նույն վերջնահանգով. թվում է, թե Պաղտասար Դպիրը հա-տուկ նպատակով տարբեր բառերի կամ բառամասնիկների միացությու-նից բարդ կապակցություններ է ստեղծել, որպեսզի գրաբարի մեջ խո-րացողները կարողանան հաղթահարել դժվարությունները։

70

Հըրով քո գերիս, ով դու գերապայծառ երանեալ

Երկրորդ բանաստեղծությունն է, ուր հեղինակը հիշեցնում է իր երաժիշտ, երգահան լինելու մասին։

77

Դաւիթ Անյաղթ փիլիսոփայ

Տների ծայրակապը ներկայացնում է «Դաւիթ»: Պաղտասար Դպիրը «Գիրք սահմանաց»-ում (Կ. Պոլիս, 1731 թ. էջ 319—321, 336—338 ներկայացնում է ոչ միայն Դավիթ Անհաղթին նվիրված բանաստեղծու-թյուններ, այլ նաև՝ Դավիթ Անհաղթի համառոտ կենսագրությունը, նրա շուրջը հյուսված ավանդական զրույցներ և այլն։ Պաղտասար Դպիրը ունի Դավիթ Անհաղթին նվիրված նաև մի քառյակ (տես քառյակների բաժինը։

78

Որք բնախօս բանիւ զեակքս ենթադրեցին

Դավիթ Անհաղթի «Հարն ոչ է անեղ» փիլիսոփայական տրակտատի բանաստեղծական մեկնությունն է: Պաղտասար Դպիրը այն գտնելել է «Գիրք սահմանաց Դաւթի Անյաղթ փիլիսոփայի և աստուածաբան վարդապետի» վերոհիշյալ գրքում (Պոլիս, 1731, էջ 339):

80

Առ անփոփոխ աստուածութիւն

Պաղտասար Դպիրի տաղերի ընդհանուր ցանկում (տե՛ս Մատենադարանի գիտ. հրատարակ. էջ 267) հիշվում է այս տաղը, բայց մեզ հայտնի տաղարաններում չենք հանդիպել: Այն քաղում ենք Նարեկացու «Մատեան ողբերգութեան» Պոլսի 1726 թ. հրատարակությունից: «Մատեանի» աղբյուրագիտական այդ բացառիկ հրատարակության համար մեծ ջանքեր է գործադրել նաև Պաղտասար Դպիրը: Գրքի առաջաբանը, որ կրում է «Նախերգաբար առ ջերմեռանդ ընթերցօղեդ» խորագիրը, ավարտվում է հենց այս բանաստեղծությամբ:

81

Մի մեծամիտ լինի, որդի Ադամայ (Ասացեալ ի Պաղտասար Դպրէ ի վերայ հպարտութեան):

Այս և սրան հաջորդող 82 և 83-րդ բանաստեղծությունները տպագրվում են առաջին անգամ: Պահպանվում են Վենետիկի Մխիթարյան միաբանության Մատենադարանում (ձեռ. № 1844, էջ 92—97):

84

Ի հողային նիւթոյ ոսկի մաքրական

Քաղում ենք Հովհաննես քահանա Մկրյանի — «Արևելք» ամսաթերթում (1889, 3 մայիսի) տպագրած «Ազգաբանութիւն Պատկանյան տոհմի» հոդվածից: Այս մասին մեզ տեղեկացրել է գրականագետ Մ. Սաղ-

յանը, որին հայտնում ենք մեր շնորհակալությունը)։ Հոդվածագիրը գրում է, որ Պաղտասար Դպիրը ժամանակակից էր հինգերորդ Տեր Գաբրիելին, նրա օգնությամբ ազատվում է թիապարտությունից և այդ առթիվ գրում է այս բանաստեղծությունը. «Զայս երգս կհորինէ Աստուածածնի՝ քաղելով ի բանից Նարեկացւոյ»։ Աստվածածնին նվիրված շատ երգեր ունի Պաղտասար Դպիրը. սակայն այս երգը, դատելով մեզ հասած քառատողից, ներքին տրամադրությամբ հատկանշում է Նարեկացու «Մատեանի» 80-րդ գլխի Աստվածածնին նվիրված ներբողին (տե՛ս Գրիգոր Նարեկացի, «Մատյան ողբերգության», թարգմանությունը Վազգեն Գևորգյանի, Երևան, 1979, էջ 481—485)։

85

Պարտաւորեալ գերիս խրղճալի

Այս և հաջորդ 86-րդ երգը՝ «Պայծառագոյն որդեակ իմ սիրուն»՝ թաղման ողբեր են, որոնք տպագրված են «Մաշտոց» ծիսարանում։ Հեղինակի տաղարաններում չկան։ Սույն ողբերը առաջին անգամ ուշադրության է արժանացրել հայագետ Մ. Պողարյանը։

87

Դիտողք արթունք

18-րդ դարի երկու նշանավոր գործիչներ Գևորգ վարդապետ Գափանցուն և Հակոբ Նալյանին նվիրված ներբող է։ Նալյանը երկար ժամանակ, մինչև իր մահը՝ 1764 թ., ղեկավարում էր Պոլսի պատրիարքարանը։ Վերջինս հայտնի է նաև իր գրական բազմատեսակ գործերով և մանավանդ՝ Նարեկացու «Մատեան ողբերգութեան» մեկնությամբ (տպագրված 1745 թ.)։

88

Ունի իբր քայիւրակ մի պատուական

Քայիւրակ նշանակում է թանկագին, ականակուռ զարդ պարանոցի։ Ռումելու պատրիարք Դանիել վարդապետի տապանագիրն է, մահացած 1747 թ.։ Տապանագիրը գրել է Պաղտասար Դպիրը։

89

Որտեղ կռիվ կտեսնես

Այս և հաջորդ 90, 91 և 92-րդ բանաստեղծությունները թարգմանված են թուրքերենից (տե՛ս Պաղտասար Դպիր, Երևան, 1968, էջ 171—173)։

93

Չափածո նամակաձևեր

Քաղված են «Բարևագրքի» 1752 թ. և «Օրինակք բարևագրաց նորապէս շարադրեցեալ»՝ 1787 թ. տպագրություններից։ Պաղտասար Դպիրը հաճախ գրում է արձակ և չափածո խառն նամակաձևեր։ Մենք ընտրել ենք միայն չափածո հատվածներից։ Իմ առաջադրած նամակաձևերը,— նկատում է հեղինակը.— նպատակ ունեն օգնելու նամակ գրողներին, սակայն նրանք չպետք է կաշկանդվեն այդ ձևերի մեջ, գրեն ազատ, ինչպես որ մտածում են... «Եւ աստ, ի վերջնում տետրակիս փոքու՝ ծանիր, սիրելի ընթերցող։ Զի որ եդաւ աստ այսքանիկ ինչ օրինակ բարևագրութեան, ոչ եթէ այն մտօքն եդեալ է՝ թէ միշտ այսպէս և միայն այսչափովս և ոչ աւելի կամ պակաս պարտիս գրել։ Այլ այսոքիկ որպէս վարժիչ և գաղափար տվաւ քեզ փոքր ինչ։ Որովք կարելի է քեզ կամ միայն զնոյն օրինակ գծագրել, կամ այլ աւելի ինչ երկարել. կամ՝ թէ իսկ կարճել. կամ՝ յոյժ համառօտ գրել» («Բարևագիրք» էջ 98)։

94

Երկտողյակներ և քառյակներ

Պաղտասար Դպիրը 18-րդ դարի առաջին բանաստեղծն է, որ թողել է ուշագրավ քառյակային ստեղծագործություն։ Դժբախտաբար դրանք ցրված են նրա տպագիր և ձեռագիր աշխատությունների էջերում։ Սույն գրքում ներկայացված փոքրիկ հավաքածոն արդեն իսկ գաղափար է տալիս նրա քառյակների բազմաբովանդակ նյութի և արվեստի մասին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Պաղտասար Դպիր 5

Ա. Սիրո, կարոտի, բնության երգեր

1. Ջիս, քո սիրոյն, ո՛վ նազելի... 18
2. Հերի՛ք ողբաս, գոչես, լաս և ճառաչես... 19
3. Արևս առնեմ, երթամ, ի՛մ սիրուն... 20
4. Իմ աննըման սիրելագոյն սիրելի... 21
5. Վարանելով, վարանելով... 22
6. Շատ սիրով քեզ բարև, իմ աչացս լոյս... 23
7. Ա՛յ իմ աչաց լոյս գովելի... 24
8. Ելի ի խընդրել ըզսէրն իմ... 26
9. Սիրովդ եղէ, սիրովդ էղէ... 27
10. Ի քոյդ սիրոյ գերիս... 28
11. Արի՛, ի՛մ քաղցրիկ աղաւնի... 29
12. Մէկ ազնըւի մի սէրըն կայ... 30
13. Դու իմ սրտին պայծառ արև... 31
14. Իմ արևակն, իմ արուսեակն... 32
15. Իմ աննման լոյժ գովելի... 33
16. Ի ընըջմանէդ արքայական... 34
17. Իմ ճեռաբնակ ճոգւոյս ճատոր... 35
18. Ի սիրելոյս իմմէ ի բաց ընկեցայ... 36
19. Ի սիրելոյ իմմէ ի բաց ընկեցայ (Դարձեալ իբր ի պիւպիւէն վասն վարդին երգեցեալ) 37
20. Բարկ արևդ ի շող ձեղուածէն... 38
21. Բարի եկիր, ի՛մ պատուական սիրելի... 39

22. Ո՛վ գերազնիւ գերըղձալի... 40
23. Ո՛վ համայնից փափագելի... 41
24. Հրով սիրոյդ վառեալ գերիս... 42
25. Սիրաճար, սիրաճար, սիրաճար... 43
26. Սիրամարգիդ սիրովն եղէ... (Ի Պաղտասար Դպրէ) . . 43
27. Պարուց թըռչնոց տո՛ւք աւետիս... (Տաղ գարնանն) . . 44
28. Ի կէտ գարնան եղանակին... (Դարձեալ գարնան) . . 45
29. Գարունն եկեալ, անուշ հովերըն հընչեցին... . . . 46
30. Սիրով սիրեցելոյդ... (Իբր ի պիւլպիւլէ առ վարդն ոլորեալ գուռնով 48
31. Գարուն, գարուն հասեալ էհաս (Տաղ ուրախութեան) . 49
32. Ի մերձիլ գարնան... (Դարձեալ տաղ ուրախութեան) . 50
33. Ահա՛ գարունն եկեալ էհաս... (Յորդորակ) 51
34. Ի դէմ քո, վարդ, քանի՞ լամ... (Իբր ի պիւլպիւլէն առ վարդն) 52
35. Տիպ այնմ եղեր պայծառագոյն (Գովասանութիւն սիրելւոյ խրթաբանորէն) 54

Խոհա-խրատական, բարոյա-փիլիսոփայական երգեր

36. Սի՛րտ իմ, ընդէ՞մ տըրտում եղեալ... (Տաղ զպատահմանց մերոյս բնութեան) 56
37. Ի կիսատ սիրելեաց, անհաւատարմաց 57
38. Ա՛նձն իմ, ընդէ՞ր հառաչմամբ... (Սփոփանք վշտացեալ հոգւոյ) 57
39. Ո՛վ համայնից փափագելի... (Առ այն, զոր գլխատառքդ ցուցանեն) 58
40. Ուստի՞ ծընար, ո՛վ բռնաւոր (Առ մամօնայն) . . . 59
41. Ի մէջ երկոքին ներհակաց անկեալ... 61
42. Որքան եմ կացեալ ի կենցաղս... (Տաղ զկենցաղոյս գանգատեալ) 62
43. Իմ անիրաւ դատաւորըն քաղաքիս 64
44. Թըշնամիքըն անձինն, որք պատեցին զիս... 64
45. Սիրոյդ կապեցալ... 66
46. Գերիս գերեալ գոռամ, գոչեմ... 67
47. Ի սկզբանէ հոգւոյս ոսոխն... 68
48. Ջարմանալով զարմացայ ես ի մըտի (Առ զգայութիւնս մեր և այլ մասունս) 69

49. Դիմեալ առ քեզ տաժանելիքս... 70
50. Որ արարեր զիս ի պատկեր... 71
51. Ի վերայ կարգապահն անառակ դասուց... (Առ Ամանիսն իմ) 72
52. Գերի եղկելի, ողբալի, ո՜ւ (Առ եղկութիւն հոգւոյս) . . 73
53. Ի կենաց նախկին վայելմանց... (Առ եղկութիւն անձիս իմոյ) 74
54. Անկեալ ի ձեռս աւազակաց... (Դարձեալ ի նոյն միտ) . 75
55. Իմ անյարմար արարքս, յորժամ ի միտ գան... (Առ վարուցս վատթարութիւն) 76
56. Իժըս եղեռնային, օձըս ժանտական... (Դարձեալ առ վարուցս վատութիւն) 77
57. Ի հարսանիս որդւոյ քոյին... (Զղջական ձայնիւ) . . . 78
58. Ի մամոնապատ գոլով գըբի... (Վէպ կրից հոգւոյս) . . 79
59. Ի կարօտ լեալ ապօժանդակ (Դարձեալ վէպ կրից եղկելի հոգւոյս) 80
60. Ի Մեծ տագնապի... (Դարձեալ ի նոյն միտ) . . . 81
61. Ի միտ բերեալ զիմ արարմունս... (Առ դատողութիւն խղճիս) 82
62. Լալով երգեմ երգ հառաչմամ... (Առ վատթար Ամանիսն իմ) 84
63. Պաղատելով կարդամ առ քեզ... (Առ մայրն ողորմութեամն) 85
64. Ի ցանկալեաց անցաւորես... (Ըստ խրատու կէրպիւ) . . 86
65. Աւեր քաղաք եղև անձն իմ... 87
66. Անձն իմ առ քեզ աղաղակէ... (Առ փրկիչն իմ) . . . 88
67. Ի խորխորատ տըղմի մեղաց... (Առ նոյն դարձեալ) . . 89
68. Փըրկաւէտ մաճուառ քոյ ըզգինս... (Առ փրկիչ իմ) . . 90
69. Ի քուն մեղաց յամառէցեալ... (Առ անձն իմ թշուառ) . . 91
70. Հըրով քո գերիս, ո՜վ դու գերապայծառ երանեալ (Առ վերինն Երուսաղէմ եկեղեցին Անդրանկաց) 92
71. Պատահեալով գերոյս... Վասն կրից հոգւոյս) 93
72. Հայրապետ հայոց... (Առ սուրբն Գրիգոր Լուսաւորիչն) . 94
73. Երանելի հովիւ ընտրեալ... (Առ նոյն դարձեալ) . . . 95
74. Հայոց պարծանք Արարատեան (Առ սուրբն Էջմիածին) . 96
75. Ո՜վ ճեղեղոց մխիթարիչ... (Առ գինին) 98
76. Ո՜վ դու մանուկ դեռահասակ... 98
77. Դաւիթ Անյաղթ փիլիսոփայ 100
78. Որք բընախօս բանիւ... (Ամենայն շատ տանջելի) . . 101

79. Ո՛վ միութիւն զարմանալի... (Առ միութիւնն) . . . 103
80. Առ անփոփոխ աստուածութիւն... (Աղերս առ սուրբ Հոգին Աստուած) 104
81. Մի՛ մեծամիտ լինիր, որդի՛ Ադամայ... (Ասացեալ ի Պաղտասար Դպրէ ի վերայ հպարտութեան) 105
82. Նախանձոտին Հոգին խաղձի ի ներքուստ... (Նորին Պաղտասարի վասն նախանձուն ի գրոց հաւաքեալ բանիցս) . 109
83. Ծուլութիւնն է ձանձրացուցիչ ի բարիս (Նորին Պաղտասարի ի վերայ ծուլութեան) 110
84. Ի հողային նիւթոյս ոսկի մաքրական (ըստ Նարեկացու) . 114

Այլ և այլ երգեր

85. Պարտաւորեալ գերիս խըղճալի... (Պաղտասար Դպրի է ողբս) 115
86. Պայծառագոյն որդեակ իմ սիրուն (Նորին ասացեալ ի վերայ մանկանց) 118
87. Դիտողք արթուն... (Առ երկոքին համաջան ամոլքն այժմուս) 120
88. Ունի իբր քայիւրակ... (Տապանագիր Դանիէլ վարդապետի) 122
89. Որտեղ կոխվ կտեսնես... 123
90. Ողջ լինեն, ինձ սիրողները... 125
91. Եղիր ազնիվ ու մի՛ դավիր... 126
92. Ես ո՛չ եմ մըտաւոր և ո՛չ բանական... 127
93. Չափածո նամականներ (յոթ օրինակ) 128
94. Երկտողականներ և քառյականներ (27 միավոր) . . . 132
Ծանոթագրություններ 138

---

1 Ծանկում նշված են երգերի սկզբնատողերը, իսկ փակագծի մեջ՝ խորագրերը: Մատենադարանի 1958 թ. «Պաղտասար Դպիր» գիտական հրատարակությունից դուրս են մնացել՝ 52—58, 60—64, 66—69, 72—74, 78, 80—81, 89—92 բանաստեղծությունները, ինչպես նաև մի շարք երկտողյակներ, քառյակներ և նամականի բանաստեղծություններ: Հայատառ թուրքերեն տաղերից ներկայացվում են երեք նմուշ՝ թարգմանաբար: Թարգմանությունը կատարել է մատենագետ Օնիկ Եգանյանը:

Որոշ փոփոխություններ են կատարվել բանաստեղծությունների ներքին դասավորության մեջ:

«Հայ քնարերգություն» մատենաշար
Պաղտասար Դպիր
ՏԱՂԻԿՆԵՐ

Пахтасар Дпир
СТИХОТВОРЕНИЯ
(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван, 1985

Խմբագիր՝ Ռ. Գ. Սարգսյան
Նկարիչ՝ Ն. Հ. Հակոբյան
Գեղ. խմբագիր՝ Գ. Խ. Գյուլամիրյան
Տեխ. խմբագիր՝ Մ. Է. Ճանճապանյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ջ. Վ. Բարսեղյան

ИБ—4534
Հանձնված է շարվածքի 19.04.85: Ստորագրված է տպագրության 15.02.85: Ֆորմատ՝ 70×108 1/32: Թուղթ՝ տպագր. № 1: Տառատեսա «Նորք»: Տպագրությունը բարձր: 6,65 պայմ. տպ. մամ. 10,57 պայ. հաշվ.-հրատ. մամ.: Տպաքանակ՝ 20000: Պատվեր՝ 102 Գինը՝ 75 կոպ.:
«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:
Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.
ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91:
Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-ул. Теряна, 91.

99456

• ภาษาอังกฤษ •